

613  
4-13

Ա. Ա. Խ. Հ. Ա. Ռ. Ջ. Կ. Մ. Ո. Տ  
ՍՈՒՐԵԱԿԱՆ ԿՈՒՑՈՒԹՅՈՒՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏՈՒՆ

ՎԱՂ ՀԱՍԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ  
ԱՌՈՂԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ



613  
4-13

ԱԶԵՐՆԵՇԻ  
Մասսայական-գրականության բաժին  
Բազմ. — 1936

Ա. Ս. Խ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏ  
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԱԽ

Հ Արմ.  
3-4257 ա

613

Հ-19 ՎԱՂ ՀԱՍՏԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ  
ԱՌՈՂՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՌՈԴՏ ԶԵՐՆԱՐԿ ԾՆՈԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կ Ա Զ Մ Ե Ց Ի Ն

ԲԺԵՂԱՆԵՐ՝ Ն. Ֆ. Ալաղառուղեն, Ա. Գ. Զլատկովսկայա, ՅԵ. Ի. Սաֆոնովա,  
մանկաբան Ն. Ռ. Եյգես, բույր-հրահանգիչ ՅԵ. Ե. Յոսլիկ

ԽԺԲԱԳՐՈՎԹՅԱԺԲ  
Ն. Ֆ. ԱԼՏԳԱՌԻԶԵՆԻ

26 նկարով



ԽԽԲ. № 15500

Ա Զ Ե Ր Ն Ե Շ Ր  
Մասսայական դրականության բաժին:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Վաղ հասակի յերեխաների առողջաբանությունը՝ և դաստիարակությունը՝ գրքույկը կազմել են մի շտրք հեղինակներ՝ մայրության և մանկության պաշտպանության ինստիտուտի մասնագետներ՝ նա մայրերի համար պիտի լինի յերեխաների խնամքի և դաստիարակության ձեռնարկ։ Գրքույկում մատչելի կերպով շարդրված ե մանկան դաստիարակության նշանակությունը՝ նրա ծնվելու առաջին որից մինչև Յ տարեկանը և հատուկ ուշադրություն ե դարձված մանուկներին մանկական հիմնարկներում և տանը դաստիարակության կապակցման վրա։



40566-67

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առողջաբանությունը մի գիտություն ե այն մասին, թե ինչպես պիտի կազմակերպել մարդու կյանքը, վրապեսզի նա առողջ լինի։ Ով ուզում ե առողջ կյանք վարել, պետք ե իմանա, թե ինչպես ե կառուցված մարդու որգանիզմը, իմանա իր մարմինը ինամենու կառուցման միջնական մասնակությունը՝ նրա ծնվելու առաջին որից մինչև Յ տարեկանը և հատուկ ուշադրություն ե դարձված մանուկներին մանկական հիմնարկներում և տանը դաստիարակության կապակցման վրա։

Առողջաբանության կանոնների համաձայն ճիշտ կազմակերպել յուրաքանչյուր առանձին մարդու կյանքը կարելի յե միայն այնտեղ, վորտեղ հասարակական առողջաբանությունը կանոնած ե մեծ բարձրության վրա։ Խորհրդային միությունում շատ մեծ ուշադրություն ե դարձված հասարակական առողջաբանության վրա, այսինքն կյանքը առողջաբանության կանոններով կազմակերպելու վրա։

Կուսակցությունը և կառավարությունը շատ մեծ ուշադրություն են դարձնում քաղաքների սոցիալիստական վերակառուցման գործին, նոր ֆարբեկների ու գործարանների կառուցմանը և նների վերակառուցմանը՝ գիտության ու տեխնիկայի բոլոր կանոններով։

Բնակարանային նոր շինարարությունը պլանավորվում և կատարվում ե առողջաբանության բոլոր կանոններով։ Նոր տները, ֆաբրիկներն ու գործարանները կառուցվում են այնպես, վոր աշխատավորները նրանցում ստանան շատ ոգ և արեկի լույս։

Բնակչության առողջացման գործում մեծ գեր ե խաղում քաղաքների կանաչազարդումը։ Մեր Միության բոլոր քաղաքներում տընկում են այգիներ, բուլվարներ, ծավալիքում են պարկեր։ Պակաս ուշադրություն չի դրածիվում հասարակական մննդի առողջաբանության հարցին։ Ավելի ու ավելի ծավալիքում են խոշոր ճաշարաններն ու ֆաբրիկ-խոհանոցները, վորոնք գտնվում են մշտական սանիտարական հսկողության տակ։

Ֆիզկուլտուրան, սպորտը, հանգստյան տները և այլն—այս ամենը տանում են դեպի այն առողջաբանական պայմանների անշեղ բարձրացումը, վորոնց մեջ ապրում և աշխատում ե մեր Միության աշխատավոր բնակչությունը։

Հասարակական առողջաբանության մեջ ե մտնում նաև մանկական հիմնարկների առողջաբանությունը։ Կուսակցությունը և կառավարությունը շատ մեծ հոգատարությամբ են շրջապատում յերեխաներին։ «Մենք պետք ե դաստիարակենք առողջ, կենսուրախ, խորհրդային յերկը հզորությունը բարձրացնելու ընդունակ բանվորների

սերունդ, — ասել ե ընկ. Ստալինը: Հիմնարկները՝ մանկամսությունները, մանկապարտեզները, դպրոցները գտնվում են մասնագետ բժիշխների մշտական հսկողության տակ. այդ բժիշխներից յուրաքանչյուրն ամենից առաջ պիտի լինի բժիշկ—առողջաբան:

Առողջաբանությունը հիմնական միջոցն ե վարակիչ հիմնգությունների դեմ կովելու համար. առուբերկուլոցը, մալարիան, հոդացավը, թոքերի բորբոքումը, փորլուծությունը, կաշու հիմնգությունները, քութեշը, դիֆտիրիտը և շատ ուրիշ հիմնադություններ շատ չեն գարգանում այստեղ, ուր կյանքը կազմակերպված ե առողջաբանության կանոնների համաձայն:

Ֆիզիկական և մտավոր աշխատանքը ավելի արտադրողական և գանում այստեղ, վորտեղ նա ընթանում ե առողջաբանական պայմաններում:

Դրա համար ել միանգամայն անհրաժեշտ ե, վոր առողջաբանական տեղեկությունները տարածվեն բնակչության լայն մասաների մեջ և վոր յուրաքանչյուրը պաշտպանի ու կատարի առողջաբանության այն բոլոր պահանջները վորոնք անհրաժեշտ են հասարակական առողջաբանությունը բարձր մակարդակի վրա պահելու համար. Այսպես որինակ, ողի մաքրություն պահպանել գործարանում, ցեխում, ակումբում, բնակարանում արտաքնօցում, վագոնում և այլն:

Անձնական առողջությունը—դա առողջաբանության այն մասն ե, վոր վերաբերում ե առանձին մարդուն, այն պայմաններն ու սովորությունները, վորոնք նպաստում են յուրաքանչյուր առանձին մարդու առողջության պահպանմանը և ոզնում են ամբողջ որգանիզմի կանոնավոր զարգացմանը: Որինակ առաջարկահական պահանջ կարող ե ծառայել սպիտակեղենը փոխելը, վորոշ ժամանակից հետո բաղնիքնալը, առողջաբար կերակով սնվելը, ի չարք չգործադրել վորիլց խմիչքները, ապրել մարզում շենքում, մաքրել ատամները և այլն: Անձնական առողջության պահանջների կատարումը կախված է յուրաքանչյուր մարդուց:

Առանձնապես անհրաժեշտ ե անձնական առողջաբանությունը կիրառել վաղ հասակի յերեխաների վերաբերմամբ: Փոքր յերեխաների կյանքն ամբողջովին կախված է շրջապատողներից: Ցեթե յերեխաներին դաստիրակում են առողջաբանության կանոններով, յերեխաները քիչ են հիմնադանում և փորհարինքով, և անգիտական հիմնադությամբ, և վարակիչ այլ հիմնադություններով: Այն հիմնադությունները, վորոնցով յերեխաները հիմնադանում են վաղ հասակում, հաճախ իրենց հետքերն են թողնում յերեխայի ամբողջ կյանքի վրա:

Դա վերաբերում ե և յերեխաների հասարակական դաստիրաբակությանը մանկական հիմնարկներում (մանկամսուր, մանկատուն, մանկապատեղ), և յերեխաների տանը մալուն: Մանկական հիմնարկների կազմակերպիչներն ու ղեկավարները ծնողների հետ միասին՝ պետք ե կազմակերպեն յերեխաների կյանքը, առողջաբանության բոլոր կանոններով:

Առանձնապես պիտի հիշել, վոր յուրաքանչյուր յերեխայի կատարյալ առողջության համար՝ պետք ե կարողանալ կանոնավոր վարդել նրան: Հեթե առողջաբանական կանոնները պահպանելով մենք կանխում

ենք հիմնդությունները՝ ապա կանոնավոր դաստիրաբակելով յերեխանը յին, մենք կանխում ենք նյարդայնության, յերեխայի վարքի անկայունության պարզացումը:

Վաղ հասակի յերեխաների դաստիրաբակությանը վերաբերող հատուկ գիտելիքներ ձեռք բերելու համար, մայրը պետք ե հաճախի մանկական կոնսուլտացիան, մայրության և մանկության պաշտպանության հատուկ ցուցահանդեսները, որինակ՝ Մուկվայում—Մայրության և մանկության պաշտպանության ինստիտուտի ցուցահանդեսը (Սոլյանկա, 14), Մայրության և մանկության պաշտպանության ցուցահանդեսը—Մարդաբային Մուզեյ (Կրոսլուակինկայա, 20): Այստեղ կարելի յել լուսանկարներով և պատկերներով ծանօթանալ դաստիրաբակության առողջաբանության հետ, կարդալ դաստիրաբակության անհրաժեշտ կանոնները: Վաղ հասակի յերեխայի գարգացման ու դաստիրաբակության հարցերի մասին խորհուրդ իմանալու համար պետք ե դիմել բժշկին և մանկավարժին՝ վաղ հասակի յերեխաների կոնսուլտացիայում կամ կանաց կոնսուլտացիայում, կոնսուլտացիայի բժշկի ու մանկավարժի ցուցմունքով՝ կարգալ գրքույներ վաղ հասակի յերեխաների դաստիրաբակության մասին: Միայն այն ժամանակ կարելի յե առողջ և ամրակազմ յերեխա ամեցնել, յեթե նրան դաստիրաբակենք առողջաբանության բոլոր կանոններով: Միայն առողջաբանությունն ե պաշտապանում նրան շատ վտանգներից՝ վարակիչ հիմնդություններից:

Յերեխայի առողջաբանությունը պիտի գիտենան վոչ միայն նրանք, վորոնց յերեխաները դաստիրաբակում են տանը, այլև նրանք, վորոնց յերեխաները մանկամսուրներում են: Մանկամսուրներում յերեխան մարդության մեջ ե, այստեղ նրան դաստիրաբակում են առողջաբառներու կանոններով: Յեթե մայրը յերեխային մանկամսուրից տունքերի և տանը կեղա ու անկարգություն լինի, ապա յերեխան կիմկանդանա: Մանկամսուրում յերեխային կանոնավոր կերակրում են, իսկ յեթե տանը մայրը յերեխայի մարսողությունը փչացնի անհամապատասխան և անժամանակ կերակրվելով, յերեխան փորլուծիւն:

Մայրը յերեխային մանկամսուրից տունքերով պետք ե խստիվ կիրափի առողջաբանական կանոնները:

Յուրաքանչյուր մայր տեղեկանալով առողջաբանության կանոններին, պետք ե խնամքով կատարի այն:

Մոր և յերեխայի առողջությունը պահպանելու հիմնարկներից մեկը—դա հղի կողջ առողջությանը կանոնավոր հետեւյն և կիմկոնսուլտացիայում և ծննդաբերության կանոնավոր կատարումը: Ծննդաբերության անհերում:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը ցարական Ռուսաստանում հղի կողջ նկատմամբ հոգատարություն չի յեղել, ծնունդների մեծ մասը կատարվել ե հակառակապահանաւկան պայմաններում՝ առանց բժշկական ոզնության, տատմերների մասնակցությամբ, վորոնք արգել լինելով վարակում եյին կանանց: Ծննդաբերությունը շատ բարձր ե յեղել:

ԽՍՀՄ ում հղի կինը շրջապատված է արտասովոր հոգատարությամբ, հղիությունն անցնում է ուշադիր հսկողությամբ կինկոնսուլտացիայում: Կինկոնսուլտացիան հետևում է հղիության կանոնավոր

ընթացքին. հղիության անկանոն ընթացքի ժամանակ կինը կանխավոռվարկվում ե ծննդաբերական տունը՝ հղիների պալատը՝ հատուկ ողության համար: Կանայք այժմ ծնում են հիմանալի կազմակերպված ծննդյան աներում, ուստի և ծննդաբերությունից հետո հիվանդացումն ու կանանց և յերեխաների մահացումը զգալիորեն պակասել ե:

Մինչև ծննդաբերությունը աշխատավարձի պահպանումով տրվող արձակուրդը կնոջը հնարավորություն և տալիս հանգիստ կերպով հասունացնելու արգանդի մանկանը, և մանուկը ծնվում ե ամրակազմով կենսունակի:

Ծննդաբերությունից հետո աշխատավարձի պահպանումով տրվող արձակուրդը կնոջը հնարավորություն և տալիս նորածնին ամենալավ կերպով խնամելու՝ նրա կյանքի ամենավաղ շրջանում:

Հիվանդ յերեխային կոնսուլտացիայում ամենալայն ոգնություն և հասցվում: Յեթե անհրաժեշտ է, վոր մայրը խնամի հիվանդ յերեխային, բժիշկը սորը գործից ազատելու թուղթ և տալիս:

Յեթե յերեխային չի կարելի բժշկել կոնսուլտացիայում վոտքի վրա, նրան ոգնություն են հասցնում բժիշկն ու քույրը տանը: Հիվանդանոցում տեղավորելը նույնպես կոնսուլտացիայի պարտականությունն է:

Կոնսուլտացիան կազմակերպում ե առողջարար հրապարակներ թուլացած յերեխաների համար: Նա հոգում ե նաև, վոր ամեն մի յերեխա կարողանա յերկարատե ոգտվել թարմ ողից առանց մեծ նեղություն պատճառելու մորը, և կազմակերպում ե զբոսանքի խմբակներ ու հրապարակներ: Վերջապես՝ խրոնիկական հիվանդ յերեխաները կոնսուլտացիայի միջոցով բժշկվելու համար տեղավորվում են սանատորիայում:

Այդպիսով տեսնում ենք, վոր հղի կնոջ, մոր և նրա յերեխայի կյանքը շրջապատված ե հոգատարությամբ: Հարկավոր և միայն, վոր իրենք՝ ծնողները կանոնավոր մոտենան յերեխաների գաստիարակության գործին:

Մանկամսուրում յերեխային ընդունում են յերկու ամսական հասակից, մինչև այդ նա զտնվում և կոնսուլտացիայի հսկողության տակ:

Մանկամսուր չհաճախող բոլոր յերեխաները մինչեւ 3—4 տարեկան հասակը պետք ե նշանակված ժամերին այցելեն կոնսուլտացիաները: Այն մայրերը, վորոնք առողջ յերեխայով կանոնավոր հաճախում են կոնսուլտացիաները և կատարում են առողջարանության բոլոր կանոնները, նրանց յերեխաներն ավելի առողջ են վիճում, հիվանդանութիւն ավելի լավ են տանում հիվանդությունները, քան թե նրանք, վորոնք անկանոն են հաճախում կոնսուլտացիան և չեն կատարում առողջարանության կանոնները: Այսպես ուրեմն՝ մայրը պետք ե կանոնավոր կերպով իր յերեխային ցույց տա կոնսուլտացիայում, իսկ հի լանգության հենց առաջին նշանները յերեխալուն պես՝ դիմի բժշկին: Կոնսուլտացիան զբաղվում է պրոֆիլակտիկայով, այսինքն հիվանդությունները կանխելով, և բժշկում ե յերեխային, յեթե նա հիվանդացել ե:

Կոնսուլտացիայում մանկավարժը բացատրում է, թե ինչպես պիտի գաստիարակել յերեխային վաղ հասա կից: Սովորաբար գաստիա-

րակության մասին քիչ են մտածում և վատ են դաստիարակում, — յերեխաներն աճում են քմահաճ, յերես տված կամ ընդհակառակը, վախեցրած: Կոնսուլտացիայի մանկավարժի ընդունելությանը կանոնավոր հաճախելը պարտադիր ե:

Յեթե յերեխաների կամ կանանց կոնսուլտացիայում մայրերի համար կազմակերպում են դասընթացներ, ապա յուրաքանչյուր կին պիտի հաճախսի այդ դասընթացները, այնտեղ մայրը կսովորի, թե ինչպես դաստիարակել առողջ ու ամրակազմ յերեխա: «Մենք պետք ե դաստիարակենք առողջ սերունդ, առողջ յերիտասարդություն: Հենց նա, այդ յերիտասարդությունը պիտի վերջացնի, ավարտի կոմունիկմի գործը, նա պիտի մարտեր մղի կոմունիկմի համար, և նա այդ մարտերին պիտի հանդիպի ամրակազմ, առողջ, պողպատե ջղերով ու յերկաթե մկաններով»: — ասել ե ԼԵՆԻՆԸ:

Բայց Յ տարեկանում յերեխան դեռ շատ հեռու յե հասունություն է:

Մանկության յերկարատևությունը, յերեխայի անողնական դրության յերկարատևությունը պահանջում է, վոր նա այդ ամբողջ ժամանակի ընթացքում զրված լինի լավ հոգատարության պայմաններում և մեծ ուշադրության ներքո: Այս ժամանակ յերեխան կաձի, կամ բապնդվի, կհասունանա և կզարդացնի իր ընդունակություններն ու ձիքերը:

Յեթի յերեխան ծնվել ե բարենպաստ կերպով, առողջ ծնողներից, ապա ծնվելու մոմենտից նրա զարգացումը կատարվում է անընդհատ: Վորպեսզի նրա զարգացման բարդ ուղին անցնի ամենանպաստավոր պայմաններում, նրա համար ավելի քիչ ցնցումներով, պիտք ե յերեխային շրջապատղուներն իմանան յերեխայի պահանջները: Այդ պահանջներին համապատասխան անհրաժեշտ ե ստեղծել վորոշ պայմաններ, փոփոխել, վերացնել միջավայրի աննպաստ պայմանները՝ յերեխայի ավելի լավ զարգացման շահերից յելնելով, նրա զարգացման շեղումների դեպքում նրան ժամանակին ոգնություն հասցնել:

Յերեխան ծնվելով մոր արգանդից անցնում է արտաքին միջավայրը: Նրա համար կյանքի պայմանները միանդամենք խիստ փոխվում են:

Մոր որդանիզմում նա զտնվում է համաշխափ, համեմատաբար բարձր ջերմաստիճանում: արտաքին միջավայրում ջերմաստիճանը շատ ավելի ցածր է և մեծ տատանումներ ե անում: Մինչև ծնվելը նա սնվել է մոր հյութերով, ալֆմ ինքը պիտի վորոշ ջանքեր անի կերակուր ստանալու համար: Մինչև ծնվելը նա չի շնչել, նրա թոքերը կուչ յեկած դրության մեջ են յեղել, այժմ նրա թոքերը պետք ե ուղղվեն, լայնանան, նա պետք ե ինքնուրուցն շնչի: Հենց ինքը՝ ծընվելու մոմենտը՝ ծննդյան նեղ ուղիներով անցնելը՝ կապված ե յերեխայի համար մի ամբողջ շարք վտանգների հետ:

Ուղղի յերեխան աշխարհ զալով բարձրածայն ճշում է: Ողն առաջին անգամ մտնում ե նրա թոքերը, յերեխան դարձյալ ու դարձյալ ճշում է, այդ ժամանակ թոքերն ավելի լավ են ուղղվում և նա ավելի խորն ե շնչում: Յուրաքանչյուր մայր պետք ե ուրախանա և վողջումի այդ ճիշը՝ վորպես յերեխայի կանոնավոր զարգացման նշան:

Յեթի յերեխան ծնվելիս վորեն պատճառի հետակենքով չի շնչում ու չի ճշում, բժիշկները բոլոր միջոցները ձեռք են առնում, վոր նա ճշա: Նրան չըմփացնում են, մերթ տաք, մերթ ցուրտ ջրի մեջ են կոխում, վորպեսզի մաշկի զրգումից՝ յերեխան ճշա: և բժիշկը չի թողնում յերեխային, մինչև վոր չիսի նրա ճիշը:

Ծնվելուց անմիջապես հետո մանկաբարձուհին և բժիշկն ուշադրությամբ զննում են յերեխային: Նրանք պետք ե վորոշեն, թե, արդյոք, յերեխան աշխարհ ե յեկել կանոնավոր ձեւավորված, թե վորեն ե պակասություն ունի: Դա շատ կարենոր ե, վորովհետև մի քանի պակասությունների գեպքում անհրաժեշտ ե անհապաղ ոգնություն, իսկ վորոշ գեպքում ել հաղորդել յերեխայի աղջականներին, վորպեսզի ծնողները յերեխային կերպելիս և դաստիարակելիս տանն ել համապատասխան միջոցներ ձեռք առնեն:

Միջին յերեխան ծնվելիս կշռում է 3000—3200 գրամ ( $\frac{7}{2}$ / $\frac{8}{2}$  գրա-

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

# ԻՆՉՊԵՍ Ե ԱՇՈՒՄ ՅԵՎ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՅԵՐԵԽԱՆ

## 1. ՆՈՐԱՆԻՆ ՅԵՐԵԽԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱՆԱՑՏԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԸ

Վաղ մանկությունը—դա համեն միշտ կենդանի եյակի ամենատառադնական դրության ժամանակն է: Մատաղահաս, չամրապնդված, կանոնավոր խնամքից ու հոգատարությունից զուրկ որգանիզմը՝ կորուսի յի մատնված, և վատ խնմաքի դեպքում՝ քիչ յերեխաներ են ապրում:

Բնության մեջ կենդանի եյակները հասունանում են տարբեր ժամկետներում: Ամենապարզ որգանիզմները վորոնք կազմված են միայն մի քաջից, արդեն իրենց գոյության մի ժամկից հետո ընդունակ են բաղմանալու և հասունացած են: Ավելի բարդ որգանիզմը պահանջում է ավելի յերկար ժամանակ, և փորբան բարդ է որգանիզմը, այնքան ավելի յերկարատ ժամանակ ե պահանջում կանոնավոր խնամք և հոգատար հսկողություն ունենալու: Վոչ մի կենդանի այնքան յերկարատ մանկություն չունի ինչպես մարդը:

Զվից հենց նոր դուրս յեկած ճուտը վոտքի յի կանգնում, վազվը զուռ և, կերակուրը կտցահարում, պաշտպանվում ե իր վրա հարձակվող պարագիտներից, քրուռ և իրեն կտուցով, թաթիկներով: 6—7 ամսում ճուտն արդեն հասունացած հավ է դառնում և ճուռ: Ճամփանակ համար մի կենդանի այնքան յերկարատ մանկություն մարդական մարդում:

Քուրակը, հորթը՝ ծնվելուց հետո հենց նոր չորացած, վոտքի յեն կանգնում է քայլում: Մի տարեկան կենդանին արդեն անցած է համարում մանկությունը: Մոտ 3 տարեկան լավ մեծացրած հորթը, կարող է արդեն ինքը հորթ բերել: Այսպես չի մարդը: Նրա մանկության շրջանը շարունակվում է անհամեմատ ավելի, և հասուն ենք համար ել նա ավելի դանդաղ և զարգանում:

Արդեն 3 տարեկան յերեխան ավելի յի զարգացած, քան թե ամենախելոք կենդանին, մինչեւ իսկ մարդուն ամենամոտ յեղած կենդանին՝ հասունացած կապիկը:

վաճառքա): Տղաներն աղջիկներից մի քիչ ծանր են լինում: Պատահում է 4000 գրամ կշիռ ունեցող յերեխա, լինում են և հսկա—յերեխաներ 5000 գրամանոց, ավելի մեծ կշիռ ունեցող յերեխաներ սակալ են լինում: Մեծ կշիռը գեռ նշան չե յերեխայի առողջության: Զափազանց փոքր կշիռը—2500—2600 գրամ—շատ դեպքում նշան ե ժամանակից առաջ ծնվելուն:

Նորածնի մարմինը ոծված ե հատուկ ոծանյութով, վորը յերեխայի մաշկը մոր արգանդում պահպանում ե զավակատան հեղուկի աղդեցությունից: Ծննդից անմիջապես հետո յերեխայի մաշկը վառկարմրի գույն ունի, հարուստ ե արյունատար անոթներով, վորոնց մեջ շատ արյուն կա: Նորածնի մաշկը պատած ե աղվամազով, բարակ ե, նուրբ, հեշտությամբ կարելի յե վիրավորել, նրա մեջ հեշտությամբ կարող են միկրոբները մտնել: Դրա համար ել յերեխայի կաշին պետք ե պահպանել մաքուր պահել, թույլ չտալ չանգովածքներ գրգռումներ առաջանալուն: Միկրոբները մանր կենդանի եյակներ են, հասարակ աչքով անտեսանելի, նրանք յերեւում են մանրադիտակի ողնությամբ, մանրադիտակը մի առանձին գործիք ե ապակիների մի ամբողջ սիստեմով. այդ ապակիները միկրոբի պատկերը մեծացնում են 800 և ավելի անգամ: Ոգում, բնակարանում կահկարասիների, առարկաների, սպիտակեղենի ու շորերի վրա, հասուն մարկանց մաշկի և բերնի, քթի, բերնախոռոչի լորձաթաղանթների և այլնի վրա՝ կան բազմաթիվ զանազան միկրոբներ: Նրանց շատ քում լինում են այնպիսիները, վորոնք կարող են ծանր հիվանդություններ պատճառել այն դեպքում, յերբ մտնում են յերեխայի որդանիզմի մեջ: Որդանիզմի մեջ նրանց մտնելու առաջն առնել կարելի յե զլիսավորապես յերեխայի շուրջը խիստ մաքրություն պահելով:

Մաշկում քրտինքի և ճարպի գեղձեր են գտնվում: Ճարպի գեղձերն արտադրում են ճարպ, վորն ոծում ե մաշկը և նրան փափակացնում: Քրտինքի գեղձերը սկսում են քրտինքը լավ արտադրել 3-4 ամսականում: Մաշկի վատ ինսամքի դեպքում, աղտոտվում են այն անցքերը, վորոնց միջով դուրս են գալիս ճարպն ու քրտինքը. անցքերը փում են և հետադայում գեղձերը բորբոքվում են՝ ուռույցքներ են գոյանում թարախակալած տեղեր և այլն:

Հատ յերեխաների կաշին ծնվելու յերկրորդ որը դեղնավուն և դառնում, նորածինների այդ դեղնացավը անցնում է առանց վորե և քժշկության:

Պորտակապը, վորի միջով յերեխան կապված ե յեղել մոր որգանիզմի հետ, ծնվելուց հետո կտրում են: Պորտակապարանը ընկնելուց հետո՝ պորտի վերը պետք ե խնամքով պահվի ամեն մի աղտոտումից:

Նորածնի հասակը միջին հաշվով 50 սանտիմետր ե: Գլուխը նրա մարմնի ամենամեծ մասն ե և կազմում ե նրա մարմնի ամբողջ յերկարության մի քառորդը, այն ինչ հասուն մարդու գլուխը մարմնի յերկարության համեմատությամբ բավականին փոքր ե և կազմում ե մեկ ութերորդականը: Գլխի շրջագիծը 34—35 սանտիմետր ե և 3-4 սանտիմետրով մեծ կրծքի շրջագիծը: Զեռքերն ու վոտքերը կարճ են: Նորածնի յերեխան բարձր ձայնի և ուժեղ լույսի դեպքում ցընց-

վում ե, աչքերը կկոցում: Գլուխը նա չի կարողանում պահել, վորն անոփնական կերպով կախ ե ընկնում: Ձեռներով ու վոտներով նա անկանոն շարժումներ ե անում:

Նորածնի մարմինի ջերմաստիճանը, վոր չափում են հետի անցքով, 36,8—37,5 աստիճան ե: Յերեխայի որգանիզմն իր արտարգանդային կյանքի սկզբում զեռևս չի կարողանաչափ կարգավորել իր մարմնի ջերմաստիճանը և հեշտությամբ մրսում ե: Ենթե յերեխային բավականաչափ տաք չփաթաթենք և թողնենք ցուրտ տեղ, նա շատ շուտով կմրսի, իսկ դա կարող ե հասցնել ծանր հիվանդության և մինչև իսկ մահվան:

Առողջ նորածնին յերեխան նորմալ պայմաններում, կարծես թե շարունակում ե իր արգանդային կյանքը. նա շատ յերկար ե քնում:

Յերեխայի արտաթորությունները առաջին որերին լինում են մուգ կանաչագույն և թանձր (սկզբնական կղկղանքը), իսկ հետո ընդունում են ավելի բաց, դեղին գունավորում և դուրս են գալիս 3-4 անգամ: Նրանց հոտն առանձնահատուկ ե, վոչ գարշելի:

Մեզը գալիս ե որպական 20 անգամ:

Յերեխայի սիրտը, վոր նրա բռունցքի մեծությունն ունի, մի բռպեցում 120—140 անգամ ե խփում:

Կրծքի վանդակը կառուցված ե այնպես, վոր կողերը գնում են վողնաշարից համարյա ուղիղ անկյունով, չեն թեքված զեպի ցած, ինչպես հասակավորինը: Դրա համար ել կողերի չափը շնչում ե մակերեսորեն: Շնչառությունը կատարվում վոչ միայն կողերի բարձր ու ցածր շարժվելու ոգնությամբ, այլև ստոծանու մասնակցությամբ, այսինքն մկանային այն թաղանթի ոգնությամբ, վորը գտնվում ե փորի և կրծքի խոռոչների միջև: Դրա համար ել մայրը հաճախ նկատում ե, վոր յերեխան շնչում ե «փորիկով»:

Վորովինեակ յերեխան խորը չի շնչում, ապա ողի իր պահանջը նա բավարարում ե նրանով, վոր շնչում ե հաճախ՝ մի բռպեցում — 40 մ0 անգամ շունչ առնելով:

Կրծքավանդակը ամեն մի բարուրակապով ճնշելը վտանգավոր ե, քանի վոր առանց այդ ել յերեխան չի կարողանում խոր շունչ քաշել՝ շնորհիվ իր կրծքավանդակի հատուկ կաղմվածքի:

Յերեխայի կանոնավոր զարգացման ամենազլիավոր ցուցանիշները մեկը նրա քաշի փոփոխությունն ե:

Առաջին 2-4 որում յերեխայի քաշը պակասում ե: Ամենից շատ պակասում ե ծնվելուց հետո, առաջին որը, 2-րդ որը պակասում ե ավելի քիչ, 3-րդ որը՝ ել ավելի քիչ: Ընդհանուր առմամբ պակասում ե 150—300 գրամ, իսկ յերեխին ել ավելի, բայց վորոշ դեպքերում քաշը բոլորվին չի պակասում: 4-րդ որից հետո՝ քաշը սկսում ե ավելանալ, և վորոշ յերեխաների սկզբնական քաշը 10-րդ որը վերականգնում ե: Յերեխաներ ել կան վոր սկզբնական քաշին հասնում են ավելի դանդաղ՝ 2—3-րորդ շաբաթվա վերջին:

Քաշի լավ կամ վատ աճումը կախված ե այն բանից, թե յերբ ե աերեխան ծիծը բռնել, ինչպես ե ծիծում, կուրծը ինչպես ե կաթ տալիս, ինչպես են յերեխային ընդանրապես խնամում:

Քաշը հետագայում անընդհատ աճում ե: Առանձնապես քաշը յե-

ուանդուն կերպով ավելանում ե կյանքի առաջին ամսում, միջին հաշվով որական 25 գրամ, ամսական՝ մոտ 750—800 գրամ:

5-ից 7-րդ որում պորտապարանը ընկնում ե և նրա տեղը վերք գոյանում: Մաքրության և լավ խնամքի դեպքում նա արագորեն լավանում ե և ստացվում պորտի բնորոշ կտրվածքը: Վատ խնամքի և վերքի կեղտոտ պահելու դեպքում, կարող ե պորտի բորբոքում առաջ գալ, իսկ յերբեմն ել արյան վարակում, վոր շատ ծանր և վտանգավոր հիվանդություն ե վորի հետևանքով քիչ յերեխաներ չեն մեռնում:

Նորածնի վոսկորները նուրբ, կակուղ են. գանգի վոսկորները չեն հյուսվիլ, գագաթի ու ճակատի վոսկորների միջև կա մի արածություն, վորտեղ դեռ վոսկոր չկա. դա մեծ զաղտունն ե, վորը փակկած ե կակուղ, բայց ամուր թաղանթով. ծոծրակում գանգի կողքից կան նույնպիսի փոքր գաղտուններ: Ծորհիվ այդ առանձնահատկությունների գանգի վոսկորները ծննդյան ուղիներով անցնելիս՝ մեկը մյուսի վրա յեն անցնում, զիվեկի չափը փոքրանում ե, և նա կարողանում ե հարմարվել ծննդյան ուղիներին ու առանց ֆասովելու ավելի ճշշտ անցնում նրանց միջով:

Յերիտասարդ մայրերը յերեխն վախենում են ձեռք տալ գլխիկին, ոճել կամ լիանալ այն, վախենալով՝ ֆսասել թաղանթը և կակուղ վոսկորները: Այս գախն ավելորդ ե, քանի վոր խնամքով վերբերվելու դեպքում վասա չի կարող առաջանալ:

Յերեխն ծննդաբերության ժամանակ գանգի վրա մաշկի վերնոսկը տակ տեղի յեն ունենում արյունահոսումներ, վոր վախեցնում են ծնողներին, բայց այդ ուսուցքները վորոշ ժամանակից հետ անցնում են:

Փոքրիկ գաղտունները ծածկվում են 3—4 ամսականում, մեծ գաղտունը փոքրանում ե աստիճանաբար և փակվում ե 1 տարեկան 4 ամսականում: Այդ ժամանակ գանգի վոսկորներն ավելի ամրանում են:

Նորածինի վոսկորներն իրենց կառուցվածքով բավականին տարբերվում են հասակավոլների վոսկորներից, և միայն 2 տարեկանում յերեխայի վոսկորները մոտենում են հասակավորի վոսկորների կառուցվածքին. բայց մանկական որդանիկումում. դեռ չեն առաջացել բոլոր վոսկորները, յերեխան զեռ չունի մի քանի մանր վոսկորներ, Յյոսակն, որինակ, յենթաղաստակի վոսկորները հիմնադրվում են միայն առաջին տարվա վերջին, այն ել վոչ բոլորը և վերջանում են 10-14 տարեկանում, իսկ իրենց կատարյալ զարգացմանը հասնում են ել ավելի ուշ:

Այդպիսով դանդաղ, աստիճանաբար ձևավորվում ե յերեխայի կմախքը:

Նկատի առնելով վոսկորների կակուռթյունը և նրանց զարգացվոր զարգացման համար՝ ստեղծել բարենպաստ պայմաններ, սկսած կյանքի առաջին որից: Յերեխայի կերակուրը այնպես պիտի լինի վոր նրա մեջ գտնվին վոսկորներ կառուցելու համար պետքական բուր նյութերը: Վոսկորների աճումը, զարգացումը պահանջում ե նույնպես, վոր յերեխան լայնորեն ոգտվի թարմ ողից և արևի լույսից:

Մի տարեկանի հիմնական կեարակուրը, վորի շնորհիվ վոսկորները կանոնավոր աճում են, կնոջ կաթն ե, ճիշտ կազմված խառնուրդներ՝ լրացուցիչ մնունքը, իսկ հետագայում՝ յերեխան պետք ե մնվի միայն ճիշտ կազմված արհեստական կերակուր:

Յերեխային վաթաթելու շորերով չպետք ե ճնշել, պետք ե յերեխային աղատություն և հարավորություն տալ շարժվելու, բայց վորպեսդի վոսկորները չծովեն նրան չպետք ե ստիպել նստելու, կանգնելու և քայլելու: Վոսկորների ծուռմանը ազդում են շատ որդանների գործունեյության վրա: Յեթե յերեխան սալպատ ե ստացել, նրա կրծքի խոռոչի ամբողջ կառուցվածքը փոխվել ե, ապա փոխվում ե թոքերի դիրքը, տեղափոխվում են սիրան ու խոշոր անոթները և նրանց կանոնավոր աշխատանքը խանգարվում ե:

Առանձնապես աղջիկների համար ծանր են վողնաշարի ծուռմերը: Վոտքերի ծուռմը վողնաշարի և այլ վոսկորների ծուռմն ազդում ե կոնքի կառուցվածքը վրա: Անկանոն ձեւավորված, ծոված կոնքը հետագայում կարող ե հասցնել այն բանին, վոր կինը չի կարողանա կանոնավոր ծնել: Այդպիսի դեպքերում պատահում ե, վոր մայրն ու յերեխան մահանում են կամ նրանց կարելի յե փրկել միայն լուրջ անդամահատության ոգնությամբ (մոր վորի մկանների և արգանդի հատում):

Յեթե վոսկորների սախիտային փոփոխությունն ուժեղ զարդացած են, ապա խախտվում ե հասուն մարդու աշխատանակությունը: Ռախիտի առաջն առնելը և բժշկելը սոցիալական շատ մեծ նշանակություն ունի:

Ռախիտը և մանավանդ նրա ծանր տեսակները կանիելու համար՝ մանկական կոնսուլտացիաներն ու մանկամասուրները առողջացուցիչ և բուժական միջոցառումներ են կիրառում. — յերեխաների հատուկ բուժում թարմ ողով, արևի և ոդային վաննաներ «լեռնային արև» լամպով հառապայթում անել, մասսաժ, մարմնամարզություն կատարելը, ձկան յուղի ու զանազան գեղերի գործածությունը:

Մարդու ամբողջ մատավոր կյանքը, բոլոր շարժումները կախաված են նրա նյարդային սիստեմի գործողությունից: Զգայարանների գործունեյությունը, տեսողությունը, լսելիքը, հոտառությունը, շոշափելիքը, տաքի ու ցրտի, ցավի և այլ զգացումը կանոնավոր ե կատարվում, յեթե մարդու նյարդային սիստեմը նորմալ է, գործում են նրա հետ միասին մյուս բոլոր միացած որդանները (աչք, ականջ և մյուսները): Մարդ կանոնավոր ե շարժվում, յեթե նրա նյարդերը կանոնավոր կառուցված ե զարգացած են և նյարդային սիստեմի գլխավոր կատարելը:

Յերեխան ծնվում ե այնպիսի նյարդային սիստեմով, վորը դեռ զգալիորեն պետք ե փոխվի ու զարգանա, մինչև վոր նա կարողանում է ճեռքերն ու մյուսների համար պետքական զործողություններ կատարել:

Բայց նա վաղ հասակից կարող ե շատ բան անել. ծնվելուց հետո առաջին որերն արդեն նա կարողանում ե ճեռքերն ու վոտքերը շարժվում են, նա կարողանում է բանալ և փակել աչքերը: Մըռի զարկելը, շնչառությունը, մարսողությունը և կերակը մնա-

յորդների արտաթորումը, մեզի առանձնանալը ու միզելը—այս բուրը կապված ե դրա համար բավականաչափ զարգացած ներվային սիստեմի գործունեյության հետ: Տաք վաննայում նա զգում ե աս-քությունը, նա հանդիսա ե, այդ գուր ե գալիս նրան. յեթե մրսում ե ապա նա ձգում ե համը՝ յեթե նորածնի լեզվին կաթեցնենք մի քաղցր կաթիլ, նա ծծում կուլ ե տալիս. թթուն և դառը ծամածություններ են առաջ բերում, լեզուն բերնից հանում ե, դուրս ե մղում անդուրեկան կաթիլը: Ուժեղ հոտն, որինակ՝ անուշահոտ յուղերի (գուխի) սուր հոտն առաջ ե բերում ծամածություններ, ճպվոց:

Ծնվելուց հետո՝ նորածնի ուղեղն ուժեղ կերպով աճում և որեցը զարգանում ե: Ամբողջ ուղեղը մի տարեկան դառնալիս մեծանում ե  $2^{1/2}$  անգամ, յերեք տարեկան դառնալիս յեռավատկվում ե: Յերեխայի վաղ մասնկության նյարդային սիստեմը պահանջում է ամենախնամոտ վիրաբերմունք: Նյարդային սիստեմի ավելորդ գըրգուռները կարող են անբարենպաստ կերպով ազդել յերեխայի հետագա զարգացման վրա: Նարդային սիստեմի կանոնավոր զարգացման համար պետք ե վոչ միշտ կանոնավոր խնամել յերեխային և կանոնավոր կերակրել, այլև կյանքի այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնք նպաստում են նյարդային սիստեմի զարգացմանը:

Վերև ասվեց, վոր նորածինը շատ քնքուշ եյակ ե, վորի կյանքը պահպանելու և զարգացնելու համար հարկավոր են խնամքի ու սնդի վորոշ պայմաններ:

Պատահում ե, վոր դեռ ծննդյան տանը նորածին յերեխան հիվանդանում ե վարակվելով կեղաստ ձեռքերի ու առարկաների միջացով կամ հիվանդ մորից (որինակ գրիպով): Այստեղ, վորտեղ ծնընդյան տան բոլոր պայմաններ և նրա ամբողջ առորյան կազմակերպված ե այնպես, վոր կեղա չկա ու նորածինին լավ խնամում են, —յերեխան պահպանումը շատ սակավ ե լինում: Ծննդյան տներում կան մասնագետներ, մասնկական բժիշկներ, վորոնց վրա պարտակնություն ե դրված՝ հետեւելու յերեխայի առողջությանը և կանոնավոր խնամքին:

Հատուկ ուշադրության ե արժանի այն, վոր նորածին յերեխան ունի մի շատ կարևոր առանձնահատկություն, ափելի մեծ յերեխանների համեմատությամբ նա սակագ ե հիվանդանում մի քանի մասնկական վարակիչ հիվանդություններով. — այդպիսի հիվանդություններն են՝ դիֆտերիտը, կարմրուկը, քութեցը: Յերեխայի որգանիզմում կան պաշտպանող մարմիններ, վոր մտել են մոր որգանիզմից արգանդային կյանքի ժամանակ և շարունակում են մտել մոր կաթով կերակրվելու: Վարակիչ հիվանդությունների նկատմամբ այդ անզգայունակությունը կոչվում ե իմմունիտետ (անվարակելիություն): Սակայն յերեխայի անումով, աստիճանաբար, մոտավորապես 3 ամսական ժամանակ այդ մորից ստացված իմունիտետն անհետանում ե և յերեխան կարող ե հիվանդանալ ամեն մի վարակիչ հիվանդությամբ:

Կյանքի յուրաքանչյուր որում, յերեխայի որգանիզմը փոխվում է զարգանում ե: Նա դեռ յերկար մնում ե անոգնական, բայց ուշադիր հայրն ու մայրը յուրաքանչյուր որ նկատում են նրանում մի նոր բան. դա վկայում ե յերեխայի աճումը, զարգացումը, այն վոր

նա ավելի ու ավելի գիտակից ե դառնում, վոր փոխվում, աճում են նրա պահանջները: Այստեղ, վորտեղ ծնողները ցանկանում են ճշշդիքով կերպով հետեւել յերեխայի զարգացմանը, շատ ոգտակար ե գիտողությունների որբագիր պահել: Կոնսուլտացիայի բժիշկն ու մանկավարժը կարող են սովորեցնել թե ինչպես սկսել ու կազմել որագիրը:

## 2. ՅԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՄ-ՍՈՒՄ

Մի ամսական յերեխան նույնպես անոգնական ե, ինչպես և նորածինը, նա դեռ գլխիկը չի կարողանում պահել, բայց նրա կերպարանքը բավականին փոխվել ե. նրա գեմքն այնպես կախ ընկած չե, ինչպես նորածնինը, գլուխն ավելի կլոր ե դարձել, մազերը թափվել են և նորերն են դուրս յեկել, նա ամբողջովին կլորացնել ե, նրա քաշը 750-800 գրամ ավելացել ե: Նրա հասակն աճել ե 3-4 սանտիմետր: Նա հետեւում ե լույսի պայծառ կետին, նա լսում ե ձայները:

Մի ամսական յերեխան շարունակում ե շատ քնել՝ 20 ժամ որական, արթնանում ե ուտեղու համար և այն դեպքերում, յերը թացարուները գրգուռմ են մաշկը:

## 3. ՅԵՐԵԽԱՅԻ 2-ԻՑ ՄԻՆՉՅԵՎ 6 ԱՄՍԱԿԱՆԸ

Յերկրորդ ամսի ընթացքում յերեխան նույնպես յեռանդով ավելացնում ե քաշն ու հասակը: Յերկու ամսական յերեխան արդեն ավելի լավ ե պահում գլխիկը, ծոծրակի մկանները մի քիչ ուժեղանում են: Յեթե նրան յերեխան ի վար զննենք, նա կարող ե գլուխը բարձրացրած պահել, նրա աչքերը խոնուն կերպով են նայում: Լաց լինելիս, արցունք ե թափում նա կարծես ականջ զննելով հնչուններին լսում ե մոր ձայնը: Նա ինչքը սկսում ե արտասանել հնչյուններ՝ բվիում ե. — դա ապագա խոսքի առաջին բառերն են:

Առաջին յերկու ամսում յերեխան բավականին զարգանում և ամրանում ե: Երա մարսողության գործարանների գործունեյությունը կարգի յերկու ամսում: Նա դիմացկուն ե դառնում ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ: Երան խնամելը փոքր ինչ թեթեփանում ու հեշտանում ե: Պորտի վերքը վաղուց լավացել ե, մաշկն այնպես հեշտությամբ չի ճանկութվում: Այդ ժամանակ մայրն ել վերկանագնում ե իր ուժեղը: Մոր սեռական որգանները նորմալ դրություն են ստանում: Յերկրորդ ամսիը այն ժամանակն ե, յերը ծիծ ավող մայրը, յեթե նա աշխատում ե արտադրության մեջ, իր առողջական դրությամբ կարող ե գործի անցնել. իսկ վոչ արտադրությունում աշխատող կանայք կարող են աշխատանքի անցնել և շաբաթից հետո: Աշխատանքի անցնելու համար մայրը պետք ե գիտակցարար պատրաստվի: Ծննդաբերությունից վեց շաբաթ հետո նա անպայման պետք ե գնա կինկոնսուլտացիայի բժիշկի մոտ, նրա հետ խորհրդակցի իր առողջության մասին: Նա պետք ե կազմակերպի յերկու ամսական յերեխայի կյանքը, նախորոք նրան մասնամսուր մտցնի կամ տանն ապահովի

յերեխայի ինսամքը, հաշվի առնի իր աշխատանքի ժամանակը և համապատասխան կերպով ժամանակը բաշխի յերեխային կերակրելու համար:

Մայրը մասամբ յերեխայի ինսամքը հանձնում և մանկամսուրին կամ ծծմորը:

Մայրը պետք ե լավ հիշի, վոր յերեխայի առողջությունը պահպանելու համար՝ նա պետք է յերեխային կերակրի մինչև 9 ամսականը բժշկի ցուցմունքով:


Յերեք ամսականում յերեխան լավ և պահում գլուխը: Ուրախ շարժումների ասպարեզում: Յեթե նրա ձեռքերից բռնենք ու բարձրացնենք, նա վտաները դեմ և տալիս: Ձեռքերով ավելի վստահորեն և բըռնում առարկաները: Այդ հասակում ծնողները նկատում են, վոր յերեխան շատ թուք և արտադրում, թքագեղձերն սկսում են ուժեղ կերպով գործել, թուքը յերբեմն հոսում է բերնից: Այդ առատ թքահոսությունը նորմալ յերեկոյիթ ե: Անհրաժեշտ է յերեխային հազցնել բարսկ, ուստինապոծ կրծկալ, վորպեսզի շորերը չթրչվեն:

5 ամսականում մեջքի մկաներն այնքան արդեն ամրապնդվել են, վոր յերեխան կարող է վորոշ ժամանակ նստել: Վեց ամսականում նա արդեն լավ նստում է:


#### 4. 6 ԱՄՍԱԿԱՆԻՑ ՄԻՒԶԵՎ 1 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՅԻՑ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6—7 ամսականում նորմալ յերեխայի առաջին ատամները դուրս են գալիս—2 միջին ստորին կտրիչները: Յերեխայի առաջին կյանքում այդ մոմենտը կարեռ են նշել, վորովհետեւ սովորաբար ատամները դուրս գալու հետ ծնողները կապում են դանաղան հիվանդություններ՝ փորլուծություն, դողոցը և այլն: Հաճախ փորլուծության գեպքում ծնողները չեն գիմում բժշկի ոգնությանը, կարծերով, թե փեպքում ծնողները չեն գիմում բժշկի ոգնությանը, կարծերով, թե փորլուծությունը նշան է յերեխայի ատամների դուրս գալուն: Ատամների դուրս գալը պետք է անցնի առանց հիվանդանալու, աննկատելի: Ատամը դուրս գալու մասին մայրը պետք է իմանա, յերբ յերեխային կերակրելիս առաջին անգամ ատամը զարկի գգալին: Յեթե պատահաբար վորե և հիվանդություն զուգադիպել է ատամները դուրս գալուն, ապա այդ հիվանդությունը կապ չունի ատամի դուրս գալու հետ և կարիք ունի հատուկ բժշկության:

Ատամները դուրս են գալիս հետեւյալ կարգով.—6—7 ամսականում դուրս են գալիս յերկու միջին ստորին կտրիչները, 7—8 ամսականում յերկու միջին վերին կտրիչները, 8—9 ամսականում՝ վերին կողքի կտրիչները, 10—12 ամսականում՝ ստորին կողքերի կտրիչները: Այդպիսով մեկ տարեկան դառնալիս յերեխան ունենում է 8 ատամ (կտրիչներ) (նկար 1):



6—7 ամսական 7—8 ամսական 8—9 ամսական 10—12 ամսական



1 ամ. 2 ամ. 4 ամ. 6 ամ. 8 ամ. 10 ամ.

Նկար 1. Ատամների գուրս զալը.

5—6 ամսականում յերեխան կրկնապատկել է իր քաշը և կշռում է 6500—7000 գրամ: Նա նստում է, նա բռնում է առարկաները և պահում, նա ճանաչում և մորն ու հարպատաներին, զանազանում ե ոտարներին, նա լսում է յերզի մելոդիական ձայները, հետաքրքրվում է այլ յերեխաներով:

Մինչև 5—6 ամսական դառնալը յերեխան սերտ կապված և մոր հետ, քանի վոր կերակրվում է բացառապես մոր կաթով: Բայց հաջող զարգանալու համար այդ հասակից նա կարիք ունի բացի մոր կաթից այլ կերակրուրի: ստամոքսի, աղիքների, յենթաստամոքսային դեմքի արտադրած մարսողական հյութերն արդեն կարող են մարսել ավելի բարդ կերակուր: Յերեխան շիլա յե ստանում: Նրան կարելի յե տալ պտղակիսել: Դա յերեխայի ինքնուրույն ապրելու առաջին հտապն է: Հետաքայում նա յուրաքանչյուր ամիս ստանում և նոր լրացուցիչ սնունդ և աստիճանաբար ավելի ու ավելի ազատվում է մոր հետ ունեցած կապից, ավելի ու ավելի անկախ և դառնում:

7—8 ամսականում նա ինքը բարձրանում սողում է: 9 ամսականում կանդնում է, նստում և բարձրանում, կրկնում է իրեն մտաշելի շարժումներ՝ փորձելով իր ուժերը և կատարելագործելով իր նվաճումները: 10 ամսականում վորոշ յերեխաներ արդեն ման են գալիս, բայց սովորաբար յերեխան առաջին քայլերն անում են մի տարեկան հասակից:

Անհրաժեշտ է յերեխայի համար շենքն ու ամբողջ ինսամքն այնպիս կազմակերպել, վոր նրա շրբումները չսահմանափակվեն: Յերբ յերեխան շարժվում են փորսող և տալիս, ման և գալիս, ցատկում են, նա խոր շունչ է քաշում, նրա սիրտն ավելի յեռանդագին է գործում, արյունն ավելի արագ և մզվում ամբողջ մարմնով: Բոլոր որպանները գործում են ավելի լավ:

Յերեխայի կյանքի ամբողջ առաջին տարվա ընթացքում կշիռն արագորեն ավելանում է: 5—6 ամսականում նրա կշիռը կրկնապատկվում է, մեկ տարեկանում յեռանդագին է:

Քաշի հետ միասին զգալիորեն բարձրանում է հասակը: Մեկ տա-

բեկանում նրա հասակը 70—75 սանտիմետր և լինում, այսինքն ավելանում և 20—25 սանտիմետրով:

Մարմի զանգվածի յեռանդագին աճման այդ պրոցեսը պահանջում է յերեխայի որգանիզմի բոլոր բջիջների, մանավանդ ստամոքսա-պիքային ուղղության շատ մեծ աշխատանքը: Իր մեծ աշխատանքի համապատասխան՝ յերեխայի աղիքները համեմատաբար յերկար են հասակավորի աղիքներից: Հասակավորի աղիքները 4—5 անգամ ավելի յեն նրա հասակից, իսկ յերեխայի աղիքները 6 անգամ յերկար են նրա հասակից:

Լորձաթաղանթը, վոր ծածկում է աղիքների ներսի մակերեսը, պատած է թելիքներով, վորոնց միջոցով յերեխայի աճման համար անհրաժեշտ սննդանյութերը մարսված կերակրից, այսինքն կաթից ծծվում են: Սննդանյութերն առավ ընկնում են արյան մեջ, արյունը տանում է այդ նյութերը բոլոր բջիջներին վորպես շինանյութ և դըրանք ծառայում են յերեխայի որգանիզմի զարգացման համար:

Մարսողության բոլոր որգանների՝ ստամոքսի, աղիքների, լարդի աշխատանքը մասնավանդ յերեխայի կյանքի առաջին տարում պահանջում են հատուկ ուշագրություն:

Աղիքները պետք է գործեն անընդհատ: Կերակուրը թե վորակով և թե քանակով պետք է համապատասխանի որգանիզմի պահանջներին. աղիքները ավելորդ վոչինչ չպիտի ստանան, այն, ինչ վոր անկարող են մարսելու:

Աղիքային հիվանդության վտանգը առանձնապես մեծ է յերեխայի կյանքի առաջին տարում. աղիքային հիվանդացումը վոչ միայն կանոնացնում է քաշի ալելացումը, այլև յերբեմն շատ խիստ իջեցնում է քաշը, և դա՝ հաճախ յերկար ժամանակ խանգարում է յերեխայի հետագա զարգացումը:

Յերեխայի ամբողջ վաղ մանկության ընթացքում, յերբ որգանիզմը կազմվում և աճում է, կանոնավոր կերակրելը առաջնակարգ նշանակություն և ստանում:

Յերեխան խաղով, շարժումներով տափին յեռանդ է գործադրում, և դա պետք է լրացվի համապատասխան սննդուղություն: Հասակավորի սննդանյութը գնում է որգանիզմի մաշված բջիջների նորոգման և գործադրած յեռանդի վերականգնման համար, իսկ յերեխայի մաս բացի նորոգումից և վերականգնումից սննդանյութը գնում է և աճման համար: Դրանով է տարբերվում յերեխան հասակավոր մարդուց:

Շատ պատասխանատու յետ այն շրջանը, յերբ յերեխան բացի մորկաթից սկսում է աստիճանաբար վարժվել ուրիշ սննդի, իսկ մյուս կողմից սկսում է ավելի շատ շարժվել (առաջին տարվա յերկրորդ կիսը): Այդ ժամանակ յերեխաները հաճախ հիվանդանում են: Դրա համար ել մայրը պետք է խնամքով կատարի կոնսուլտացիայի բժշկի և մանկամառների բժշկի բոլոր պրոֆիլակտիկ (հիվանդության առաջն առնող միջոցներ) խորհուրդը. հիվանդության առաջն առնելի պիտի հեշտ է, քան բժշկելը: Այդ «փորսողային» (ինչպես ասում են մանկամառներում) հասակին հատուկ ուշագրություն են դարձնում բժշկելները հերց մանկամառներում: Յերեխաներին այս հասակում ավելի դժվար է և կերակրել և դաստիարակել, քան թե կյանքի ամենատառաջին ամիսներում և մի տարեկանը լրացրած յերեխաներին:

## 5.1 ՏԱՐԵԿԱՆԻՑ ՄԻՒԶԵՎ ՅԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՅԻ

### ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:

Մի տարեկանում յերեխան սկսում է իր ինքնուրույն, մորից անկախ կյանքը. նա կտրվում է ծծից և ստիճանաբար անցնում է ընդհանուր սնունդի: Նրա մկաններն ամրացել են, նա շարժվում է ինքնուրույն կերպով: Ճիշտ է, դա դեռ առաջին, անվտահ քայլերն են, բայց դա և առաջին քայլերն են դեպի նրա հետագա կատարելագործությունը:

Մի տարեկանում յերեխան ավելի շատ ժամանակ է արթուն մնում, քնում է ընդամենը 16 ժամ, յերեխն ավելի քիչ:

Այն կապակցությամբ, վոր փոխվել է յերեխայի կերակուրը, փոխվում է նաև արտաթորության բնույթը՝ դուրս և գնում որական 1—2 անգամ, կղկղանքն ավելի ճեավորված է դառնում:

Մի տարեկան յերեխան միջում է ավելի ուշ ուշ որական մոտ 12 անգամ նայած թե որվա ընթացքում ինչ քանակությամբ հեղուկ և ստացել:

Տարվա ընթացքում մի քանի անդամ փոխվում էն մազերը, և յերեխայի գլուխը մի տարեկանում ծածկվում է խիտ մազերով:

Մի տարեկանում յերեխան յեռապատկում է իր քաշը և աճում է 20—25 սանտիմետր:

Յերեխան իր զարգացումով մի տարեկանում բավականին առաջ է գնում: Յեթե սորածնին համեմատենք մի տարեկան յերեխայի հետ՝ պարզ կլինի, վոր յերեխայի զարգացման անցած ուղին հսկայական է: Հետաք իր ամբողջ կյանքում մարդուն իր զարգացման մի տարում այնպիսի ետապ չի կատարում, ինչպես կյանքի առաջին տարում:

Վերեւ մատնանշվեց, վոր կյանքի առաջին ամիսներում յերեխան չի վարակվում մի քանի մանկական վարակիչ հիվանդություններով շնորհիք մորից ստացած իմմունիտետի (անվարակելիություն): 3—5 ամսականում յերեխան կորցնում է այդ իմմունիտետը, կարող է վարակվել մանկական բոլոր վարակիչ հիվանդություններով:

Բայց զիտությունն ապացուցել է, վոր նախազգուշական պատվատումների միջոցով, կարելի յերագուած միջանգ առաջներ անվագարակելիություն դեպի մի քանի վարակիչ հիվանդությունները: Ծաղկվի, կարմրուկի, զիթարերիտի պատվատումը յերեխաների մեջ իմմունիտետ և առաջացնում դեպի այդ հիվանդությունները, ուստի վորոշ պատվատումները և ՍՀՄ-ում պարտագիր են:

Միանգամայն անհրաժեշտ է պատվատել նախազգուշական ծաղիկը սկսած կյանքի 2-րդ ամսից և նախազգուշական պատվատ կատարել զիթարերիտի դեմ և ամսականից հետո:

Յեթե յերեխան շվիկել է կարմրուկ ունեցող հիվանդի հետ, ապա նրան պետք է նախազգուշական պատվատ անել կարմրուկի դեմ: Պատվատառներն անվտանգ են և յերեխային պաշտպանում են այն հնավագությունները, վորի դեմ պատվատում և արված նրան: Յեթե այնուամենայի իլ յերեխ ան հիվանդանում է, ապա պատվատառելուց հետո նրա հիվանդությունն անհամեմատ թեթեվ է անցնում:

Վոտքի կանգնելու մոմենտից, յերեխայի կերպարանքը փոխվում է ողնաշարը, ներքին որգանների աշխատանքը փոխվում է են:

Նորածինի վողնաշարն ուղղաձիգ ե յեղել, առանց կորությունների. աստիճանաբար նա սոսմում ե իր բնորոշ կորությունը վզի և գոտ- կատեղի մասերում: Կողերը մոտենում են հասկավորի կողերի գրու- թյանը՝ նրանց ուղղությունը վողնաշարից վոչ թե ուղիղ անկյունով ե, այլ դեպի առաջ և մի քիչ դեպի ցած: Այդ պատճառով կողերի թսիը շնչառության ժամանակ ավելի յե, յերեխան շունչ և քաշում ավելի խոր և ավելի սակագի: Սկզբում նա մի ըոպեյում, շնչում ե 40—50 անգամ և տարեկանում նա շնչում ե մի ըոպեյում 20—25 անգամ: Միրաք մի ըոպեյում գարկում ե 100—110 անգամ վոչ այն- քան հաճախ ինչպես առաջին ամիսները:

Յերեք տարեկանում հասակն ու քաշը մեծանում են վոչ այնքան յերանդուն, ինչպես առաջին տարում: 2-րդ տարին յերեխան ավելա- նում է 2—2 $\frac{1}{2}$  կիլոգրամ և կշռում է 11—12 կիլոգրամ: Նրա հասա- կը մեծանում է 10 սանտիմետր:

Յերկրորդ տարեկանում՝ վերջանում է կաթնատամների դուրս գալը հետեւյալ կարգով. — Մեկ տարեկան և 2 ամսականից — 1 տարեկան և 4 ամսականում դուրս են գալիս առաջին փոքր սեղանատամները՝ վերին և ստորին, 1 տարեկան և 6 ամսականից — 1 տարեկան 8 ամսակա- նում՝ ժանիքները: 2 տարեկանում դուրս են գալիս յերկրորդ փոքրը սեղանատամները:

Յերկու տարեկան յերեխան ունի 20 կաթնատամներ, վորոնք ըս- կըսում են փոխվել 6—7 տարեկանում: Կաթնատամները շատ քննքուշ, փիսրուն են, բավականին հաճախ հիվանդանում են: Դրա համար ել պիտի ուշադիր կերպով հետեւել ատամներին:

Անհրաժեշտ ե յերեխային ստիճանաբար սովորեցնել ուտելուց հետո ըերանը վողողելը. 2 տարեկանից հետո՝ պիտի սովորեցնել ա- տամը մաքրել, փափուկ խոզանակ գործածել (ասանց ատամնափոշու): Կաթնատամները, փոքր փշանան, յերեխային պարբերաբար ցույց տալ ատամնաբուժին՝ հիվանդացումները կանխելու համար: Առողջ կաթ- նատամները առողջ մշտական ատամների յերաշխիքն են:

Ատամները դուրս գալու մոմենտից՝ յերեխայի դեմքն զգալիորեն փոխվում ե: Նորածնի գլուխը մեծ ե, բայց գանդի մասերը միատե- սակ չեն զարգացած: Գլխի ամենամեծ մասը՝ դա գանգի խոռոչն ե, վորի մեջ գտնվում ե գլխի ուղեղը: Դեմքի վոսկորները զարգացած չեն, ուստի նորածնի դեմքը փոքր ե: Հենց փոքր ատամները դուրս են գալիս, այն մոմենտից, յերբ յերեխան սկսում է ծամել ավելի պիստ կերակուր, սկսում են ուժեղ կերպով աճել վերին ու ստորին ծնոտ- ները, իսկ նրանց կապակցությամբ նաև գենքի մյուս վոսկորները՝ այսոսկըները, քթոսկըները և մյուսները: Դեմքի վոսկորների ամենա- ուժեղ աճումը տեղի յե ունենում կյանքի առաջին յերկու տարինե- րում: Դեմքի վոսկորներն աճում են և յերկարությամբ և լայնությամբ, յերեխայի դեմքն ավելի արտահայտիչ ե դառնում:

Նորածնի գլխի շրջագիծը կրծքի շրջագիծը ավելի մեծ ե, մի տա- րեկանից հետո դրանք հավասար են, իսկ հետո կուրծքը սկսում է դանդաղորեն առաջ անցնել գլխի շրջագիծը՝ մնալով գետես նույն մա- կարդակի վրա: Մարմի մասերի չափերն ել այդ ժամանակամիջոցում զգալիորեն փոխվում են, գլուխը կազմում է մարմի մի հինգերողա- կան մասը:

Յերեխայի բառերի ու պատկերացումների պաշարը մեծանում է, նա կարիք ե զգում ուրիշ յերեխաների հետ տեսնվելու, շփվելու, նա ավե- լի հաճախ ե հանդիպում յերեխաների կողելեալիքին: Յերեխայի դաս- տիարակության մեջ այդ կարեւը մոմենտը, այսինքն շատ յերեխա- ների հետ շփվելը, կարող ե առաջացնել հի անդամությունով վարակվե- լու վտանգ: Այդ հասակում վորպեսդի կանխենք վարակիչ հիվանդու- թյան դեպքերը առողջաբանության միջոցները պետք ե կիրառել վոչ միայն մի յերեխայի ընտանիքում: հարկավոր ե, վոր սանիտարական առողջաբանական կանոնները և վորոշումներն իրազործվեն ամբողջ շենքերում, հարկերում և բնակարաններում: Անհրաժեշտ ե հասարա- կան գիգիենան և պրոֆիլակտիկան մեծ բարձրության վրա զնել: Յուրաքանչյուր մայր և յուրաքանչյուր հայր պետք ե այդ մասին հո- գա այն կոլեկտիվում, վորտեղ ինքն ապրում ե:

3 և 4 տարեկանում քաշը և հասակը փոքր ինչ դանդաղ և բարձ- րանում: Յերեք տարեկանում քաշն ավելանում է 1 $\frac{1}{2}$ —2 կիլոգրամ և յերեխան միջին հաշվով կշռում է 12 $\frac{1}{2}$  կիլոգրամ: Հասակն աճում է 8 սանտիմետր: 4 տարեկանում քաշն ավելանում է 1 $\frac{1}{2}$  կիլոգրամ. միջին հաշվով յերեխան կշռում է 14 կիլոգրամ: Հասակն ավելանում է 5—6 սանտիմետր:

Յերեխայի աճան և շարժումների գգալի զարգացման հետեւան- քով՝ ինխվում է յերեխայի արտաքին կերպարանքը: Յերեխայի մարմ- նի ձեր նախկին կլորությունը, լցվածությունը նվազում ե, նա ավե- լի ձգվում է հասակով, ավելի վայելչազմ և դառնում: Այդ պրոցե- սը նկատվում է 4 տարեկանում, բայց յերեխան առանձնապես ուժեղ ձգվում է 6 տարեկանում: Նման գեղքում յերեխայի նվազելը չի առաջիկ համարել հիվանդություն. դա նորմալ պրոցես ե:

Յերբ յերեխան սկսում է ընդհանուր կերակուրներ ուտել, պիտի հիշել, վոր կարակուրը միշտ թարմ, լավ յեփած պիտի լինի: Յերե- խայի կյանքի առաջին յերեք տարվա ընթացքում աղիքները յեռա- գագին աճում են և անհրաժեշտ ե այնպիսի կերակուր տալ, վորն ա- ռաջ չըերի աղիքների գրգռում և հետագա հիվանդացում:

Նայած կերակուրի բնույթին փոխվում է և յերեխայի արտաթո- րությունը. ձևավորված կղկղանքը լինում է որական 1—2 անգամ: Մսեղն կերակուր ուտելու գեղքում կղկղանքը բաց շականակագույն և լինում, անդուրեկան հոտով: Յեթե կերակուրի մեջ կանաչեղեն կա, կղկղանքը մուգ-շականակագույն ե:

Որական միզում է 9—12 անգամ:

2—3 տարեկան յերեխան քնում է (հաշվելով նաև յերեկվա քու- նը) 12—14 ժամ, արթուն և լինում 10—12 ժամ: 4—ամյա յերեխան մա- վելի քիչ և քնում՝ 11 ժամ, և որվա մեծ մասը նա արթուն և լի- նում:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### ՄԻՆՉԵՎ Յ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԸ 1. ԻՆՉՊԵՍ ՊԻՖԻ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՍԵՆՅԱԿԸ ՆՈՐԱՇԻՆ ՅԵ- ՐԵԽԱՅԻ ԳԱՄՄԱՐ

Յուրաքանչյուր կին, վոր սպասում ե յերեխա ծնվելուն, պիտք ե ամեն ինչ պատրաստի նախորօք մինչեւ նրա աշխարհ դալը։ Ծննդյան տնից յերեխային պետք ե մաքուր սենյակ բերեն՝ ուստի այնտեղ, ուր հնարավոր ե պետք ե սենյակը ներկել ու սպիտակացնել կամ փոխել պաստառը։ Յեթե հնարավոր չեն նման մեծ նորոգութիւնը անելը, ապա անհրաժեշտ ե խնամքով սրբել պատերը և առաստաղն ու ինչ վոր կարելի յեւ լվանալ տաք ջրով՝ մոխրաջրով կամ սապանով։

Պետք ե այնպես հավաքել սենյակը, վոր վոչ մի ավելորդ բան չի-նի սենյակում, վոր փոշի հավաքվելու տեղ չնետ, վոր սենյակը հեշտությամբ կալեկի լինի մաքուր պահել։ Հարդավոր ե դուրս տանել բոլոր ավելորդ առարկաները, թափ տալ ներքնակները, յեթե փայտովիներ կան, ապա վոչնչացնել նրանց։ Լուսամուտներից այնպիսի վարդույրներ կախել, վոր հեշտությամբ լվացվում են, և վոր հնաւագործություն պահպանել։

Մայրը պետք ե ունենա առանձին մաքրուր մահճակալ։

Յերեխայի համար նախաղես պիտի պատրաստել մահճակալ ու անկողին։ Զպետք ե գնել որորոց կամ ճոճան։ Առաջին ժամանակում կարելի յեւ հարմարացնել գործված զամբյուղ, ֆաներաւին արկղ՝ մաքուր լվացած տաք ջրով սապանով կամ մոխրաջրով, և գնել 2 իբար կապած աթոռի կամ տաքուրետի վրա։ Բայց այնտեղ, ուր հնարա վորության կա, պետք ե միանգամբց ձեռք բերել մածակալ։ Մահճականերից առողջապահականը յերկաթե կամ փայտի մահճակալն եւ ներկած եմալի կամ յուղաներկով։ Շատ կարենը ե յերեխայի մահճակալի համար տեղ ընարելը։ յերեխայի մահճակալը, մոր մահճակալից և պատուանի լուսից հեռու չպիտի լինի։ Յերեխայի մահճակալը չպիտի դրվի մութ անկյունում, վառանի մոտ, քողի հետեւմ։ Պետք ե այնպես դնել մահճակալը, վոր սենյակում ապրողները չանցնեն նրա մոտով, որինակ չի կարելի մահճակալը դնել ճաշի մեղանի մոտ։

Մահճակալի մոտ պատից չպիտի դորդ, նկարներ և այլն կախել։ Յերեխային անկողին մեջ պիտի դնել այնպես, վոր նրա աչքի մեջ ուղղակի լույս չնկնի, ալսինքն գլուխը պիտի դնել զեպի լույսը։

Բնակարանի բներանուր զիզինեան պետք ե պահպանեն բնակարա-

նի բոլոր բնակիչները։ Սանիտարական—առողջապահական կանոններն ընդ ընդհանուր ոգտագործման տեղերի վերաբեմամբ պիտք ե խստիվ կատարվեն յուրաքանչյուր բնակվող, յուրաքանչյուր ընտանիք շահագրգրված ե, վոր նախասենյակը, միջանցքը, խոհանոցը, արտաքնոցը և վաննան մաքուր պահպեն։ Մուրը, ցիխը, փոշին, խոնավությունն այդ տեղերից տարածվում են բոլոր սենյակները, և ամենից շատ դրանից առուժում են ծծկեր ու փոքր յերեխաները։

Յուրաքանչյուր ընտանիք իր սենյակի մաքրության համար ինքնեւ պատասխանատու, ուստի նա պետք ե կատարի հետեւյալ կանոնները վորպես սանիտարական մինիմում։

ա) ամեն որ սենյակը ամբողջովին մաքրել, փոշին սրբել թաց փալասով (այդ փալասն ամեն որ լվանալ)։

բ) վոչ պակաս քան որական Յ անգամ ոդափոխել սենյակն այնքան ժամանակ, վոր բոլոր անկյուններում զգացվի թարմ ոդ։

գ) կենտրոնական տաքացման ապարատներն ամեն որ սրբել թաց փալասով։ հետեւ, վոր հոլանդական վառարանի փականները կարգին մնեն։

դ) սենյակում վոչ մի տղբ չպահել։

յե) սենյակում ըստ հնարավորության կերպելու չեփել և լվացք չանել։

բոլոր հասակավորները գործից տուն գալով յերեխային մոտենալուց առաջ, պետք ե լվանան ձեռները և փոխեն բանվորական զգեստը, կամ նրա վրայից հագնեն մաքուր, լվացված շոր։ Դա հարկավոր է, վորպեսզի յերեխան վորեւ ինքեկցիա (վարակ) չստանա։

Բնակարանում տեղի ունեցած մասկական վարակիչ հիվանդության յուրաքանչյուր գեպքի մասին՝ պետք ե իսկույն տեղեկացնել տան բոլոր անդամներին ու բնակիչներին։ յուրաքանչյուր բնակիչ պիտի իմանա, թն բժիշկը նախազգուշական ինչ միջոցներ ե առաջարկել, յեթե հիվանդ յերեխային թողի են բնակարանում։ Վարակիչ հիվանդության գեպքի թագունելը՝ վոճարգործություն ե։ Բայց դրանից պահանջները, վոր վերաբերում են վարակիչ հիվանդին և դիվին գեղեկցիա անելուն, պետք ե ամենախիստ կերպով կատարել՝ վարակը տարածելուց խուսափելու համար։

Կոնսուլտացիայի բուժող բժշկի և սանիտարական բժշկի այն բուժությունը պահանջները, վոր վերաբերում են վարակիչ հիվանդին և դիվին գեղեկցիա անելուն, պետք ե ամենախիստ կերպով կատարել՝ վարակը տարածելուց խուսափելու համար։

## 2. ՅԵՐԵԽԱՅԻ ՄԱՀՃԱԿԱԼԸ

Յերեխան յերկար ժամանակ համարյա ամբողջ որն անց ե կացնում իր մահճակալի վրա։ Մահճակալը նրա «բնակտարածությունն» ե։ Ուստի մահճակալի կանոնավոր կառուցվածքը և առողջապահական դրության մեջ պահելը շատ մեծ նշանակություն ունի յերեխայի կանոնավոր զարգացման համար։

Այն զամբյուղի կամ արկղի մեջ, վոր ծառայում ե վորպես ժամանակավոր մահճակալ, պետք ե դնել հարթ, վոչ շատ փափուկ ներք-

նակ: Այդ ներքնակը կարելի յե լցնել մաղով, ծովախոսով, չոր խոտով, մանր տաշեղով, խսիրով, վորը կարիք յեղած դեղքում պետք ե թափտան կամ փոխն: Ներքնակի խոտը մաքուր պետք ե լինի: Ներքնակի քսակը պետք ե լվանալ: Ներքնակի վրա մոմլաթ (կլեյոնկա) են գցում վորապեսդի ներքնակը չթրջվի, մոմլաթի վրայից փոռում են մաքուր սավան:

Յերեխային՝ կարելի յե պառկեցնել բոլորովին առանց բարձի: Բարձ դնելու դեղքում պետք ե դնել տափակը, վոչ բմբուլի, այդ ձիու մազի՝ մաքուր լվացած (շողեհարել և չորացնել): Բարձը չպիտի փափուկ լինի, վորովհետև փափուկ բարձի վրա գլխի մաշկը կըրտնի և յերեխան կանհանգստանա: Բարձի լայնքսը պետք ե հավասար լինի մահճակալի լայնությանը:

Յերեխային զանբուդի կամ արկղի մեջ կարելի յե դնել մինչև 3—4 ամսական հասակը, իսկ հետո նրան հարկավոր ե մահճակալ: Նրա մեջ յերեխան սովորելու յե կանգնել ու ման գալ: Մահճակալի կողքերը բարձր պետք ե լինեն, վոր յերեխան մինչև մեկ տարեկան հասակը վայր չընկնի այնտեղից:

Պետք ե իմանալ, վոր յերեխան իր մահճակալում պետք ե թարմ ող ստանա, վնասակար ե նրան խոր դնել, կողքերը քողով ծածկել խիտ կտորից առաջաստ շինել. այդ ամենը խանգարում ե թարմ ողի անցնելուն, մահճակալում ստացվում ե անմաքուր ող և առատությամբ բազմանում են միկրոբները, վորոնք կարող են ընկնել յերեխայի որգանիզմի մեջ: Ցանցառ կտորից կարած առաջաստը թույլ ե տրվում միայն արև դեղքում, յերբ նա հարկավոր ե ճանճերից ու մոծակներից պաշտպանելու համար:

Յերեխային ծածկելու համար պետք ե սալվանով պատած վերմակ ունենալ քաթանից, ձմեռը տաք ֆլանելից կամ բայկից: Վերմակը բացառապես պիտի գործադրվի յերեխային տանը ծածկելու համար: Զբոսանքի համար ցանկալի յե ունենալ յերկրորդ վերմակ, ձմեռվա համար՝ ավելի տաքը:

Յերեխային հագցնելու և բարութելու համար պետք ե հատկապես առանձին հարմարեցված տեղ կազմակերպել, ամենից լավ առանձին սեղան կամ պահարան (կոմոդ) ունենալն ե: Յեթե սենյակում տեղ չկա բարութելու համար սեղան դնել, ապա կարելի յե մոր հավաքած մաքուր մահճակալի վրա հատուկ շոր փուել և նրա վրա հապցնել յերեխային:

Յերեխայի մահճակալում պիտի բացարձակ մաքրություն պահպիր: Անհրաժեշտ մաքրությունը պահպանելու համար պետք ե ամեն առափուր հանել ներքնակը, թափի տալ փողոցում բաց լուսամուտից կամ մի ուրիշ տեղ: պետք ե մահճակալը սրբել թաց փալասով: Ներքնակի վրա փուգում ե սավանը, վոր կարելի յե 5-6 որը մեկ փուլել կեղոտոված դեղքում անմիջապես պետք ե փոխել: Վերեկից փոփուգում ե մոմլաթը, մոմլաթի վրա դարձյալ փուգում մի սափան կամ բարուրաշոր: Այն բարձը, վորի վրա քնում ե յերեխան, պետք ե ամեն որ թափ տալ և շուռ տալ: Բարձի յերեսը պիտի փոխել 2-3 որը մեկ, իսկ յեթե սիրտը թափելուց նրանք կեղտուալած են, ապա ավելի հաճախ:

### 3. ՆՈՐԱԾԻՆ ՅԵՐԵԽԱՅԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆԳՐԱ-ԺԵԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Մի բաժակ կամ բանկա բամբակի կտրտած կտորներով կամ յեռացրած հնոտիքով ծծապտուկը լվանալու և յերեխային խնամելու համար, մի ջրաման ծածկված սաքուր պնակով կամ ապակե կափարիչով, մաքուր շիշ լցրած յեռացրած ջրով՝ մոր ծծապտուկը և յերեխայի յերեսը լվանալու համար: Այդ ջուրը պետք ե որական 3-4 անգամ փոխել: Ապա հարկավոր և ջուրը չափելու ջերմաչափ, յերեխայի համար առանձին սապնաման սապնով, վաղելինի յուղ, 2 աման կամ խոր ափսի՝ մեկը յերեսը լվանալու, մյուսը յերեխայի մարմինը մաքրելու համար:

Այդ բոլոր առարկաները պետք ե պահել դարակի վրա, միշտ երկորչակի տեղը և լավ կլինի այնտեղ վորտեղ յերեխային բարուրում են:

Դարակի մոտ պիտի սրբիչ կախել մոր ծեռքերը սրբելու համար և լողասավան 2 ողակով սավանը լավ չորացնելու համար, յերեխաներին սրբելու համար ավելի լավ ե ամեն անգամ վերցնել:

Յերեխայի վաճանան, տաշտակը կամ կոնքը փոշուց պաշտպանելու համար, պետք ե կախել կամ դնել բարձր տեղ և ծածկել մաքուր սավանով կամ բարուրաշորով:

### 4. ՅԵՐԵԽԱՅԻ ՀԱԳՈՒՍԸԸ.

Հագուստի նպատակն ե յերեխային պաշտպանել մըսելուց և կեղտոտպվելուց. վոտների արանքում դրվող շորն ու բարուրը պետք ե լավ ծծեն հեղուկը, արտաթորություներն ու մեղք:

Դեռ նոր ծնվելիք յերեխայի համար հագուստներ պատրաստելիս պետք ե խորհուրդ հարցնել կոնսուլտացիայում, թե ինչից և ինչ ձևով կարել սպիտակեղենը: Հին ձևերը հաճախ անհամապատասխան են լինում. դրանք ունենում են կոպիտ կարեր, վոր անհանգստացնում են յերեխային, դրանց վրա ավելի շատ կտոր և գնում քան պետք ե կոնսուլտացիայում կարելի յե տեսնել կանոնավոր կարած սպիտակեղեն և ստանալ անհրաժեշտ ձևվածքը:

Նորածնի անհրաժեշտ սպիտակեղենը՝ 1) առաջը բաց շապիկ առանց կոճակի և տեսմաների, 2) տաք բամկոնակ, կորվածքը մեջքից (տրիկոտաժի կամ բումազելիի), 3) վոտնարանքի շորեր, 4) բարուրի շորեր՝ բարակ ու տաք, 5) փոքրիկ մոմլաթ, 6) տաք կամ գործվածքից վերմակ, 7) գլխաշոր, 8) սալվաններ, 9) բարձի յերեխաներ, 10) յերսուրիչ:

Պատրաստած բոլոր սպիտակեղենը պիտի լվանալ և հարթուելու:

Ինչից պատրաստել սպիտակեղենը: Պետք ե իմանալ, վոր կոպիտ գործվածքը կարող ե անհանգստացնել յերեխային, կարող ե մաշկի հիվանդությունը առաջացնել. ամենափոքրերի համար առաջին ժամանակները լավ ե բարուրաշորեր շինել հին սպիտակեղենից: Իսկ առասաբակ պետք ե վերցնել քաթան, չին կտոր, բյաղ, բաց գույնի չիթ, բումազել:

Բարուղաշորի ծայրերը պետք ե վրա տալ, բայց վոչ կոսիտ կարով, վորախազի կարերը յերեխային չաճհանգստացնեն:

Պետք ե հիշել վոր, չվացած սպիտակեղենը չպիտի բանեցնել, վորովհետև չվացած կտորը միշտ կեղտոտ ե, ոդ չի անցկացնում և խոնավություն չի ծծում:

Սպիտակեղենը մաքուր պահելու համար պիտի վորոշ տեղ հատկացնել, կարելի յե պահել զամբյուղում, սնդուկում, արկում, պահարանում կամ կոմոդում: Յերեխայի մաքուր սպիտակեղենը չպիտի խառնել հասակավորների մաքուր սպիտակեղենի, կամ յերեխայի կեղտոտ սպիտակեղենի հետ:

Յերեխայի սպիտակեղենը պետք ե լվանալ առանձին կոնքում կամ տաշտակում և չխառնել հասակավորների լվացքի հետ:

Կեղտոտված բարուրալաթերը պետք ե նախ մաքրել ապա լվանալ այնպես, վոր արտաթրության հետքեր չմնան:

Սպիտակեղենը պետք ե յեռացնել, մի քանի անգամ վողողել սառը ջրով, չորացնել ամենից լավ ե թարմ ոդում, և հարթուկել յերկու յերեսից: Միզով թրջված և միայն չորացրած սպիտակեղենները չի կարելի բանեցնել, վորովհետև գա կարող ե յերեխայի մաշկի հիվանդություն առաջացնել: Միզով թրջված բարուրալաթերը լավ պիտի վողողել սառը, ապա տաք ջրում և չորացնել:

Մաքուր սպիտակեղենի զամբյուղը կամ սնդուկը չիպիտի կոփել մահճակալի տակ և առհասարակ դնել հատակին, վորովհետև հատակից սպիտակեղենի վրա կընկնեն շատ փոշի ու բակտերյաներ:

Կեղտոտ սպիտակեղենը պետք ե պահել առանձին քսակում, վորը նույնպես լվացվում ե: Նման քսակներ պետք ե ունենալ 2-3 ը: Կեղտոտ սպիտակեղենի քսակը պիտի դնել մի վորոշ տեղ, յեթե կարելի յե վանսայի սենյակում կամ արտաքնօցում:

Յերեխախին ծննդյան տեից յերեխային ծննդյան տնից տեղափոխելու համար պետք ե վերմակ իր տակի սպանով, տաք կամ գործվոծքային, նայած տարվա յեղանակին, տաք խանձարուր, յեթե շատ ցուրտ ե կարելի յե վերցնել մաքուր բամբակե վերմակ, մաքուր լվացած շալ, ապա բարուրը, գլխակապը, բաճկոնակը, բաց շապիքը, վոտքատանկի շորը, մոմլաթը: Յեթե յերեխան ժամանակից առաջ ե ծնված, ապա ծննդաբերական տանը կրացատրեն, թե ինչպես պետք ե նրան ավելի լավ հացցնել և տուն տանել, նման դեպքերում յերեխայի տակը պետք ե դնել տաք ջուր լցրած ծնուակ (գրելկա) և առանձնապես խնամքով հագցնել յերեխային, վորպիտի պար մարմինը չսառչի:

Ծննդաբերական տեից վերադառնող մոր համար պետք ե վերցնել մաքուր սպիտակեղեն, մաքուր լավացած շոր, մաքրած վերարկու, բացի դրանից պիտի տանել նաև սրբիչ՝ փորը կապելու համար: Այդ բոլոր տնհամեշտ իրերը պետք ե նախորդք պատրաստելու կապել:

Մաքրուրական նախակուրյունը նորածնի համար: Յերեխան առողջ լինելու և լավ զարգացնելու համար, անհրաժշտ ե խիստ մաքրություն պահել նրա շուրջը և նրան ինսամելիս: Առանձնապես դա վերաբերում ե նորածնին յերեխային, վորը հենց նոր ե բերված ծննդաբերական տնից և վորի պորտապարանը գեռ չի ընկել կամ ընկնե-

լուց հետո գեռ վերքը չի լավացել: Այդ վերքի աղտոտումը կարող է յերեխայի ծանր հիվանդացման պատճառ դառնալ:

1. Մորթի մեջ, լորձաթաղանթի վրա այստեղը, վորտեղ գտնվում ե պորտակապը կամ նրա ընկնելուց հետո պորտի վերքը, հեշտությամբ կարող են ընկնել միկրոբներ և առաջ բերել ծանր ու մինչև իսկ մահացու հիվանդություն:

2. Պիտք ե իմանալ, վոր նորածնը գեռ ուժ չունի ծանր հիվանդություններին դիմանալու համար:

3. Յերեխայի շուրջը մանրազնին ըդհանուր մաքրությունը քչացնում ե միկրոբների քանակը, պաշտպանում ե նրան հիվանդություններից:

Նորածին յերեխայի յերեսը, մարմինը պետք ե ամեն որ լվանալ, լողացնել կարելի յե պորտակապը ընկնելուց հետո՝ բժշկի թույլտվությամբ, ըստ վորում առաջին վանաները պետք ե պատրաստել յեռացրած ջրից վորպիտի հում ջրի մեջ առատությամբ գտնվող միկրոբները չընկնեն պորտի վերքի վրա:

## 5. ՄՄԿԵՐ ՅԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԸ

Ծծկեր յերեխայի հանգես զալը միշտ մեծ փոփխություններ ե մտցնում յերեխային շրջապատող հասակավորների կյանքում. նրան խնամելը պահանջում ե շատ հոգ և աշխատանք:

Յերեխան առողջ ե, հանգիստ, կանոնավոր զարգանում ե այն ժամանակ, յերբ իր կյանքի առաջին որից կանոնավոր ինսամք ու մնունդ ե ստանում:

Յեթե ոեժիմը կանոնավոր ե, այսինքն յեթե որը կանոնավոր ե բաշխված, յերեխան կանոնավոր կզարգանա:

Այդ պատճառով, ընտանիքում յերեսն գալու առաջին որվանից՝ յերեխան պետք ե խստիվ սահմանված ժամաներին մնունդ ստանա քնի, ողպանա և զրոսնի:

Նորածնին, ծծկեր յերեխային խնամելիս՝ հսկայական նշանակություն ունի մաքրությունը: Մայրը, կամ նրան փոխարինող անձը պետք ե ինքը հաճախ լողանա, հաճախ փոխի սպիտակեղենը, այն պիսի շորեր հազնի, վորը հնարավոր լինի շուտ-շուտ լվանալ:

Անհրաժեշտ ե ամենախիստ մաքրություն այն սենյակում, վորտեղ ապրում ե յերեխան: Սենյակը հարկավոր ե ամեն որ մաքրել՝ փոշին սրբել թաց շորով, և հստակը մաքրել նույնպես թաց փալասով: Սրբելիս պետք ե բաց անել լուսամուտը կամ ողանցքը: Ամառը սենյակի լուսամուտները պետք ե բանալ ամբողջ որը, յեթե հնարավոր ե նաև գիշերը: Զմեռը ողանցքերը պիտի բանալ, յերբ յերեխային զբոսանքի յեն տանում: կարելի յե ողանցքը բաց անել և յերեխայի ներկայությամբ՝ ծանկելով տաք վերմակով:

Այն սենյակում, ուր ապրում ե յերեխան, շող չպիտի լինի, ամենահարմար շերմաստիճանն ե 15-18 աստիճանը:

Վորպիտսի շենքում հեշտ լինի հավաքելը և մաքրություն պահելը, պետք ե այնպիս կահավորել, վորպիտսի այնտեղ ըստ հնարավորության քիչ ավելորդ առակաները լինին, վորոնց վրա փոշի յե նստում: Բնակարանը պետք ե սարքվի ու կահավորվի այնպիս, վոր այնտեղ հարմար լինի ապրելը, բաց ավելորդ մասը զարգացները, մեծ

թվով ծաղկելները, արձանիկները, ավելորդ կարստիքը՝ այդ ամենը միայն ավելորդ աշխատանք են տալիս և գծվարացնում են մաքրություն պահելը:

Ծծի յերեխայի որվա կարգը (ռ.եթիմը): Սովորաբար փոքր, ծծի յերեխան որական 6—7 անգամ կերպարվում ե՝ մկսած առավոտյան ժ. 6-ից: Կերպարելուց առաջ մայրը պետք է լվացվի, լվանա ծծերը, փոխի բարուրնեցը յեթե նա թաց ե, և նստի նրան կերպարելու: Յեթե մայրը կերպարվում է յերեխային պառկած, պիտի նույնպես նաև լվացվի, լվանա ծծերը և մահճակալի վրա յերեխայի տակ մաքուր բարուրացոր գցի, ինչպես դա արգում և ծննդաբերական տանը:

Առաջին կերպակը ուժից հետո յերեխային պիտի պարկեցնել քսելու։ Մայթը պատրաստում է յերեխայի «տուալետի» համար ամեն ինչ։

Յերեխայի «տուալետ»-ը շինել նշանակում է՝ նրան լավ դժուել, լվանալ, շորերը կարգի բերել, շորերը փոխել: «Տուալետ» բառի փոխարեն գործ են ածում նաև «հավաքել» բառը: Գլխավոր «տուալետը» կամ գլխավոր «հավաքումը» կատարում են առավոտյան և յերեկոյան:

Յերկրորդ անգամ կերակրելուց կես ժամ առաջ՝ մայրը վերցնում  
և յերեխային մահճակալից, բայց ե անում յերեսը, վիզը, ձեռքերը՝  
լվանում ածելով յեռացրած տաք ջուրը հատուկ գավաթի կամ ափ-  
սեյի մեջ։ Ավելի հարմար ե, յեթե վորե և մեկը ածում է ջուրը, վո-  
րով մայրը լվանում ե նախ յերեխայի յերեսը, վիզը, հետո ձեռները։  
Ապա մայրը նայում ե յերեխայի ականջները և սրբում ե ականջի  
կունքը թաց, փափուկ սրբիչի ծայրով (առողջ յերեխայի ականջում  
վոչ մի արտադրանք պիտի չլինի։ Մայրը լսափողը չպիտի մաքրի։



Նկար 2. Յերեխայի քիթը սաքը ելք:

Յեթե յերեխայի քթում կեղտ կա, մայրը քիթը սրբում և հետեվ՝ յալ ձևով՝ վոլորած բամբակը թրջում և յեռացրած ջրում կամ թաթախում և վաղինինի յուղում և ամեն մի քթածակը մաքրում և առանձին բամբակով (նկար 2):

Յեթե յերեխայի աչքերը չեն թարախակալում, մայրը չի լվանում  
աչքերը։ Շատ հաճախ քնից հետո՝ յերեխաների աչքերը ճպսոտում  
են. այդ դեպքում սովորաբար բավական ե յերեսը լվանալիս յեռա-  
ցրած ջրով. առանձին բամբակով լվանալ ամեն մի աչքը՝ սրբելով աչ-  
քի արտաքին անկյունից դեպի քիթը։

Յերեխայի բերանը յերբեք չեն սրբում բացառությամբ, յերբ կոնսլտացիայի բժիշկը բիրնի բժիշկություն և նշանակում:

Յերեխայի բերանը վոչինչ չպիտի դնել բացի մաքուր լվացած ծը-  
ծակից, փորպեսզի կեղա չնկնի բերանը և հիվանդացնի յերեխային:  
Դա առանձնապես վերաբերում է խարուսիկ ծծակին, վոր մայրելը  
տալիս են յերեխաներին: Խարուսիկ ծծակ չպետք է տալ: Պետք է և  
կարելի յե յերեխայի համար այնպիսի ռեժիմ ստեղծել, վոր յերե-  
խան հանգիստ լինի առանց ծծակի:

Անհրաժեշտ է մատնանշել յերեխայի շուրջթերը համբուրելու մասակար սովորությունը: Հասակավորների բերնում և քիում միշտ գտնվում են բազմաթիվ միկրոբներ, վորոնք համբուրելիս կարող են ընկնել յերեխայի բերանն ու քիթը և հիվանդացնել նրան: (Գրիպ, անգինա, գիֆտերիտ և այլն):

Ամեն առավոտ մայրը նայում և յերեխայի մաշկը և յեթե կարմ-  
րություն կամ դալուկություն և նկատում բամբակը թաթախում և  
արևածաղկի կամ վազիլինի տաքացրած յուղի մեջ և քսում և կար-  
րած ու դալկացած տեղերին ու մի բարակ շերտ տալկ և ցանում:  
Ավելորդ տալկը գունդ և դառնում և փչանում և մորթը: Փոշին ցան-  
փում և հետեյալ կերպ. լցվում և մաքուր բանկայի կամ փոքրիկ բա-  
ժակի մեջ, բերանը կապվում և մարլայով, այդ մարլայի միջով փոշին  
ուղղակի թափ են տալիս յերեխայի մաշկի վրա: Վերջացնելուց հետո՝  
մարլայի վրայից պետք ե ծածկել մաքուր պնակով, զորպեսզի փոշին  
չմտնի:


Մաշկի խնամքի գործում մեծ նշանակություն ունի յերեխային լողացնելը: 3-5 ամսական յերեխային անհրաժեշտ ե շուտաշուտ լողացնել, հնարավորության դեպքում ամեն որի կողացնել կարելի յե որվա վոր ժամանակ ուզեք, ավելի հարմար ե յերեկոյան՝ ժամը 9-ին կերպակրելուց առաջ:

Լողացնելու համար պետք է պատրաստել վաննա, կոնք կամ յին-  
կապատ տաշտակ, վոր պիտի տաք ջրով լավ խոզանակով ու սալինով  
լվանալ: Ցերեխսայի լողանալու վաննան, կոնքը կամ տաշտակը հնա-  
րավորության դեպքում չպիտի բացնեցնել վորեւ ուրիշ նպատակի,  
որինակ լվացքի համար:

Նախ վաննայի մեջ լցնում են տաք ջուրը, վորպեսզի նա սպանի վաննայի մեջ յեղած միկրոբները: Վաննայի մեջ ցուրտ ջուր խառնելուց առաջ պետք է պատրաստել՝ անհրաժեշտ իրերը: Յերեխային սրբելու, հաղցնելու և փաթթաթելու համար: Մայրը պատրաստում եմ մաքուր սպիտակեղինը, սրբելու համար ցանկալի յեթակ սրբիչ կամ տաք սպան, ծալրահեղ դեպքում թեթև բարուրացոր:

Վաննան նստարանների կամ աթոռների վրա պիտի ամուր կանգնի: Վաննայի աջ կողմը սեղանի կամ աթոռի վրա դրվում ե յերեխայի սապոնը մաքուր սապնամանում, ապա մի սափոր ջուր յերե

իսային վողողելու համար: Սափորի մեջ լցվում է 1—2 տատիճան առ վելի տաք ջուր, քան թե վաննայում ե, վորովհետեւ նա կսառչի, մինչեւ վոր մայրը կլողացնի յերեխային: Մայրը հագնում է մաքուր գոգնոց, լվանում և ձեռները, հանում է յերեխայի շորերը, դնում ե կեղտոտ սպիտակեղենը հատուկ քսակում: Ապա մայրը տաք ջրին խառնում ե ցուրտը:



Նկար 3. Վաննայում ջրի ջերմաստիճանը չափելը:

Զրի ջերմաստիճանը պիտի վորոշել վոչ թե ձեռքով, այլ ստուգված ջերմաչափով (նկար 3): Զրի ջերմաստիճանը պիտի լինի 35—36 աստիճան: Վանսան այնքան ջուր պետք է ածել, վորպեսզի յերեխայի մարմինը ծածկվի ջրով: Լողացնելիս յերեխայի գրաւուս պետք է ընկած լինի մոր ձախ նախաբաղուկի<sup>1</sup>) վրա, իսկ մարմինը ջրով ծածկված: Մայրը յերեխային միանդամեց չի կոխում ծվեց, զորպեսզի նա չվախենա: Յերեխային ձախ ձեռքով պահելով՝ մայրն աշ ձեռքով սապնում և յերեխայի գլուխը: Յերեխային պիտի լողացնել միայն մաքուր լվացած ձեռներով: Սպանդ կամ բուժաղեց չպիտի բանացնել՝ դրանց ավելի զժվար և լվանալ քան թե ձեռները:

Յեթե զլսին թեփ կամ կեղեկներ կամ, ապա դա հարկավոր չե պոկել, այլ լողացնելուց քիչ առաջ քսել վագելին, կամ ձեթ, Դրանից թեփը կամ կեղեկիլը հեշտությամբ կպոկվի լվանալիս և մայրն այդ պիսով կմաքրի:

Ապա սապնած ձեռքով մայրը լվանում և վիզը, կուրծքը, կոնսատակիրը, ձեռքերը (առանձնապես ափերը), հետո սկսում են լվանալ մեջը, հետո յշքը, վոտներն ու առանձնապես ուշագրաւթյումը լվանում և աճուկը (վոտների արանքը): Ցերեսը լվանում են առանձին պնակից վերցրած մաքուր ջրով: Ապա յերեխային շուռ են տալիս փորի վրա և սափորից մեջքին են ածում նախորոք պատրաստած մաքուր ջուրը:

Վողողելով յերեխային՝ մայրը նըան դնում և բարուրաշորի վրա, Փոքր յերեխաների մարմինը չորացնելու համար պետք է մաքուր փափուկ բարուրաշորը թեթևակի հպել մաշկին։ Առանձնապես կարելու է, վոր մորթի բոլոր ծավածքները չոր լինեն։

Սապինով յերեխային պետք ե լողացնել 5-որը մեկ անգամից վոչ ավելի։ Սապոնը ուտիչ չպիտի լինի։


Առաջին վանաները, քանի դեռ յերեխայի պոլտը դեռ չի լավացել, պետք և յեռացրած ջրից պատրաստել. յեռացրած ջրից պիտի վանաներ պատրաստել նաև այն ժամանակ, յերբ մաշկի վրա փոքրիկ խոցիկներ ու վերքեր կան՝ վորպեսզի հում ջրից վերըի մեջ միկրոբներ ընկնեն:

Սենյակում լողացնելիս շոգ և տոթ չպիտի լինի: Լողացնել կարելի յէ ողի այն ջերմաստիճանի դեպքում, վորով յերեխան սովորաբար ապլում ե:

Առողջ յերեխան անընդհատ պիտի քնի գիշերվա ժ. 12 ից մինչև  
առավոտյան ժ. 6-ը: Յերեխան հեշտ ե վարժվում այդ կարգին, Յեթե  
յերեխան գիշերը լաց յեղավ, նրա բարուրը պետք ե փոխել՝ թաց  
լինելու գեղազում: Խսկ յեթեն նա հասդիստ քնում ե, ամբողջ գիշեր  
նրան կարելի յե շուռ չտալ:

Յերեխան պիտի քնի սովորական լույսի տակի Պետք չե սովորեց-  
նել նրան կատարյալ խաղաղության քնի ժամանակի:

Պետք ե ճիշել յերեխայի ինստմքի մի վնասակար սովորության  
մասին՝ դա յերեխային ձեռքերի վրա, հատկապես որորելու համար  
շինած մահճակալում որո-  
րելն եւ:



#### Նկար 4. Ծծկեր լեբեխալի վազումը

տակ հեշտությամբ հավաք վում և բակտերիաներ պարունակող կեղու Բացի գրանից յերկար յեղունդներով յերեխան հեշտությամբ կարող և իր մաշկը վնասել: Ավելի լավ և փոքր մաքուր մէկրատով կտրել յեղունդները: Նախապես պետք և մէկրատը վահանակ տաք ջրով ու սապնով:

Յերեխայի գլուխ մասերը պահանջում են ուշագիր խնամք։ Պետք է ունենալ առանձին սանր ու առանձին փափուկ խողանակ, վորոնցով պիտի սանրել փոքրիկի զլուխն ամեն որ, առավոտյան տուալետի ժա-

<sup>1)</sup> Նախաբազուկ - ձեռքի մի մասը՝ արմունկից մինչև թաթը:

**մանակ:** Սանրն ու խողանակը պիտի պահել առանձին քսակում և լվանալ տաք ջրով ու սապնով:

Յուրաքանչյուր արտաթորելուց հետո՝ յերեխային պիտի լվանալ մաքուր ձեռքով (նկար 4): Փոքրերին, մանավանդ աղջիկ յերեխա-ներին չպիտի հետուքից դեպի սեռական որգանների ուղղությամբ լվանալ, այլ առջնից դեպի հետ, փորպեսզի կեղուը չմտնի սեռական որգանների մեջ: Սեռական որգանները պետք ե լվանալ տաք ջրով, ըստ փորում աղջիկների սեռական հեղքը սրբել չի կարելի:


Դծեր յերեխաների հագուստը: Փոքր յերեխաների հագուստը, ինչպես և հասուն մարդկանց հագուստը պետք ե պաշտպանի ցրտից և կեղուից: Բայտ վորում հագուստն այնպես պիտի լինի ձևած և հարմարեցրած, փոր չխանգարի յերեխայի շարժումները. յերեխայի շարժումների ձնշումը վնասակար և նրանց զարգացման համար: Յերեխայի սպիտակեղենը կարելի յե կարել չթից կամ քաթանից: Կոռուը ըստ հնարավորության պիտի վերցնել բաց գույնի, վորովհետո նրա վրա ավելի լավ կարելի յե տեսնել կեղտը:

Փոքրիկ, ծծի յերեխայի շորը բաց շապիկն ե, այսինքն մի շապիկ վորը մեջի կողմից վերից վար կտրված ե: Յեթե տաք ե, կարելի յե սահմանափակվել մի բաց շապկով. յեթե քիչ ցուրտ ե, ապա այդ շապիկի վրայից պիտի հաղցնել բաճկոնակ, վորը կապվում կամ կոճկում և առջևից: Բաճկոնակն ունի ավելի յերկար թևեր, փոր համառում և մինչեւ թաթերը: Սովորաբար բաճկոնակները կարգում են ավելի տաք կտրից (բաց գույնի բումագեյից կամ տրիկոտաֆից): Յեկ շապիկը, և՛ բաճկոնակն այնպես պիտի փաթաթել, փոր բարուրաշորերը թացանալու դեպքում դրանք չոր մնան:

Յերեխային այնպես պիտի հագցնել, փոր չխանգարվեն նրա շարժումները: Բարուրակապերը միանգամայն անթույլատրելի յեն: Պետք ե վերջնականապես դեն շպրտել մի քանի մայրերի այն համոզմունքը, թե բարուրակապերով ամրացնելով յերեխային, վոտները չեն ծրագում: Վոտների ծոռոթյունը հետևանք է ուսիսիտ (անգիտական հիվանդություն): Հիվանդության: Վոտների և ձեռների վարժության բացակայությունը, փոր ստացվում ե բարուրակապերով կապկապելու դեպքում՝ միայն խանգարում են նրանց զարգացմանը և ավելի շուտ կարող և նպաստել նրանց ծովելուն:


Բաց շապիկը պետք ե բավական լայն լինի թեանցքի և բացվածքի մասում, շապիկի բացվածքը պետք ե լինի մինչեւ վերջը, փորպեսզի ավելի քիչ անհանգուտացնի յերեխային շորերը հանելիս և հացցնելիս: Յերեխային այնպահ աղաս պիտի բարուրել, փորպեսզի նրա վոտների շարժումը ձնշվի, իսկ ձեռները պետք ե բոլորովին աղաս մնան հենց ձննդյան որից:

Սովորաբար ծծկեր յերեխային բարուրում են այսպես՝ մեծ, տաք բումագեյի բարուրաշորի վրա դրվում ե վոչ մեծ մոմեթ, վրան բարակ բարուրաշոր, նրա վրա նստատակի շորը, այսինքն յեռանկյունի կամ անկյունով ծալած քառանկյունի շոր. նստատակի շորը դըրվում ե յերեխայի կոնքի տակ և մեծ բարուրաշորերը պահպանում ե կեղտոտիկուց (նկար 5):




Նկար 5.—Բարուրելու առաջին մոմենտը: Յերեխան պառկած և բարուրելու համար պատրաստած բարուրաշորերի և նստատակի շորի վրա:


Վորտեղ հսարավոր ե, լավ ե նստատակի շորը շինել մի քանի անգամ ծալած մարլայից: Մարլան լավ և ծծում ջուրը և լավ և լվացվում:



Նկար 6.—Բարուրելու յերկրորդ մոմենտը: Փաթաթում են շապիկն ու բաճկոնը, վոտների արանքում դրվում և նստատակի շորը:



Նկար 7.—Բարուրելու 3-րդ մոմենտը: Բարակ բարուրաշորը փաթաթած է յերեխայի մարմին, յերեկում և մոմեթը:




Նկար 8.—Բարուրելու 4-րդ մոմենտը: Տաք բարուրաշորը փաթաթավում և նրա աղաս ծայրերը փաթաթում են յերեխայի վոտների շորչը:

Այսպես փոխելով նրա սպիտակեղենի՝ մայրը հաղցնում է յերեխայի շապիկն ու բաճկոնակը, վոտների արանքն և դնում նստատակի շորը (նկար 6): Հետո փաթաթում է յերեխային նախ բարակ բարուրով, ապա տաքով (նկար 7): Յերկու բարուրաշորերի ստորին ծայրերը փաթաթում են այնպես, փոր յերեխայի վոտները աղատ վիճեն, այլ լինեն ինչպես քսակում (նկար 8): Բարուրաշորերի միջև գրած մոմեթը, պետք ե գտնվի յերեխայի նստատակի տակ: Այդպիսով փաթաթված յերեխան դրվում է մաքուր մահճակալի վրա: 4 ամսական յերեխայի համար վոտաշոր են սարքում բարուրաշորից կամ նրան հաղցնում են հատկապես կարած վարտիկ, յերեխայի համար այսպես ավելի հարմար ե շարժվելը:


Կերմակները պետք ե լինեն լավ լվացվող բարակ և տաք կտորից: Ամառը կարելի յե դորձածել կտորե վերմակ, ձմեռ՝ տաք, բայցից կամ Գլանելից: Բարուրաշոր և բարմակի վերմակները հարմար չեն. նրանք չափազանց տաք են, և դժվար ե մաքուր պահել, այսինքն լվանալ:

Բարմակի և բարմակի վերմակները թույլատրելի յեն տարփա ցուրտ յեղանակին վորպես «վերնաշոր», այսինքն տաք վերարկուին կամ մուշտակին կամ զբասանքի հատուկ քսակին փոխարինելու համար:

Վերմակի տակ անհրաժեշտ է կարել սավան, վորն ավելի հեշտ և փոխելու լվանալ, քան վերմակը:



Նկար 9.—Վարտիկ-բարուրաշորը յերեխաների համար և ամսականից ըստ կլսած:



Նկար 10.—Բաց արած վարտիկ բարուրաշորը:

Յերեխայի գլուխը չի կարելի ծածկել թաշկինակով կամ թասակով: Դա խանգարում է մաշկի մազածածկի ողափոխությունը և քըրտնեցնում է: Յերեխան 4 ամսականից պետք է հագնի վարտիկ-բարուրաշոր (Նկար 9—10), վորպեսզի նա կարողանա ազատ շարժվել: Առվորական բարուրաշորերը խանգարում են ազատ շարժվելուն:

Յերեխայի վոտքերին գուլպա յեն հազցնում, վորը պիտի հաճախ փոխել վորովհետև յերեխան թրջում է: Ման յեկող յերեխաների համար խորհուրդ յենք տալիս կոմքինացիա-վարտիկ և բաճկոն: Աղջիկներին կարելի յե հազցնել այնպես, ինչպես տղաներին, կամ աղջկա շոր, բայց կարճ, վոր չխանգարի շարժումները:

Ամառը յերեխաներին պիտի հազցնել կարճ տրուսիկներ կամ առանց թեների կոմքինացիաներ՝ վզի և կրծքի վրա կտրվածքով: Յերեխան սկսում է ման գալ, նրան հազցնում են կտորից կարած փափուկ վոտքամաններ, իսկ յերը յերեխան սովորում է ման գալ, պետք է հազցնել կաշե վոտքաման՝ տուֆի կամ կիսակոշիկ: Անհամապտասիան վոտնամանը տպեղացնում է վոտները և փշացնում քայլ-վածը:

Յերեխայի զբոսանքը.—Վորպեսզի յերեխան մէծանա առողջ և հանգիստ նա պետք է ամեն որ բավական ժամանակ թարմ ողորում լինի:

Զբոսանքի ժամանակ յերեխային պետք է այնպես հազցնել, վոր

նա չմրսի, վոչ ել քրտնի:

Տարվա ցուրտ յեղանակին բացի այն սովորական հագուստափից, վորով նա պառկում է սենյակում, յերեխային հազցնում են բաճկոնակ:

Վոտներին՝ տաք գուլպաներ առանց վորև և կապիչի: Գլուխը կապում են սպիտակ շորով, վորի ծայրերը չեն կապում զին, այս մեկնում են կրծքին: Ապա յերեխային փաթաթում են տաք բարուրով կամ մաքուր, կրծքին: Ապա յերեխային փաթաթում են տաք բարուրով կամ մաքուր, գործած շալով: Տաք բարուրը պետք է ծածկի յերեխայի գործիքը, բաց թողնելով միայն յերեխը: Հագցրած յերեխային շեղակի դնում են բաց թողնելով միայն յերեխը: Հագցրած յերեխային շեղակի դնում են բաց թողնելով, վրա և այնպես են փաթաթում, վոր գեմքը բաց մնա:

Ամառը զբոսանքի ժամանակ թեթեւ պիտի հազցնել: Գլխին կարե-

լի յե վոչինչ չըաշել կամ հազցնել բարակ սպիտակ գլխաշոր կամ գըլ-խարկ, բայց պետք է հետեւ, վոր գլխարկի փունջը չընկնի ծոծրակին և հուպ չտա: Տաք վերմակի փոխարեն յերեխային փաթաթում են և հուպ չտա: Տաք վերմակի վերմակով, իսկ շոգ որերին՝ միայն սավանով:

Յերեխային զբոսանքի պիտի տանել տարվա բոլոր ժամանակներին և ամեն տեսակի յեղանակներին, անձրեկի ժամանակ պիտի նստել ծածկի տակ: Զմեռը հանդարտ յեղանակին կարելի յե զբունել մինչև 20 աստիճան սառնամանքի ժամանակ: Զմեռը պետք է զբոսանքի սովորեցնել մի քանի բոպե (10—15) և աստիճանաբար սովորեցնել յերեխային զբունելու մի քանի ժամ (4—5), իսկ գարնանն ու ամառը՝ ամբողջ որը: Յեթե սաստիկ քամի յե, պետք է քամուց պատսպարված անկյուն գտնել: Վաղ առավոտվանից մինչև յերեկո կարելի յե զբունել բայց որվա մութ ժամանակ զբոսանքն այնքան ոգտաց կար չե, ինչպես առավոտյան և ցերեկը, յերը յերեխայի վրա լավ ե պղում արեկի լույսը:

Ծծկեր յերեխային զբոսանքի դուրս բերելը պահանջում է մեծ ուշադիր յերեխային զբոսանքի ժամանակ յեթե մահակալը հեշտ և դուրս դրություն: Զբոսանքի ժամանակ յեթե մահակալը վրա պառկած պահանակին կամ ամենից լավը և յերեխային մահակալի վրա պառկած պահանակների հարմար նստարանի վրա, սայլակի մեջ և այլու կամ պառկեցնել հարմար նստարանի վրա, սայլակի մեջ և այլու:

## 6. ՄԵՄԱԿԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱԳՈՒՍԵԸ ՏԱՐՎԱ ՑՈՒՐՏ ՅԵՂԱԿԱԿԻՆ ԶԲՈՍՆԵԼԻՄ

Վոտքերին պիտի հազցնել գուլպաներ, կոշիկներ և ոետուզ (յերեխայի վոտքաշոր): Կրկնակշշիկներ պիտի հազցնել միայն խոնավ կար տաք վոտքաշոր): Կրկնակշշիկներ պիտի հազցնել միայն խոնավ յեղանակին կամ ձևեռը՝ վոտները տաք պահելու համար:

Յերեխայի ձեռքերը պետք է տաք պահել վորովհետև նրանք հեշտությամբ մրսում են մինչև իսկ աննշան սառնամանքի դեպքում, Ռևստի պետք է ունենալ տաք թաթմաններ:

Վերաբրկուն պիտի կարել բամբակե աստառով, կարելի յե և թերեվի մորթե աստառով, վոչ այնքան յերկար, վորպեսզի քայլելու ժամանակ վոտքերը չխճանքի նրանում: Գլխին զրվում է տաք, գործած մասակ վոտքերը չխճանքի նրանում: Գլխարկ բամբակե կամ մորթուց: Թանի զեր յերեխան չի սովորել վլիսարկ բամբակե կամ մորթուց: Թանի զեր յերեխան չի սովորել վլիսարկ հազցնելը, զլուխը պետք է կապել թաշկինապղատ կերպով վլիսարկ հազցնելը, զլուխը պետք է կապել թաշկինապղատ կերպով: Յերեխայի զրտից պաշտպանում են նաև ականջները: Յերեխայի թաշկինակը ցրտից պաշտպանում են նաև ականջները և շարֆեր փաթաթել. նըմի գլխին չի կարելի ծանրը թաշկինակներ և շարֆեր, վորպեսզի ավելի տաքացնում են և խանգարում յերեխայի շարքանք չափից ավելի տաքացնում են և խանգարում յերեխայի շարքանք ժումներին: Առհասարակ ատաք, բրդե հազուսաները շուտով կեղտոտվում է փոշոտվում են. ուստի պետք է ամեն որ մաքրել ու թափ տալ:

Զբոսանքի ժամանակ պետք է հետեւ, թե ինչպես ե համառորեն յերեխան հանգիստ պահում, լաց չի լինում, արդյոք: Յեթե նա համառորեն

անհանգստանում կամ լաց և լինում, ապա կամ թաց և նրա տակը կամ անհարմար ե պառկած և կամ հիվանդ ե: Այդպիսի զեպքերում պիտի յերեխային տուն տանել, նայել յերեխային նրա շորերը, յեթե հնարավոր ե վերացնել յերեխային անհանգստացնող պատճառը և նորից գուրս գալ զբոսանքի:

Մեծ յերեխաները 1<sup>½</sup> տարեկանից հետո կարող են իրենք քայլեն զբոսնելիս նաև շատ ցուրտ որերին:

Տարբեր հասակներում յերեխան զբոսնում ե աարբեր ձեռվ: Համաձայն դրան պետք ե տարբեր ձեռվ կազմակերպել առողջ և հիվանդ յերեխայի զբոսանքը: Հիվանդ յերեխայի համար թարմ ողը հաճախ հանդիսանում ե ամենազլխավոր զեղը: Այդ բանը նկատի առնելով՝ մայրը պետք ե խստիվ կատարի կոնսուլտացիայի ու քրոջ ցուցմունքները, թե ինչպես պիտի ման ածել յերեխային:

## 7. ԶԲՈՍԱՆՔՅԻՆ ԽՄԲԱԿՆԵՐ

Վոչ միշտ մայրը կամ տնեցիներից վորենք մեկը այնքան ժամանակ ե ունենում, վրապեսզի յերեխայի հետ զբոսնի այնքան, վրքան այդ հարկավոր ե նրան: Շատ զեպքերում մայրը ստիպված ե լինում յերե իբագործերով դուրս ե գալիս, յերեխային վերցնել հետը և դա փոխարինում ե յերեխայի զբոսանքին: Վորոշ մայրեր այնպես զբաղված են տնային տնտեսությամբ, վոր նրանց յերեխաները միշտ գտնվում են բնակարանում, չեն ոգտվում ողից, ուստի և մեծանում են թույլ ու հիվանդություն: Այդպիսի զեպքերում յերեխաներին ու մայրերին ահազին ոգուտ են տալիս «զբոսանքային խմբակները»:

«Զբոսանքային խմբակներում» յերեխան ննարավորություն ունի թարմ ողում որական մի քանի ժամ անցկացնելու: «Զբոսանքային խմբակները» կազմվում են մի խումբ յերեխաներից, (5 ից մինչև 12—15), վորոնց հետ լինում ե 1—2 մայր՝ նայած յերեխաների քանակին և հասակին, և հերթով ման են ածում: Մնացած մայրերն ազատ են և կարող են մի քանի ազատ ժամեր զործադրել տնտեսության մեջ աշխատելու կամ ուսման վրա: Ի՞նչպես են կազմվում այդ զբոսանքային խմբակները, կոնսուլտացիայի տեղամասային բժիշկը և նրա ողնականուելին՝ տեղամասային քույրն իմանալով թե վորտեղ վոր տանը կամ բնակկոռպանում մի խումբ վաղ հասակի յերեխաներ կան, կոնսուլտացիայում ընդունելության ժամանակ՝ զրուցելով մայրերի հետ պատմում են նրանց, թե անհրաժեշտ ե յերեխաներին ավելի շատ ժամանակ բաց ողի մեջ պահել, բայց այնպես անել, վոր մայրերը շատ չծանրաբեռնվեն:

Ավելի ակտիվ մայրերը, վորոնք գիտակցաբար են վերաբերվում յերեխայի կանոնավոր կյանքի կազմակերպմանը, իսկույն արձագանքում են բժշկի ու քրոջ խորհուրդներին: Կազմվում ե մայրերի մի խումբ, վորոնք ցանկանում են կազմակերպել զբոսանքային խմբակ: Մի քանի բացարարական զրուցյաներից հետո՝ սկսում են հավաքել յերեխաներին: Այդ նախապատրաստական շրջանում անհրաժեշտ ե պարզել շատ ու շատ ելական հանդամանքներ, վորպեսզի նման զբոսանքի արդյունքը շոշափելի լինի, այսպես:

1) Հաշվի առնել յերեխաների առողջ դրությունը, հասակը և զարգացումը.

2) Նախարարք վորոշել, թե յուրաքանչյուր մայր կարող ե և վորժամերին խմբակում հերթական պիտի անի:

3) Հաշվի առնել ունեցած սարքավորումը.—յերեխաների տաք շուրբը, վոր զբոսանքը չխանգարվի ցրտի պատճառով. վոտնամաններն ու կրկնակղկները, վոր խոնավ յեղանակի դեպքում չխանգարի զբոսանքը այն յերեխաների մահականները կամ սայլակները, վորոնք դեռ ման չեն գալիս, խաղալիքները և մանկավարժական իրերը (սայլակներ, սահնակներ, թիակներ և այլն) խմբակի միացյալ զբոսանքի համար.

4) Տվյալ, կամ հարկան տան բակում կամ պարտեզում գտնել այնպիսի տեղ, ուր կարելի յե հավաքել յերեխաների խմբակն զբոսանքի համար. այդ տեղը պիտի լինի հանգարատ, մաքուր, արտաքնօցից հեռու, ծնողներն ընդհանուր ուժերով պետք ե այդ տեղը կարգի բերին, հավաքեն աղբը, մաքրեն, ավելին (նկար 11):



Նկար 11.—Զբոսանքային խմբակը հերթապահ մոր հետ:


5) Շատ կարենոր ե զբոսանքի վայրում ծածկ ունենալ վորպեսզի յերեխաները անձրեի և ձյունի ժամանակ պատապարվին:

6) Խմբակի կազմակերպման որից պետք ե տաք շենք վորոնել վորովհետեւ խիստ սառնամանիքի և սաստիկ անձրեի ժամանակ կարիք կլինի յերեխաներին տաք բնակարան տանել սովորաբար տրամադրում են տան կարմիր անկյունը, մոր սենյակը, վորը կամովին տախիս ե խմբակին մի քանի ժամով, կամ ակումբում հատկացնում են մի

**ԱԵՆՅԱԿ:** Տաք շենքն առանձնապես անհրաժեշտ է, յերբ կազմակերպվում ե միատեղ մնունք:

7) Շատ կարեոր ե կազմակերպել յերեխաների կոլլեկտիվ մնունք:

Դրա համար պիտի կազմակերպել մայրերից մեկի խոհանոցում կերպի պատրաստումը կամ պատրաստի մնունդ վերցնել մոտիկ մանկամսուրից կամ մննդակայանից (կաթնեղենի խոհանոց): Առհասարակ լավ ե պատրաստի կերակուր ստանալ, յերեխաներն ուտում են կանոնավոր պատրաստած, բազմազան, լիարժեք կերակուր, իսկ մայրեն աղատվում են մթերքների մասին հոգալուց և կերակուր պատրաստելու հոգսից: Յերեխաներին միատեղ կերակրել կազմակերպելը մեծ աղդեցություն ունի յերեխաների ու մայրերի վրա: Յերեխաները սովորում են գը-



Նկար 12.—Զբոսանքային խմբակը ձմեռ ժամանակ:

դալով ուտելուն, կերակուրը ցրիվ չեն տալիս, սովորում են չշտապել չպահանջել վորեւ և զվարճանք՝ իրնց բաժինն ուտելու համար:


Միատեղ մնիելը ամենալավ միջոցն է, վորպեսզի յերեխաներն ախորժակով ուտեն (Նկար 13.):

Զբոսանքային խմբակներ /կազմակերպելու հենց սկզբից՝ բժիշկն ու քույրը ծնողների հետ միասին պետք ե այդ աշխատանքին գրավեն անավարչությանն ու բնակլուսպի կուսկազմակերպությանը: Առանց նրանց ոփության դժվար կլինի վորեւ ե բան անել:

Փորձը ցույց ե տվել, վոր զբոսանքային խմբակների առաջին քայլերը միանդամից նվաճում են հասարակական կազմակերպությունների համակրանքը և ուշադրությունը, հարմար են մայրերի և ոգտակար յերեխաների համար:

Ցեթե կահավորման համար վորեւ բան պակասում է, տպա մայրերը

միջոցներ են ձեռք առնում, վոր անհրաժեշտ իրերը վորեւ տեղից գտնեն, որինակ՝ կերակուր տանելու աման, մահճակալներ և խաղալիքներ: Նման գեակը մեծ գեր ե խաղում մասնակցողների ակտիվությունը. իրերի մի մասը ձեռք են բերում կոնսուլտացիայի բժշկի, վորով և մանկավարժի ցուցմունքով, իրենց՝ մայրերի հաշվին, մի մաքրոջ և մանկավարժի ցուցմունքով, իրենց՝ մայրերի հաշվին, մի մասը տալիս ե տան վարչությունը. վորով զեպքերում ընդառաջ ե գալիս կոնսուլտացիան: Որինակ՝ շատ կարեոր ե խմբակի համար ունենալ վերանդա, այսինքն պարտեզում կամ բակում ծածկած շենք: Դա այսպես են շինուած տան վարչությունը կամ շահագրգոված արտադրությունը տալիս ե փայտեղներ, հայրերը ձրիաբար տալիս են իրենց աշխատանքը շինելու համար, իսկ կոնսուլտացիան փող ե տալիս պակասող նյութերի, որինակ մեխի և ապակու համար:



Նկար 13.—Զբոսանքային խմբակի յերեխաների միատեղ ուտելը:

Աշխատանքն սկսելուց առաջ մայրերին մանրամասն հրահանգում են, թե ինչում պիտի կայանա իրենց հերթապահնությունը խմբակում. հերթապահ մայրը հետեւում ե բոլոր յերեխաների դրությանը, զբացեցնում ե նրանց խաղով ու զբույցով, ժամանակին գուրս ե հանում կերեխաներին, պառկեցնում ե քնիլու, բաժանում ե կերակուրը, հետեւում ե, վոր յերեխաներն ուտեն ամբողջ բաժինը և այլն:

Հերթապահ մայրը պիտի հետեւի, թե արդյոք, յերեխաներից վորեւ կը հիվանդացիկ: Մայրերը վորով ժամին բերում են իրենց յերեկը չի հիվանդացիկ: Մայրերը վորով ժամին մորը և պապ վորով ժամանակ բաժին են նրանց հետեւից: Նայած, թե վորքան զբաղված են մայրեկալիս են նրանց հետեւից: Նայած, թե վորքան զբաղված են մայրերը, բնակլուսպի կացնում ժամը 2 ից մինչև 4-ը:

Կոնսուլտացիայի բժիշկը, մանկավարժը և քույրը բոլոր յերեխաներին, հատուկ հաշվի յեն վերցնում, առանձնապես ուշադրի կերպով

հետեւում են նրանց և հաճախ, սկզբում ամեն որ հաճախում են խըմբակը: Նրանք ոգուում են խմբակը կազմակերպելու աշխատանքին և սանիտարական—կուլտուրական զրույցներ են անում մայրերի հետ: Փորձը ցույց ե տվել, վոր յերեխաները զբոսանքային խմբակներում վոչ միայն առողջանում են, այլև նրանք ավելի քիչ են հիվանդանում ու հեշտությամբ են տանում հիվանդությունները: Կոնսուլտացիայի բժշկի, քրոջ և մանկավարժի զրույցներից այստեղ մայրերն աստիճանաբար շատ բան են սովորում:

Բժշկի ու քրոջ զրույցներից, սեփական փորձից մայրերն իմանում են, թե ինչպես կանոնավոր կերպով խնամել մի քանի յերեխայի, շատ բան են սովորում և յերեխաների դաստիարակության, և հիվանդությունների մասին:

Խմբակում բժշկի նշանակումով և քրոջ ղեկավարությամբ յերեխաներին ոդային ու արևի վաննաներ են անում, վոր շատ ոդտակար են ուսիսի ղեմ մզվող պայքարում:

Խմբակի յերեխաների թիվը հաճախ ավելանում ե, և այն ժամանակ մեկ մայրը չի կարող ղեկավարել, արդեն 2—3 հոգի պիտի հերթապահություն անեն: Հասունանում ե այն անհրաժեշտությունը, վոր խմբակում աշխատի մասնագետ—քույրը. մայրերը պետք ե աշխատեն, վոր կոնսուլտացիան քույր տա խմբակին, և այն ժամանակ խմբակը դառնում ե իսկական մշտական հիմնարկ՝ մանկական հրապարակ:

## 8. ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Մանկական հրապարակում յերեխաները մնում են 6—8 ժամ: Այստեղ աշխատում ե քույրը, բայց 15—20 յերեխայից կազմված խումբը նա մենակ չի կարող կառավարել: Ուստի և մայրերի հերթապահությունն անհրաժեշտ ե նաև հրապարակում:

Հրապարակներն ավելի լավ են սարքավորված, քան թե խմբակները:

Հրապարակի սարքավորման, քույր պահելու և այլ ծախսերը ստացվում են նույն ազգյուրներից: Հրապարակը հասարակ մանկամսուր ե, վորտեղ մայրերը՝ տանտիրուհիները, ծառայողները, ուսանողուհիները հանձնում են իրենց յերեխաներին: Վորպես կանոն, հրապարակում կազմակերպվում ե սննունգը. դրա համար պետք են ամաններ, գույշեր, մեծ կաթսաներ կերակուր բերելու համար, ափսեներ, գդալներ, գավաթներ, ամանեղեններ լվանալու թաս: Յերեխաների համար պետք են անձեռոցիկներ: Դա ձեռք ե բերվում նույնպես զանազան աղբյուրներից, ամանեղենի մի մասը տալիս են իրենք՝ ծնողները:

Բայց դա քիչ ե, պետք են բանող ձեռքեր, այսինքն հերթապահ մայրեր՝ կերակուր բերելու, ամանեղեններ լվանալու և ճաշին հերթապահություն անելու համար: Փորձը ցույց ե տալիս, վոր այդ աշխատանքը շատ դեպքերում միանգամայն համապատասխան և մայրերի

Յերեխաների միատեղ դաստիարակությանը բժշկի, մանկավարժի և քրոջ՝ դաստիարակչուհու հսկողությամբ, նրանց միատեղ և կանո-

նավոր ուտելը, բաց ոդում մնալը.—այս ամենն այնպիս լավ են ազդում յերեխաների վրա, վոր մայրերը գոհունակությամբ են իրենց ժամանակի տալիս այդ աշխատանքին:

Մի քանի ամիս աշխատելուց հետո, մայրերի համար միանգամայն պարզվում ե, թե վորքան ոդտակար են զբոսանքային խմբակները և մանկական հրապարակները, թե վորքան նրանք թեթևացնում են իրենց տնային աշխատանքը և մայրերի համար ազատ ժամանակ են թողնում: Այստեղից ցանկություն ե առաջ զալիս ամբապնդելու այդ խմբակներն ու հրապարակները, վերածելու նրանց տնային մանկամսուրների: Թե կոնսուլտացիան և թե շրջառողջբաժինը՝ լայնորեն ընդդառաջում են այդ ցանկություններին:

Ակտիվիստ—ծնողների և կոնսուլտացիայի համերաշխ ջանքերով, անավարչության և բնակլոոպի կուսակցական կազմակերպությունների աշխակցությամբ՝ կազմակերպվում են տնային մանկամսուրներ: Պետք ե լավ հիշել՝ 1) վոր տնային մանկամսուրներում մայրերը պետք ե ոգնեն, 2) վոր տնային մանկամսուրներում պետք ե գործադրվի այն հիմնական կանոնը, թե յերեխաները ոդում յերկար պետք ե լինեն:

Վորքան լավ լինի յերեխաների համար խմբակներում, հրապարակներում և մանկամսուրներում, վորքան մայրերն ավելի շատ ազատ վեն յերեխաների մասին հոգալուց՝ այնքան ավելի հեշտ կլինի մայրերի համար կատարել իրենց տնային, արտադրական աշխատանքը կամ սովորելը:

Այդպիսով, յերեխաների առողջացումը և նրանց կանոնավոր կոմունիտական դաստիարակությունը ստեղծվում են մայրերի ջանքերով՝ կոնսուլտացիայի հետ միատեղ և իրենց հերթին տանում են դեպի կնոջ ազատազրումը:

Նման զբոսանքային խմբակներ, մանկական հրապարակներ բազմաթիվ բնակլոոպերում արդեն կազմակերպված են. այն մայրերը, վորոնք պատրաստվում են կազմակերպելու նկարագրված հիարկները, նրանց համար շատ ոգտակար կլինի ծանոթանալ արդեն գոյություն ունեցողների աշխատանքի հետ, վերցնել այդ աշխատանքում ունեցած նրանց փորձը:

## ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

# ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր բույսի, կենդանի որդանիզմի կանոնավոր աճման ու զարգացման համար հարկավոր ե վորոշ սնունդ: Այդ հարցի յերկարացյա ուսումնասիրությունը ցույց ե տվել, վոր ծծկեր յերեխայի զարգացման ու աճման համար ամենալավ ու հուսալի սնունդը կնոջ ծծի կաթն ե: Յերեխային պետք ե կերակրել վորոշ կանոններով, և առաջինը, վորի մասին պիտի հոգաւ, դա կերակրող մոր առողջության լավ դրությունն ե և նրա կանոնավոր սնունդը:

Կերակրող մայրը պետք ե ուտի այնքան, վորքան նա կերել ե փիզիկական միջին աշխատանք կատարելիս: Բայց յերեխային տված կաթի փոխարենը լրացնելու համար՝ մոր սննդին պետք ե ավելացնել նաև վորոշ քանակությամբ մթերքներ: Յեթե հնարավոր ե, մոր որդանիզմի այդ կորուսուր լավ կլինի լրացնել կաթով: Յեթե մայրը լավ չի մարսում մաքուր կաթը, կարելի յե խառնել սուրճի ու թեյի հետ և մասամբ այն փոխարինել հացով, շաքարով, յուղով, պտուղներով և ալյն:

Մայրը պետք ե ուտի վորոշ ժամերին և այն սովորական կերակուրը, վորին նա վարժվել ե: Սովորական համեմերի չափավոր քանակը մնասակար չե: Պետք ե անպայման վործածել կանաչեղեն և պտուղներ՝ թե յեփած և թե հում: Վոգելից խմիչքները՝ գարեջուրը, գինին մնասակար են թե մոր և թե յերեխայի համար:

Այնպիսի կարծիք կա, թե պետք ե վորքան կարելի յե շատ խմել, մանավանդ կաթ: Այդ կարծիքը սիրալ ե: Հեղուկի մեծ քանակությունից մոր ծծի կաթը չի ավելանում, Մայրը պետք ե խմի այնքան, վորքան ուղղում ե սիրուր: Սովորաբար ծիծ տվող մայրը ծարավի մեծ զգացում ե ունենում:

### 1. ԿՐՄՔԱՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Կրծքով, կամ ինչպես ասում են բնական կերակրելն ամենալավ սնուցում ե յերեխայի համար: Մինչեւ այժմ, չնայած բժիշկների բոլոր փորձերին, կրծքի կաթին համարժեք կերակուր չի գտնված: Կըրծքով կերակրելիս յերեխան զարգանում և աճում և ավելի լավ, քան այլ սնուցման ժամանակ: Ծծով կերակրելիս յերեխաները սակավ են հիվանդանում փորլությամբ, նրանց մեջ սակավ ե զարգանում ուղիտուր: Յեթե յերեխային կրծքի կաթով են կերակրում, նա ավելի հեշտությամբ և տանում վարակիչ հիվանդությունները: Այսպեղից պարզ ե, վոր յուրաքանչյուր մայր պետք ե ինքը կերակրի իր յերեխային: Բայց վորպեսզի յերեխան մոր կաթը ստանալով առողջ լինի:

և լավ զարգանա՞ անհրաժեշտ ե, վոր մայրը նրան կերակրի կանոնավոր, ժամերով:

Կրծքի կաթը մարսվում ե յերեխայի ստամոքսում և այնտեղից անցնում ե աղիքները մոտավորապես 3 ժամում, դրա համար ել պետք ե կերակրել 3 ժամից մեկ:

Յեթե յերեխան ծիծը ստանում ե անկանոն կերպով կամ ավելի հաճախ, քան թե 3 ժամից մեկ, ապա նրա ստամոքսում կուտակվում ե չմարսված կերակրուր և յերեխան անհանգստանում ե: Իր անհանգըստությամբ յերեխան վիշտ ու ավելորդ հոգս ե պատճառում մորը, զրկում ե նրան քնից, վոր վատ և ազգում ծծմոր առողջության վրա: Անկանոն, անժամանակ կերակրելիս յերեխան կարող ե լուրջ հիվանդանալ:

Անհրաժեշտ ե զիշերը 6 ժամ դադար անել, վորպեսզի յերեխայի ստամոքսը և մոր ծծերը հանգստանան և յերեխան զիշերը սովորի քնիլ: Մինչն յերեք ամսականը կերակրելու ամենահարմար ժամերն են՝ առավոտյան ժ. 6, առավ. ժ. 9, ցերեկվա ժ. 12, ցերեկվա ժ. 3, յերեկոյան ժ. 6, յերեկոյան կ. 9 և զիշերվա ժ. 12-ին: Յերեխային ավելի հաճախ կարելի յե կերակրել միայն բժշկի թույլտվությամբ:

Շատ դիպքերում, կարելի յե կերակրել ավելի ուշուուշ՝  $3\frac{1}{4}$ —4 ժամը մեկ, այսինքն որական 5—6 անգամ: Կերակրաւան ճշգրիտ ժամացուցակը մայրն ամենից լավ կկազմի խորհրդակցելով կոնսուլտացիայի բժշկի հետ:

Այդ կարգն առանց յերեխային վնասելու կարելի յե փոխել, յեթե մոր համար նրա կենցաղային պայմանների շնորհիվ՝ հարմար ե կերակրելու ուրիշ ժամաբաշխումով: Որինակ՝ կարելի յե առաջին կերակրումը նշանակել առավոտյան ժ. 7-ին, ուայց զլխավորը ցերեկը 3-ժամյա դադարներն են և զիշերը 6-ժամյա դադարը:

Յերբեմն, յերեխան կերակրելու դադարների ժամանակ անհանգիստ ե լինում: յեթե անհանգստության ուրիշ պատճառ չկա, ապա կարելի յե յենթազրել, վոր նա ծարավ ե և կարելի յե տալ նրան 2—4 թեյի գդալ յեռացրած ջուր,—յերեխան հանգարափում ե և համբերատարությամբ սպասում ե հերթական կերակրանը:

Կերակրման տեսողությունը կախված է մոր ծծում յեղած կաթի քանակությունից, ծծալութուկների թուլությունից կամ ամրությունից և հենց յերեխայի գրությունից: Թույլ յերեխային ավելի շատ ժամանակ ե պետք՝ հարկավոր քանակությամբ կաթ ծծելու համար: Ավովորաբար յերեխային ծծի վրա պիտի պահել մոտ 10—20 րոպե: Ավելի տեղական ծծելն աննպատակ ե. դա դատարկ խաղ ե յերեխայի համար, դա մնասակար ե՝ հոգնեցնում ե մորը և նպաստում ե ծծապտուկների վրա ճեղքագծներ առաջանալուն:

Ծծերը պետք ե տալ հերթով՝ մեկ կերակրելիս աջը, մյուս անգամ կերակրելիս—ձախը: Յերկու ծիծը միանգամից կարելի յե տալ միայն բժշկի թույլտվությամբ, ըստ վորում մայրը պետք ե տա նախ այն ծիծը, վորով վերջացրել ե նախորդ անգամ: Յեթե լավ կաթ տալու դեպքում յերկու ծծով միանգամից կերակրեն, ապա ծծի գեղձերը լիովին չեն զատարկում, կաթը նրանցում լանում ե փշանում:

Կերակրելուց առաջ կաթը կրծքից չպիտի քամել, իսկ կերակրելուց հետո պետք ե քամել միայն այն դեպքում, յեթե բժշկը նշա-

սակել եւ կերակրելուց հետո՝ կաթի քամելը անհրաժեշտ է լինում գլխավորապես յերեխայի թուլության դեպքում. յեթե յերեխան կուրծքը մաքուր չի ծծում, զրանից կարող ե պակասել պատրաստվող կաթի քանակը: Յեթե յերեխան վորեւ պատճառով չի ծծում այնքան, վորքան իրեն հարկավոր ե, որինալ՝ թուլության պատճառով, ապա նրան խմացնում են նաև մոր կրծքից կթած կաթ:

Մայրը պետք է կերակրի յերեխային, հանգիս պայմաններում՝ վոչինչ չպիտի դրավի մոր ուշադրությունը:

Յերեխային միշտ պիտի կերակրել շատ մաքուր պայմաններում: Մայրը պետք ե հետեւ իր սեփական մաքրության, հաճախ գնա բաղնիս, հաճախ վորի սպիտակեղենը, մաքուր շոր հագնի այնպիսի կտորից, վորը հետությամբ ե լվացվում: Կերակրող մոր շորը (բաճկոնը) պետք ե այնպես ձևված լինի, վոր հեշտ լինի ամբողջ կուրծքը լվանալու համար: Որական մեկ անգամ կուրծքը լվանում են սապնով:

Կերակրելուց առաջ մայրը լվանում ե ձեռները, ծծապտուկը յեռացրած ջրով և նստարանը դնելով վոտքի տակ՝ նըստում ե կերակրելու: Այդպիսի դիրքով մայրը չի հոգնի ծիծ տալիս: Մայրը պիտի հետեւ, վոր ծիծը չծածկի յերեխայի քիթը (նկար 14): Հենց սկզբից պետք ե սովորեցնել յերեխային, վոր բերնով բռնի վոչ միայն ծծապտուկը, այլև նրա շորջը գտնվող մորթը (ծծապտուկային ըրջանակը), — այն ժամանակ ծծապտուկի վրա սակավ են գոյանում ձեղքվածքներ:

Այն գեպքերում, յերբ յերեխան վատ ե ծծում ծիծը, որինակ, յերբ մոր ծծապտուկները փոքր են, կանոնավոր չեն զարգացած կամ ու երս են ընկած, պետք ե դիմել կոնսուլտացիայի բժշկի խորհրդին:

Յուրաքանչյուր մայր պետք ե կերակրի իր յերեխային ծծով, վորովհետև ծծի կաթից լավ կաթ չկա:

Մինչև իսկ սիֆիլիսով, թոքախտով, դիբբը՝ յերեխան կերակրելիս սակավարնությամբ, զղային և այլ հիվանդություններով հիվանդ մայրերը կարող են ե պետք ե կերակրեն իրենց յերեխաներին, յեթե բժիշկը թույլ ե տալիս:

Ծիծ տվող մայրը պետք ե հոգա իր առողջության մասին, հաճախի կինկոնսուլտացիա: Ընդհանուր ակարության գեպքում՝ անհրաժեշտ ե դիմել ներքին հիվանդությունների բժշկին:

Դրիպով, անդինայով և այլ նման հիվանդությունների գեպքում մայրը կարող ե կերակրել յերեխային: Վորպեսզի յերեխային չվարակի, նա պետք ե խնամքով լվանա ձեռներն ու կուրծքը, թաշկինակով



Նկար 14.՝ Մոր կանոնավոր

կապի քիթն ու բերանը, շատ չթեքվի դեպի յերեխան. — այդպիսով կարելի յե խուսափել յերեխային վարակելուց:

Ծիծ տվող մայրը կարող ե հղիանալ, յեթե մինչև իսկ նրա դաշտանը չի բացվել: Նոր հղիությունը հաճախ վասակար ե ծիծ տվող մոր համար, վասակար ե նաև այն յերեխայի համար: Վորին կերակրում ե ու պտուղի զարգացման համար: Ուստի ծիծ տվող մայրը հնարավորության չափ պետք ե խուսափել հղիանալուց, նա կամ նրա ամուսինը կինկոնսուլտացիայի բժշկի խորհրդով հղիանալու դեմ միջոցներ պիտի գործածեն: Հակաբեր մարման միջոցներ:

Յեթե ծիծ տալու ըրջանում մայրը նորից հղիացել ե, նա պիտի գլմի բժշկի խորհրդին: Իսկ յեթե մայրը պառկում ե հիվանդանոցում վիճելու համար (արորտ), նա հիվանդանոցում պիտի կթի իր կաթը և ուղարկի յերեխային: այդպիսով պահպանվում ե ծծով յերեխային կերակրելու:

Սյն գեպքերում, յերբ մայրը բացակայում ե տնից, չպիտի յերեխային ծծից կարել: մայրը համաձայն իր աշխատանքի ժամերին կարող ե վորոշել ծիծ տալու ժամերը: Յեթե մայրը ստիպված ե ամեն որ յերկար ժամանակով հեռանալ անից և բաց թողնել կերակրելը, ապա նա գնալուց առաջ պետք ե ծծից կթի կաթը: Թե ինչպես պիտի կրծքից կթել կաթը, այդ ցուցմունքը մայրը կստանա կոնսուլտացիայի բժշկից:

Յեթե մոր ընակարանը մոտիկ ե նրա աշխատանքի տեղից, կամ յեթե յերեխան գտնվում ե մանկամսուրում, վորը հեռու չի մոր աշխատանքի տեղից, ապա նա իրավունք ունի և պետք ե վորոշ ժամերին գնա յերեխային կերակրելու:

Յեթե կթած կաթը յերեխան խմում ե գդալով, ապա կթած կաթը բաժակով լավ պիտի ծածկել յեռացրած, մաքուր պնակով և դնել ցուրտ տեղ կամ ցուրտ ջրում:

Յեթե յերեխան կթած կաթը խմում ե շշից ծծակի միջոցով, ապա մայրը կթած կաթը բաժակից լցնում ե մաքուր լվացած և յեռացրած շշի մեջ ու դնում ցուրտ տեղ: Յեթե մայրը կաթը կթում ե շշի մեջ: Շշերը պիտի փակել յեռացրած (ախտահանած) խցաններով, շորի կտորով կամ բամբակով: Ախտահաննել՝ նշանակում ե վոչնչացնել բոլոր միկրոբները, նշանաները, շորի կտորներն ախտահանվում են յեռացնելով, բամբակն ախտահանվում ե հատուկ գործիքներով: շատ հարմար են ձենապակե խցանները՝ սետմինե ըրջանակով և զպանակով վորոնց կարելի յե յեռացնել:

Կերակրելուց առաջ շին զգուշությամբ պիտի դնել տաք ջրի մեջ տաքացնելու համար: Վորպեսզի իմանալ, թե արդյոք կաթը բավականաչափ տաքացված ե, շիշը մոտեցնում են թշի մորթին, յեթե դուրեկան տաքություն ե զգացվում, կարելի յե կաթը տալ յերեխային:

Վոչ մի գեպքում չի կարելի յերեխային տալ նախորդ կերակրումից հետո մնացած կաթը:

Հաճախ գեպքեր են լինում, յերբ յերեխային ծիծ ե տալիս ուրիշ կին՝ յերեխն կարծ ժամանակով, յերեխն պիտի յերկար: Այդ բանը կարելի յե անել միայն շատ մեծ զգուշությամբ: ուրիշ կին՝ ոտար կամ բարեկամ, կարող ե վորեւ վարակիչ հիվանդությունով հիվանդ

լինել, որինակ՝ սիֆիլիսով. յերբեմն եւ, յեթե յերեխան հիվանդ ե սիֆիլիսով նրան կերակրող կինը կարող ե վարակվել յերեխայից:

Յեթե կարեք կա, վոր յերեխային ուրիշը կերակրի, ապա այդ կնոջը պետք ե յենթարկել բժշկական մանրամասն քննության՝ թոքախտի, սիֆիլիսի, տրիպերի, մաշկի հիվանդությունների նկատմամբ։ Յեթե յերեխային կերակրում են բավականաչափ շընչված կնոջից կթած կաթով, ապա կաթը պիտի յեռացնել մի բոպեյի ընթացքում։

Անցյաներում նման դեպքերում դիմում եյին այսպես կոչված ծծմոր ովն ության։ Ծծմայր եյին գառնում կամ յերեխա ունեցող անտեր մենակ կամացյք կամ այնպիսի կանայք, վորոնք իրենց յերեխային թողել եյին զյուղում կամ ուղարկել մանկատուն։ Մեծ մասսամբ յերեխան գուղղում մեռնում եր վատ խնամքից կամ անկանոն սրնվելուց։ Այժմ վոչ մի կին ծծմայր չի գնա մի ընտառիք՝ մի յերեխայի մոտ, վորովհետեւ մեղ մոտ իրավագրկություն և գործազրկություն չկա, վորոնք ստիպում եյին կնոջը թողնելու իր յերեխային, վաճառելու իր ծծի կաթը, ներկայումս ծծմերներ կան միայն մի քանի մանկական հիմնարկություններում։ Այստեղ նրանք աշխատում են վորպես պրոֆմիտության իրավազոր անդամ, յերեխան գտնվում ե իրենց մոտ, նրան լավ ինամում են, նա այնքան կաթ ե ստանում, վորքան իրեն պետք ի։ Մնացած կաթը մայրը տալիս ե հիվանդ յերեխաներին ու փորբերին, վորոնք գտնվում են այն մանկական հիմնարկությունում, ուր նա աշխատում ե։

Բաղի այդ՝ կան նաև կնոջ կաթի հանձնման կետեր։ Այստեղ գալիս են այն մայերը, վորոնք կաթի ավելցուկ ունեն, կթում են, դրա վճարը ստանում են փողով ու մթերքներով այլ և համարվում են հիմնարկության աշխատակցունի։ Այստեղից կաթը բաժանում են հիվանդ յերեխաներին։ Ժամանակին տված կնոջ կաթը փրկում ե յերեխային մասից, որինակ ամառային մանկական փորլուծության դեպքում։ Շատ մայրեր տալիս են կաթի ավելցուկը, վորպեսզի ոգնեն կոնսուլտացիային՝ մեծացնելու հիվանդ յերեխաներին։

Ինքն ըստ ինքան հասկանալի յե, վոր մոր իր յերեխան դրանից չպիտի տուժի։ Կոնսուլտացիայի բժիշկը խնամքով հետևում ե այդ հանգամանքին։

Կրծքով կերակրելիս կարող ե պատահել չնախատեսնված արգելքներ ու բարգություններ՝ թե մոր և թե յերեխայի կողմից։ Այդ բոլոր արգելքները վերացնում են կանացի ու մանկական բժիշկների ոգնությամբ։ Մայրը չպիտի դիմի վոչ մի «տառային միջոցների», այլ բոլոր հիվանդությունների դեպքում՝ պիտի դիմել կոնսուլտացիային։

Մի քանի դեպքերում, որինակ ծծապտուկների հիվանդության դեպքում (ձեղքվածքներ, եկիդնա) յերեխային պիտի կերակրել մակագիրի (նա լադկա) միջոցով։

## 2. ԽԱՐԵ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Բայց պետք ե իմանալ, վոր մակաղերի միջոցով յերեխայի համար գժվար ե ծծելը և նա կարող ե քաղցած մնալ։ Դրա համար ել չի հանձնարարվում յերկար ժամանակ մակաղերը դործածելը։

Յեթե մոր կաթը քիչ ե, յեթե նա ստիպված ե բավական յերկար

ժամանակ տնից բացակայել աշխատանքի գնալիս և չի կարող կթել կաթը, չի կարող տուն գալ յերեխային կերակրելու համար աշխատանքի տեղը անից շատ հեռու լինելու պատճառով, ապա կոնսուլտացիայի ղեկավարությամբ յերեխային խառը կերպով են կերակրում։

Խառը կերպով կերակրելը կատարվում ե այսպես՝ մեկ կամ մի քանի կերակրումը փոխարինվում ե կովի կաթի խառնուրդով կամ ծիծ տալուց հետո՝ յերեխային լրացուցիչ կերպով կերակրում են արհեստական խառնուրդով, ամենից լավ ե զգալով։

Վորպեսզի իմանալ, թե արդյոք, հաջողությամբ ե կատարվում խառը կերակրումը, անհրաժեշտ է յերեխային կանոնավոր կշռել, ավելի ի խնամքով քան թե բնական կերակրման դեպքում, և հետևել կոնսուլտացիայում յերեխային։ Յեթե չի կարելի յերեխային ամբողջովին տալ արհեստական կերակրում, յեթե նույնիսկ կրծքում մի քիչ կաթ կա։ Կանոնավոր խառը կերակրման դեպքում՝ սովորաբար յերեխաները ավելի լավ են զարգանում։

## 3. ԱՐԳԵՍՏԱԿԱՆ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Յեթե վորեւ պատճառով մայրը չի կարող ծիծ տալ (մահ, ծանր հիվանդություն, կրծքի մկանների ֆնաս) և չի կարելի ձեռք բերել այլ կնոջ կաթը, ստիպված պիտի դիմել արհեստական կերակրման։

Յերեխային արհեստական սնունդ կարելի յե տալ միայն կոնսուլտացիայի բժշկի ղեկավարությամբ։ Յերեխայի կյանքի առաջին շաբաթներն ու ամիսները արհեստական կերակրումը վտանգավոր ե։ Այն յերեխաները, վորոնք վաղ են անցնում արհեստական կերակրման, տրամադրիլ են հիվանդանալու, փորլուծություն և ուսիսիտ ստանալու ու վատ են, տանում հիվանդությունները, քան թե խառը և կրծքով կերակրված յերեխաները։

Շատ հաճախ ծիծ կաթը փոխարինում են կովի կաթով՝ խառնելով ջրի կամ բուսածառի ոտքար (ոտքար) հետ, ավելացնելով շաքար։ Այն տեղ, ուր կովի կաթ չկա, կարելի յե բանեցնել այծի և իշուկի կաթը Ամենից լավ ե, յեթե մայրը արհեստական խառնուրդները ստանում ե կաթնային խոհանոցից։ Կաթնային խոհանոցում խառնուրդները պատրաստվում են լավ, ստուգված կաթից՝ գիտության բոլոր կանոններով, կոնսուլտացիայի բժշկի հսկողությամբ։ Բժիշկն ուսումնասիրում ե յերեխայի պահանջը սննդի նկատմամբ և յուրաքանչյուր յերեխայի տալիս ե հատուկ կերակրատոմ։

Մայրը կաթնային խոհանոցից սնունդ ստանալով՝ համոզված ե, վոր գա լավ վորակի յե և աղատվում ե պատրաստելու հոգսից։ Մայրը պետք ե հետաշրջբարվի յերեխայի ստացած կերակրի վորակով և իմաստ նրա ճիշտ համը։

Կաթնային խոհանոցից սնունդը տալիս են բաժիններով, բերանը պինդ փակած շշերում։ Շշերը բերելով տուն՝ մայրը պետք ե նրանց պահից ցուրտ տեղ։

Այնուղղ, ուր սառցարան կամ ցուրտ մասան կա կաթը դնում են սառցարանում։ Քաղաքներում սովորաբար այդ բաները չկան, Յեթե ամենից հարմարն ե ոգտվել սենյակային սառցարաններով։ Դրանք

պատրաստի վաճառվում են կամ տանն են շինում: Ամենահասարակ հարմարությունը.—դա դույլն ե, վորի մեջ դնում են սառույցն ու շերը: Դույլը դնում են մի արկում ու շուրջը պատռմ խոտով կամ ծղնոտով կամ մանր կտրտած յոլտով, տաշեղով, թեփով: Դույլը փակում են կափարիչով և վերկից դնում են ծղնոտի, տաշեղի կամ թեփի բարձ: Խոտը կամ ծղոտը վատ են հաղորդում տաքությունը և սառուցը ամբողջ որը չի հալչում:

Յեթե սառույց չկա, ապա շերը դնում են սառը ջուր լցրած մածանում ու այդ ջուրը հաճախ փոխում են, կամ ամանը դնում են ջրմուղի ջրի հոսաքի տակ:

Յեթե մայրը կերակուրը պատրաստում է տանը, նա պիտի հոգա վոր ստանա առողջ կովի լավ անարատ, թարմ կաթի: Ներկայումս Միության քաղաքներում շուկաներում սանիտարական հսկողություն ե սահմանված, վորն ստուգում ե կաթի մորակը: Մի քանի տեղերում լավ, յերեսը վրան կաթ են բաժանում կաթնային խոհանոցներում կամ կոռուբատիվների միջոցով: Շուկայի կաթն ավելի հաջողությամբ վերահսկողության յենթարկելու համար՝ մայրերը չպետք ե կաթ վերցնեն այն կաթնավաճառներից, վորոնց կաթը բժշկական հսկողության չի յենթարկված:

Կաթնային խառնուրդներ պատրաստելու համար առանձին ամանեն ե հարկավոր 1) կաթը և բուսաջուրը յեռացնելու կաթսա, 2) քամելու մաղ, 3) ապակե կամ եմալի ձագար, 4) 2 բանկա կափարիչով կրուպայի և շաքարի համար, 5) մեծ կաթսա շերում կաթն ախտահանելու համար: Նախ պատրաստում են բուսաջուր կոնսուլտացիայի բժշկի մասնանշած կրուպաներից հետևյալ ձևով: Պետք ե մաքուր կաթսայի մեջ դնել 1 թեյի գդալ նախապես լվացած կրուպա, ապա լցնել 2 բաժակ ջուր, ավելացնել աղ դանակի քթով և յեռացնել վոչ թեժ կրակի վրա մոտ 45 րոպե: Ապա պիտի քամել, հուպ չտալով, մաքուր մարլայի կամ մաքուր մաղի միջով: Պիտի ստացվի մի բաժակ բուսաջուր: Յեթե քիչ ստացվի պիտի ջուր ավելացնել:

Ապա կաթը խառնում են բուսաջրին՝ բժշկի նշանակած չափով, ավելացնում են շաքար, քամում են ամբողջ խարնուրդը, լցնում են շերի մեջ, փակում են ճենապակու խցանով կամ բամբակով, վորը պահում ե մաքուր փակ բանկայում: Շերը դնում են կաթսայի մեջ, ածում են այնքան ջուր, վոր շերի  $\frac{3}{4}$  մասը ծածկի ջրով, դնում են կրակի վրա, ջուրը յեռացնում ու ձմեռը պահում են 5 րոպե, ամառը 10 րոպե: Վորպեսի շերը չկոտրվեն ու չշարժվեն, նրանց տակ են բանաց արանգում դնում են մաքուր փալամաներ: Այդ նպատակի համար հարմար ե ունենալ հատուկ ենարան, իսկ ամենից լավը և Սոկոլիտե հատուկ ապարատը:

Կաթսան վերցնում են կրակից և միանգամից չեն թափում տաք ջուրը, այլ ստիճանաբար տաք ջուրը ցրտով փոխարինում են: Շատ հարմար ե կաթսան դնել ջրմուղի կոնքում և զգուշությամբ ծորակից բաց թողնել յուրու ջրի բարակ հոսանք: Յերբ շերը բոլորովին սառչեն, կաթսայի շերը սառը ջրով լցված, մի հով տեղ դնել կամ սառցարան տանել:

Կերակրելուց առաջ վերցնում են մեկ շիշ, տաքացնում են մինչև

Ծծեր յերեխան, մահակալի վրա պարկած խաղում ե իր ձեռքերի վոտքերի հետ, խաղում ե իր սեռական որգանների հետ: Մի անգամ դյուրեկան զգացում ստացավ՝ սկսում ե հաճախ դիմել այդ միջոցին: Ոնանիզմը յերեխն առաջանում ե սեռական որգանների կեղտոտության, փորկապության հետևանքով միզամանի վրա յերկար նստելուց՝ արյունը ուժգնորեն դեպի սեռական որգանները հոսելուց, նեղ ձգվող վարտիկը սեռական որգանին շփվելուց, վերջապես աղջիկները այսպիս կոչված փոքրիկ զլիստ՝ ոստրից են ունենում, վորը քոր առաջացներով սեռական որգանի անցքում՝ կարող ե պատճառ դառնալ ոնսնիզմով զրաղվելու սովորության:

Բայց հաճախ ծոնղները իրենք են աջակցում յերեխայի մեջ այդ վաղ զգացմունքի առաջանալուն, յերեխային պարկեցնում են իրենց հետ մահակալի վրա, գուրգուրում, շոյում, համբուրում են, խուտուտ են անում յերեխային և սինչե անգամ խաղում են յերեխայի սեռական որգանի հետ:

Վնամ և արդյոք ոնանիզմը յերեխայի առողջության համար: Գիտնականներն ասում են, վոր ոնանիզմը յերեխաներին վաս չի տալիս, վոչ թե ոնանիզմն ե պատճառ զառնում յերեխաների ջղայնության, ինչպես այդ մտածում են շատ ծնողներ, այլ ընդհակառակը հարբեցող և ջղային ծնողների յերեխաները ավելի շուտ են հակված դեպի ունանիզմը:

Յերեխայի ընդհանուր զարգացման համար, ոնանիզմը վասակար և վտանգավոր և այն տեսակետից, վոր նա յերեխայի ուշագրությունը զրավում ե կենդանի գործունեությունից, դեպի իր շրջապատը կեն-

դանի հետաքրքրություն ունենալուց և այն բոլորի հանդեպ, ինչ վոր զարգացնում ե յերեխային: Զգացումները իր մեջ վերապրելով՝ ոնանիզմը ծանրաբեռնում ե յերեխային: Ոնանիզմը վտանգավոր ե և այն դեպքում, յերը մեծերը, ծսողները, անպատրաստ լինելով յերեխայի դաստիարակության գործում՝ սկսում են ամաչացնել յերեխային, ամեն կերպ սպառնում ե պատճում են յերեխային: Ոնանիզմով զբաղվելու այդ սովորությունը ձեռք բերած յերեխան, վոր մինչեւ հիմա անում եր ազատ, ծնողների ներկայությամբ՝ այժմ վախենալով ծնողը ներից՝ ամփոփվում ե իր մեջ, ամեն ինչ գտղտնի յեւ անում, անվերջ սպառնալիքից և պատճվելուց յերեխան զառնում ե յերկշոտ, ընկածված, գիշերները վատ ե ծնում, մթությունից վախենում ե. յերեխան կորցնում ե իր առույդ և ուրախ տրամադրությունը—այս բոլորը յերեխային անուղղելի վաս են հասցնում և մինչեւ անգամ կարող են պատճառ դառնալ ջղային լուրջ բորբքման:

Ծնողները պետք ե միշտ նախազգուշական միջոցներ գործադրեն, վոր պեսզի յերեխայի մեջ չառաջանա ոնանիզմը: Դրա համար հարկա վոր ե.

Երդ մաքուր պահել յերեխայի սեռական որգանները, յերեխայի համար չկարել սեռական որգաննը ձգող նեղ վարտիկներ, և ամսական յերեխային հազցնել վարտիկ-բարուր, վորպեսզի յերեխայի սեռական որգանները ծածկված լինեն. տղա յերեխաների շալվարի առջեկից անցք շանել, ինչպես աղջիկներին, նույնպես և տղաներին միզելիս նստացնել, և թույլ չտալ ձեռքով քաշի անդամը գուրս հանի, յերը պարկած եք յերեխային մենք վերցնի ձեղ մոտ մահակալի վրա, համբուրելով, գուրգուրելով, խուտուտ անելով միք զարթեցնի յերեխայի մեջ վաղաժամ զգայականություն: Գլխազօրն այն ե, վոր ստեղծվի յերեխայի համար առույդ, ուրախ, լի գորուծնեությամբ մի կյանք. թույլ տալ յերեխային շատ շարժվելու, խաղալու, հեաաքրքրել յերեխային իր շրջապատով, իսկ նրա համար լավն ե յերեխային տեղավորել կուլեկտիվի մեջ, մուռում, զբոսանքի խմբակներում:

Իսկ յեթե յերեխայի մեջ առաջացել ե այդ սովորությունը, ապա հարկավոր ե.

Յերեխայի ուշագրությունը զրավել վորև և հետաքրքիր զբաղմունքով, քան ոնանիզմն ե: Քնելուց առաջ զբոսնել յերեխայի հետ, սաքը բել սենյակի ողը, յերեխային շատ տաք չծածկել, վոր նա շուտ քնի

Ծնողներին նախազգուշացնում եյինք, վոր շատ գայակներ յերեխային քնացնելու, կամ իրենց զգայականությունը բավարարելու համար սովորեցնում են յերեխային ոնանիզմի: Շատ մայրեր կոնսուլտացիա յեն գալիս նման գանգատներով իրենց գայակների վոր:

Յեթե մայրեր թույլ ե տվել մինչեւ ուշ հասակը, յերեխային մինչեւ 1 և 1½ տարեկանը ծծելու դատարկ ծծակը, ապա յերեխն հաջողվում ե յերեխայի աչքի առաջ ծծակը վառարանը գցել, կամ պատճունանով դեն շարտել, և նա կոսվորի: Յերեխան հաշտվում ե այդ տիրուր անհրաժեշտության հետ, մի քանի որ տիրուր ե և զործը զրանով ել

## 7. ՅՐԹ ԱՄՍԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆ

Յերեխայի շարժումը այսպես թե այնպես վորոշ նպատակ ունի, յերեխան որինակ չորհքթաթ և անում դեպի գետին ընկած գնդակը կամ մեկնվում է, մի վոտքով մագլցում և սեղանի վրա գտնվող դեպի իրեն հետաքրքրող առարկան, գլխով և ամբողջ մարմուկ լըջում և դեպի առարկան, վորոնում և ընկած խաղալիքը:

Յերեխան արդեն կարողանում է հասկանալ, վոր թոկից ձգելով կարող և դեպի իրեն քաշել այն իրը, վորը զրավում և իր ուշադրությունը բայց հեռու յերեխած իրենից:

Ընդորինակելով մեծերի շարժումները, յերեխան կարող է «ծափծափ» անել «միշտ պատրաստ», «ցտեսություն» անել ձեռքի նշանով և այլն:

Մի տարեկան յերեխան, արդեն հասկանում է «չի կարելի» կամ «չե՛, չե՛» խոսքը: Նրա խաղը հետազոտական բնույթ և կրում, խաղալով՝ նա փորձեր և անում, նա սեղմում և ուեղիսի խաղալիքը, նա խփում և մի խաղալիքով մյուս խաղալիքը, նամը տեսնում բերանն և տանում, հատակի վրա և գցում, կարծես թե տարածությունն և ուղում իմանալ, համեմատում և ձայները խփելով բանալիով պահարանին, ջրամանին: Խաղալուց, նա վորոնում և թաղցրած խաղալիքը, մեծերի կամ իր յերեսին ծածկած բարուրը դեն և գցում և ուրախանում ե, վոր տեսնում ե: Մեծերի ուսերի վրայից «կու-կու» թագնվելու խաղն և խաղում և գտնելով բարձրածայն ծիծաղում:

Յերեխայի ճիշտ զարգացման համար անհրաժեշտ են նման խաղերը և ողտակար, նրանք զարգացնում և մեծ ուրախություն են պատճառում:

Մեկ տարեկան յերեխան սովորում է կանգնել, վեր կենալ, աշխատում և առաջ շարժվել, բանում և մահճակի պատերը, նստարանից թոչում և մահճակալի վրա, մի ձեռքով բռած մահճակալը կամ աթոռը ման և գալիս, առաջ և շարժում աթոռը, առանց հենարանի, ման և գալիս ինքնուրույն: Սովորելով վորե և շարժում անելը յերեխան առանց հոգնելու կրկնում և այդ շարժումները:

Յերեխան կարողանում է առարկաները ձեռքերի մեջ պահել: Միշտ մանակ խաղալիքը խաղալիքին և խփում: պատռում և թուղթը, դեն և գցում իրերը, խաղալիքները հավաքում և թասի կամ արկղի կի մեջ նորից և հանում այդտեղից:

**ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ, ՎՈՐՊԵՍՁԻ ԱԶԱԿՑԵՆՔ ՅԵԲԵԽԱԱՅԻՆ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԱՐԴԱՐԱՆԱԼՈՒ.—ԱՆՀՐԱԺԵՇ և ստեղծել համապատասխան պայմաններ. ձեռք բերել 120 կամ 140 սանտիմետր յերկարությամբ 50—55 սանտիմ. Կողքերի բարձրությամբ մահճականեր, վորպեսզի հնարավոր լինի մահճակալի մեջ մենակ և հանգիստ թողնել:**

Ամառը բաց ողում չոր տեղ, գետնին մաքուր սավան փոելով՝ յերեխային կարելի յերեխային խաղալու, խոկ ձմեռը սենյակում տաք վերմակի վրա զնելով՝ թողեք խաղա: Միայն յերեխայի չորս կողմը պետք ե շրջապատել առարկաներով, վորպեսզի իրերից բռնելով՝ վեր կենա և կարողանա ման գալ շուրջը:

Իսկ ամառը կարելի յերեխան այսպես կոչված վարժարան, վերցնել 4 կարճ փայտ, անկյուններից ամրացնել կոկիկ ձողեր, տա-

րածությամբ մոտավորապես  $1\frac{1}{2}$  քառակ. մետր այդ վարժարանում յերեխան կսովորի վեր կենալ և ման գալ:

Յեթե հատակը ցուրտ է, կամ այլ պայմաններ թույլ չեն տալիս յերեխային իջեցնել հատակի վրա՝ կարել յերեխային թողնել մահճակալի վրա, միայն վերցնել անկողինը և փաներ մահճակալի վրա դնել:


Նման կոշտ մահճակալի վրա յերեխան կսովորի ման գալ, ինչպես և հատակի վրա:

Այն հասակում յերբ յերեխան ձեռքը բռնած սկսում և ման գալ, պետք և արամադրել նրան թեթև աթոռ կամ զլորան վոր նա կարողանա դեպի առաջ չարժել և քայլել:

Ձեռքերով աշխատելու համար, կարելի յերեխան ձեռքը հետեւյալ իրերը, զանազան գույնի յերկու փայտայա գնդինը, զլնագաներ և հատ, և փայտե զղալ, զղալ և թաս կամ մայցարան բարաբան փոքրիկ փայտիկիներ, փայտ և մուրճ, — յերեխան մեկ խաղալիքով խփում և մյուսին, նետում ե, թիվացնում ե, յերեխայի ձեռքը տալ փայտի ամանից զանազան ձեփ խաղալիքներ, կողով, վորպեսզի նա տարսի գուրս հանի խաղալիքները, փայլուն մեծ կոճակները յերեխան ուրախությամբ զոկում հավաքում և այդ իրերը, յերեխայի ձեռքը տալ թուղթ, վորպեսզի նա ձմլի, պատռողի: Յերեխայի ձեռքը չի կարելի տալ շատ մանր իրեր, նրանք կարող են ընկնել յերեխայի քիթը կամ բերանը և խեղդոց առաջ բերել:



Նկար 20. 9 ամսական յերեխան սովորում և վեր կենալ և ման



Նկար 21. Մի տարեկան յերեխան սովորում և ման գալ քաշել խաղալիքների վորանը:

Տնային տնտեսության շատ իրեր ոգտակար կլինեն յերեխային զրադիկուլ համար և կարող են խաղալիքի տեղ ձառայել որինակ գավթը, մետաղյա զղալը, ապուրամանը, տուփերը և այլն: Այս խաղալիքները պետք ե մաքուր լինեն առանց սուր ծայրերի և անվտանգ յերեխայի համար:

Այս խաղալիքները առողջաբանական պետք և լինեն, պետք և լվանալ:

Խաղալիքների հետ զբաղվելով՝ յերեխան շատ բան եւ ձեռք բերում, շատ բան եւ իմանում:

Մահակալի, թէ հատակի վրա խաղալիս՝ յերեխայի ձեռքը յերկու խաղալիքից ավելի չտալ:

Խաղալիքները պետք եւ գնել մտածված, յերեխայի զարդացման պահանջների համաձայն՝ խորհրդակցելով մանկավարժի կամ կոնսուլտացիայի բժշկի հետ:

Յերեխային թողնելով մենակ խաղալիքների հետ ու հնարավորություն տալով նրան ինքն իրեն զբաղվելու՝ մենք աջակցում ենք նրա զարդացմանը: Մեծերը յերեխայի հետ մի սենյակում գտնվելով կարող են իրենց գործով զբաղվել, միայն պետք եւ հետեւ յերեխային: Ապա պետք եւ փոխել յերեխն խաղալիքները յեթե նախկիները ձանձրացրել են, պետք եւ ցույց տալ, թէ ինչ պետք եւ անել խաղալիքի հետ: Սակայն բայց դրանից, մեծերը ժամանակ առ ժամանակ պետք եւ հատկապես զբաղվեն յերեխայով, յերեխային տեղափոխել մի սենյակից մյուսը, մահակալի տեղը փոխել փորպեսզի յերեխան կարողանա նոր առարկաների հետ ծանոթանալ: Յերեխային պետք մոտեցնել պատի ժամացույցին, նրա ուշադրությունը գրավել ժամացույցի չըխկանչիցիցի վրա, յերեխային ցույց տալ կատվին, շանը, խոսել նրանց մասին, թագչելուկ խաղալ, սովորեցնել նրան «ծափ-ծափ» տալ, «պատրաստ յեղիր», և առնասարակ զբաղեցնել այլ սովորական խաղերով:

Բայց չափից դուրս յերկար ժամանակով մեծերի հետ շփվելը, շարունակ մեծերի ձեռքերի վրա գտնվելը, խոսակցությունները, յերգելը, պատուհանից ծեծելը, խուտուտ անելը և այլ «զվարճությունները» հոգնեցնում են յերեխայի ջղային սիստեմը և արգելք կարող են հանդիսանալ յերեխայի հետագա զարդացմանը:

### ՔՈՒՆԾ ՅԵՎ ՈՐԳԱ ԿՈՐԴ ՈՒ ԿԱՆՈՆԸ

Քունն անհրաժեշտ եւ յերեխայի ուժերը վերականգնելու համար. այդ հասակում նա որական պետք ե քնի 3 անգամ  $2\frac{1}{2}$  ժամ արթուն մնալու ընդմիջումով:

Յերեքն քնացնելու ժամանակ նկատում եք, վոր յերեխան շուռ չի քնում, անմիջապես չի հանգստանում, յերեքն վեր եւ թոշում մահակալի մեջ, աշխատում ե գրալել մեծերի ուշադրությունը վոր զբաղեցնեն իրեն: Սակայն յեթե միջու նշանակված ժամերն քնացնեք յերեխային՝ նրա հաւաք սովորություն ե գառնում շուռ քնելը:

Եթե յերեխան քնացնելու ժամանակ վեր եւ թոշում մահակալի մեջ կարելի յե նորից պարզացնել և ձեռքը զնել վոտների վրա: Բայց մի նայեք յերեխայի յերեխին, այլապես նա ելի կցանկանա, վոր զբաղեցնեք իրեն:

### ՈՐԳԱ ՈՐԻՆԱԿԱ ԿԱՐԳԸ

ՈՒՏԵԼԸ. — առավոտյան ժամը  $6\frac{1}{2}$  ին, առավոտյան ժամը 10 ին. յերեկա ժամը 2 ին և  $10\frac{1}{2}$ -ին, յերեկոյան ժամը  $8\frac{1}{2}$ -ին:

ԹԱՅԵՐԸ. — առավոտյան ժամը  $8\frac{1}{2}$ -ից մինչեւ ժամը 10 ը. յերեկա ժամը 12-ից մինչեւ ժամը 2 ը. ապա ժամը 4 ից մինչեւ  $5\frac{1}{2}$ -ը. յերեկոյան ժամը  $8\frac{1}{2}$ -ից մինչեւ առավելու: Էռդացնել վերջին անգամ կերակրելուց առաջ:

Միզեցնել քնելուց առաջ և քնելուց հետո Յերեխան ամբողջ որը ուտում ե 5 անգամ:

Գիշերվա ժամը 12-ին կերակրելը վերանում ե մեջ տեղից:

7-8 ամսականից, անհրաժեշտ ե կերակրելու ժամանակ յերեխային նստեցնել բարձր բաղկաթուի վրա՝ սոտցնելով մեծերի սեղանին:

Մի առարկանին մոտ յերեխան, կարող ե ինքնուրյուն ուտել: Հարկավոր ե նրան հարմար նստեցնել, վոչ այնքան ցածր, տալով նրան թեյի գգալ: Նա կարող ե գավաթը յերկու ձեռքերով բռնած խմել:

Այդ հասակից սկսած՝ յերեխային պետք ե սովորեցնել պինդ կերակուրների:

Յեթե յերեխային պինդ կերակուրներ ուտելու չսովորեցնեք, հետո նա դժվարությամբ ե սովորում և վիճակում կերակուրը: Նրան պետք ե տալ հացի կոշտ մասը, գալեթ, կորտած խնձոր: Բայց պետք ե հետեւ թէ նա ինչպես ե ուտելում, չի կծում արդյոք մեծ մեծ կտորներ չնշափողը խոչ չի ընկնում ու խռացնում:

ՄԻԶԱՄԱ. Վ. Վ. ՆՍՑԵՑՆԵԼ. — 6-ից 7 ամսականում, յերբ յերեխան սկսում ե նստել, հարկավոր ե նրան նստեցնել միզամանի վրա. մինչեւ մի տարեկան հասակը ավելի լավ ե նստեցնել բաղկաթու—միզամանի վրա՝ իսկ հետո կարելի յե ուղղակի միզամանի վրա նստեցնել: Յերեխային միզամանի վրա նստեցնելով՝ պետք ե հասկացնել տալ, վոր որինակ յեթե նա միզում ե, ասել «Փի՞շ փի՞շ», և «Ը-Ը» նա դուրս ե գնում, Յերեխան հետո ինքն ե սովորում այդ հնչունները արտասանել: Այդ ի հարկե չի նշանակում, վոր յերեխան դուրս գնալուց իմաց ե տալիս, բայց սկսում կիտակցության գալ ու զգալ Փիզողողիական անհրաժեշտությունները:

Սովորաբար մինչեւ մի տարեկան յերեխան թացացնելուց հետո ե միայն իմաց տալիս. 1 $\frac{1}{2}$  տարեկան յերեխան կարող ե իմաց տարիսկ 2 տարեկան յերեխան գիշերն անգամ չպիտի միզի տակը: Դրա համար ել մեծերը կանոնավոր ու իր ժամանակին պետք ե նստացնեն յերեխային միզամանի վրա և թույլ չտան վոր յերեխան անկող նում կամ հագուստի վրա միզի:

Կարեփ չկա, վոր գուրս գնալու համար յերեխային բռնել վորե և ամանի վրա, նա կսովորի այդ ձևով գնալուն և այլս չի կամ ենա միզամանի վրա նստել: Գիշերը նույնպիս կարեփ չկա շուտ-շուտ վեր կացնել և միզամանի վրա նստեցնել: Կարելի յե ժամը 12 ին նստեցնել միզելու: Յեթե յերեխան թացացը ե, գրեթ նրա տակը շոր բարուր՝ աշխատելով չարթնացնել նրան: Յեթե յերեխային գիշերը շուտ-շուտ արթնացնեք բարուրները փոխելու համար՝ ապա նա կարող ե սովորել խոր և հանգիստ չընելուն, իսկ դա վատ ե անդրա գառնում յերեխայի ջղերի վրա:

Պատահում ե և այսպիս, յերեխան վոր սովորել եր իմաց տալու միզելիս՝ զադարում ե հայտնելուց: Պատահում ե դա յերեքն կրած հիմանդրություններից, որգանիզմի թուլությունից, յերեխայի ջղային գրությունից: Պատահում են դեպքեր, յերբ յերեխան գիտակցաբար գագարում ե իմաց տալուց:

ՈՒԻՆԾԱ. — 8-րկու և կես տարեկան մի ազջիկ վաղուց արդեն սովորել եր իմաց տալու, մի անգամ խաղով ընկնելով՝ թացացը վարտիկի մեջ զգալով տաք մեզը՝ նրան այնպես գուր յեկավ, վոր նա գիտակցորդակ կերպով իմաց չերեկոյան այն դեպքում, յերբ մեծերը դադարեց:

8 ՅԵՐԵՒԱՆԱՆ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵԿ ՈՒ ԿԵՍ  
ՏԱՐԵԿԱՆԸ

ցին ուշադրության դարձնել յերեխայի չարաճիքությունների վրա և չեյին շտագում փոխելու նրա թաց վարտիկը՝ յերեխայի մեջ նորից վերականգնվեց իմաց տալու սովորությանը, քանի վոր սառը, թաց վարտիկը արդեն անդուրեկան եր:

Յերեխային իր ժամանակին սովորեցնելը միզամանի վրա նստելու մեծ նշանակություն ունի նրա հանգստությունը պահպանելու համար։ Դրա համար ել ծնողները իր ժամանակին պետք ե ձեռք բերեն մեզաման, իր ժամանակին միզեցնել տալ։ Հպետք ե բարկաննալ յերեխայի վրա, չնախտել նրան և ի հարկե չխփել, յեթե յերեխան շուտ չի սովորում նախորոք իմաց տալու, այլապես նա զդայնանում ե, իսկ զդայնությունը խանգարում ե նրան շուտ դուրս դնալու կամ միզելու։ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ. — Ահա մոր հուշատետրում գրի առնված հետաքրքիր տվյալներ, վորից յերկում ե, թե ինչպես յերեխայի սեջ զարգանում ե հասկանալը և խոսելը։

Ութ ամսական 24 որպական յերեխան գիտե թե վարտեղ և հորյուդ-բայրը, հայրը, պապիկը:

ինը ամսականում, յերբ ասում են բաց բերանդ, նա հասկանում է, ինը ամսական 19 որպականում մատով "ցույց և տալիս ատամ-ները, վատիկները:

Տասը ամսական 15 որականում՝ հասկանում և յերբ ասում են—  
մորդ տուր, հօրդ տուր:

Տասնյերկու ամսական 27 որպականում գիտե վորտեղ և վարտիկը,  
գուլպաները, ճանաշում և զգալը, վերալիուն, արեգակը, ձյունը  
«Պա պա», «վա վա», «տա-տա» և ասում:

Իննը ամսական 5 որականում «մա-մա», «նա նա» եւ ասում:

Տասը ամսական 21 որականում՝ «տու-տու» (տուր), 11 ամսականում՝ ա ա, յերբեմն առւբ-ի փոխարեն:

Վարպետութիւն յերեխայի խոսքը նորմալ զարգանա, հարկավոր և  
նրա հետ զբաղվելու Պետք եւ տան այն առարկաների անու-  
ները, վոր նա տեսնում է: Յերեխային հարց-  
նել վորտեղ ե շունը, կատուն, ուր ե մայրդ,  
հայրդ և այլն: Նրա ձեռքերով զործողություն  
կատարել ե ասել, թե ինչ զործողություն ե այդ:  
Որինակ յերեխային ստիպել վորեւ մեկից ա-  
ռաջ կա գերցնի և տեղն ու տեղը ասի՝ «տուր»:



Նկար 22. Հարմար  
հագուստ յերեխալի - հա-  
մար, յերբ նա սկսում է  
ման գալ:

Դեյրան անհարմար հագուստ և յերեխայի հա-  
մար չօրեքթաթ անելու, սղղալու, սանդուխնե-  
րով իջնելու բարձրանալու ժամանակ:

76

ԵԱՐԺՈՒՄՆԵՐԸ. Առողջ յերեխան մի տարեկանում, յերբեմ ավելի շուտ կանգնում ե, բռնելով ասած և շարժվում: Մեկ և կես տարեկանում նա ինքնուրույն ման և գալիս, վլուները փոխելով արագ, առանդ կանգ-առնելու ման և գալիս:

Նայ դուք ի մագլցել բարձր տեղեր՝ բազկաթոռի, մանակալի  
աթոռների վրա, իջնել այն տեղից, բարձրանում և աստիճաններից  
յերկու վոտները մի մի ասահճանի վրա գնելով իջնում և այստեղից:  
Նա սրուում ե պայուսակը, կողովը, բարձերը, մեծ գնդակները քաշ  
տալ: Յերեխան անվերջ շարժումներից չի հոգնում, վարժվում և կա-  
տարելագործում և իր շարժումները:

լազը թու կապած սրբություն է և Տերեխին ինքներդ միք նստացնի, մահճակալի վրա միք զնի, աստիճաններով միք բարձրացնի, յեթե նա ինքուրույն կարող ե անել: Այդ բոլորը ջղայնացնում ե նրան և հնարավորություն չի տալիս նրան կատարելագործելու իր շարժումները: Յերեխային չպետք ե ասել «մի բարձրանա», «հանգիստ նստիր», «մի վազվզիր», շարժունությունը բնական ե ավելի ուշ հասակում: Յերեխային չպետք ե արգելել շարժումներ անկրո, բայց և աչքաթող ել չպետք ե անել պետք ե հետեւ վոր յերեխան չբարձրանա պատուհանի, սեղանի վրա չփսասի իրեն: Դրա համար ել յերեխային այնպիսի իրեր պիտի տրամադրել, վոր մի կողմից բավարարի նրա պահանջները մագլցելու գործում և միևնույն ժամանակ անվտանգ լինի նրա համար Ռիխնակ կարելի յի արամագրել նրան արկղներ, ցածր նստարան, կողովներ փոքր աթոռներ, գլորիչներ: Այդ խաղալիքները յերեխային տալով մեծերը պետք ե հետեւն թե նա ինչպես ե ոգտվում դրանցից, յերեմ պետք ե ցույց տալ, թե ինչ պետք ե անել այդ խաղալիքների հետ թե ինչպես դուրս յենել դժվարություններից:

Յեթե յերեխան ընկալ և յերկում ե, վոր ուժեղ-չի խփել, կարի  
չկա վախ և ցավակցություն հայտնելու, այլ ընդհակառակ՝ հանգիստ  
պետք ե վերաբերվել պատճաճ զեպքին, պետք ե յերեխային համբե  
քություն ու արիությունն սերշնչել, միևնույն ժամանակ թույլ տա  
վոր ինքը վեր կենա:

ԶԵՌՔԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ.—Զեռքի շարժումներն ավելի ճարպիկ են դառնում, յերեխան կարողանում ե փայտը ողակի մեջ հազցնել, մաս տիտը անցգիր մեջ դնել, տուփի, պահարանի դուռը բացում և փակու ե, իրերը դասավորում ե տուփի, թասէ մեջ, հանում ե այնտեղից:

Յերեխայի ձեռքը նոր խաղալիքներ տալով՝ պետք ե ցուցյ տալ խաղալիքներից ոգտվելը, իրերը տուփի մեջ դնել, հանել, բանալ, փակե Յերեխան սկզբում ընդորինակելով՝ սովորում ե խաղալը, Յեթի յերեխան ինքը չի կարող, ապա պետք ե սովորեցնել նրան բաղմազագալճնի իր խաղը:

ԽՈՍԵԼԸ ՅԵՎԱ ՀԱՅԿԱՆԱԾԱԼԸ.—Մի տարեկան 6 ամսական յերեխան համեմատաբար զարգացնում ե խոսքը: Յերեխաները ճանաչում են առարկաները և կոչում են սկզբանական վանկերով (ջու—ջուր, մա—մայրիկ) կամ ձայնանմանությամբ չոփ-չոփ—լողանալը, փիսի-փիսի կատուն, տոպ-տոպ—վոտով ման գալը, մամա—գառը, բամ—կովը: Յերեխն խոսքերի ընդհանուր ձայնն են վորսում, որինակ՝ ոչո-կոշիկը, տոտ—տուր: Մի հնչյունով նա անվանում ե մի շարք առարկաներ: Տու տու—զնացքին, կամ այլ բեռնակիր կենդանիներին, բըղի—շանը, գառնուկին. բոլոր աղջիկներին, յերեխաներին Աչո և անվանում, բացի այս խոսքերից յերեխան մի շարք անիմաստ հնչյուններ և արտասանում, կարծես վարժեցնում ե իր խոսակց-ւթյան գործիքը—լեզուն:

Դժվար ե վորոշել, թե վոր հասակում յերեխան տիրապետում է խոսելուն, այս տեսակետից յերեխաներն ունենում են չատ անհատական առանձնահատկություններ. որինակ՝ շատ յերեխաներ մեկ տարեկան 6 ամսականում համարյա վոչինչ չեն խոսում, իսկ 2 տարեկանում անսպասելի կերպով միանգամբ սկսում են խոսել. 2<sup>1/2</sup> տարեկանում նախադասություններով են խոսում, դրա առիթը հաճախ լինում է միջավայրի փոխվելը. զյուղից քաղաք տեղափոխվելը, կամ ընդհակառակը:

Յերեխայի խոսքի զարգացման վրա զգալի չափով ազդում ե մեծերի խոսակցությունը: Յերեխան սկսում ե վազ խոսել այն ընտանիքում, ուր նրա հետ մեծերը պարզ և հանգիստ խոսակցում են, առանց շտապելու յերեխային ասում են առարկաների անունները, զբաղվում են նրա հետ, հարցնում են նրան՝ ցույց տուր կատվին, ժամացույցը, ճրագը, այլ ծանոթների և ազգականների, հարցնում են յերեխային, մի և սա, ինչ ե սա, ուր չկա առանձին իրարանցում, ազմուկ. այնտեղ, ուր յերեխան կարող ե հեշտությամբ լսել և հեշտությամբ վերհիշել Յերեխայի խոսելու բովանդակությունը և միշտ արտասանությունը կախված ենրանից, թե ինչի մասին և ինչպես են խոսում նրան շրջապատող մեծերը: Յուրաքանչյուր առողջ յերեխա խոսելու դործիք ունի, բայց յեթե նրա շրջապատը համը ե, նա չի կարող խոսել սովորել: Յերեխան նույնպես չի կարող խոսել սովորել, յեթե նա խուլ ե:

Վորպեսզի ոգնեն յերեխային, վոր նա հասկանա, մեծերը խոսելիս հաճախ ընդորինակում են յերեխայի թոթովանքը ընդորինակելով հնչյունը որինակ ասում են՝ «տո-տո» փոխանակ ասելու ման արի, «համ-համ» ուտելու փոխարեն: Հարցավոր ե իր ժամանակին սկսել ճիշտ խոսելը, վոր յերեխան չոսվորի ինքը այդպես խոսել:

ՄՏԱՎՈՐ ԶՈՐԳԱՑՈՒՄԸ.— Մեկ և կես տարեկանում յերեխան մեծ ընդունակություններ ե յերեխան բերում հասկանալու-զլիք ընկնելու, գժվարին գրության միջից գուրս գալու ուղղությամբ:

Ինը ամսական յերեխան կարող ե իր մոտ ընկած առարկայից կապած թելից բանել և քաշել դեպի իրեն: Մեկ տարեկան 3 ամսական յերեխան գլխի յե ընկնում և կարող ե սեղանի վրայի ինձորը փայտով դեպի իրեն քաշել: Դա նշան ե յերեխայի զգալի զարգացմանը: Յերեխան սովորում ե դիմել զանազան գործիքների ովնության, այնտեղ ուր նրա ձեռքը չի հասնում:

Այս ձեղ մեկ տարեկան ժամանակակից յերեխայի զարգացման որինակը (մոր հուշատետրից):

1. Մեկ տարեկան, մի ամսական 19 որական յերեխան վերցնում ե շեմողանը, զատարկում ե միջի իրերը, զնում ե վոտի տակ և բարձրանում է բազկաթոռի վրա:

2. Մեկ տարեկան 4 ամսական 28 որական յերեխան նստարանը մոտեցնում է լվացարանին:

3. Պատահել ե, յերր 1 տարեկան 6 ամսական 22 որական յերեխան, զորպեսզի հասկացնի թե ինչ ե հարկավոր իրեն՝ առաջին անդամ զարձվածք և ասել: Մայրը կառք նստած, յերեխային ծնկերի վրա զրած՝ կայարան և զնում: Թափահարումից վերեխայի գլխարկն աչքերն ե ընկնում, նա վոչինչ չի տեսնում, ամեն կերպ ուժ ե գործ զնում բարձրացնել զլխարկը, բայց չի կարողանում: Մայրը ուշադրություն չի դարձնում, վերջապես յերեխան արտասանում ե՝ «Ճամա Միա այու, այու» (այսինքն Միշան չի տեսնում):

Մեկ տարեկան մի ամսական 8 որական յերեխան՝ ցույց ե տալիս աչքերը, ատամները, բերանը, ականջները, քիթը, փորը:

Մեկ տարեկան 1 ամսական 19 որականը ցույց ե տալիս, թե ինչ ձայն և հանում ձին, կատուն:

Մեկ տարեկան 2 ամսականը՝ մատներով ծածկում ե աչքերը, յերր ինդրում են, թե փակիր աչքերը:

Մեկ տարեկան, 3 ամսականը լուսանկարի մեջ ճանաչում ե իր պապիկի նկարը:

Մեկ տարեկան 4 ամսական, 9 որական յերեխան «Նկարներ փոքրերին» և «Լուս փոքրերին» խաղի նկարներից ճանաչում ե 14 առարկաներ:

Այդ հասակում յերեխաները սիրում են և կարող են հանձնարարություններ կատարել՝ վորե բան բերել մեկն ու մեկին կանչել, մի բան վորե և մեկին հանձնել: Յերեխաներին ոգտակար և հանձնարություններ անել մի կողմից, վորպեսզի յերեխայի մեջ զարգացնել խոսելը, մյուս կողմից ել ուրախություն պատճառել՝ զետակցելով իր ոգտակարությունը:

Վորպեսզի զարգանա նրա խոսքը և զիտակցությունը, յերեխային պետք ե ծանոթացնել նոր առարկաների անունները՝ տալով ավելի շատ տպավորություններ, ցույց տալ յերեխային ձիուն, կովին, արամագյու, ավտոմոբիլը և այլն:

Մեկ և կես տարեկան յերեխայի խաղի մեջ նկատելի յե տեխնիկական ունակություն, նա 4-6 կորիկներից կարողանում է աշտակ շինել: Խաղի մեջ նա արտահայտում ե իր կյանքի փորձը—ցույց ե տալիս իրեր թե զատարկ ամանից զուր և թափում. տիկնիկին կերակրում ե, պարկացնում ե քնելու, ծածկում և որորում ե:

Ծնողները պետք ե իմանան, վոր յերեխաները այդ հասակում ընդունում են այն ամենը, ինչ վոր կատարվում ե նրանց շրջապատում և ընդորինակում են մեծերի արարմունքների համար, հայնոյանք, կորիկ այլ արարմունքներ տեղի չպիտի չափում:

Հիշելով այդ ծնողները իրենց իրենց փաշել գլխի վրայի իրենց իրենց փաշել: Դա նշան ե յերեխայի զգալի զարգացմանը: Յերեխան սովորում ե դիմել զանազան գործիքների ովնության, այնտեղ ուր նրա ձեռքը չի հասնում:

Նենա այնպիսի խաղալիքներ, վորոնք հնարավորություն կտան նրան վարժելու իր շարժումները. որինակ տուփերը և արկղները թել կապտաչ քաշելու համար, ավտոմարիլը, գնդակը, սահնակը: Հարկավոր են այնպիսի խաղալիքներ, վորոնց հետ խաղալիս նա կարողանա նմանվել մեծերի գործողություններին.—արջիկ, տիկնիկի, կողով, պայուսակ, գավաթ, գուալ: Յերեխալի տեսնիկան ունակությունները և կարողությունը զարգացնելու, այլ և գույների, ձեւը մեծության հետ ծանոթացնելու համար հարկավոր և տալ նրան զանազան փակվող տուփեր, աշտարակներ, («Պիրամիդիլա կոչված խաղալիք») աղյուսներ, վոչ մի գեղքում մի անդամից այս խուլալիքները յերեխալիք ձեռքը չի կարելի տալ Յերեխայից պետք և վերցնել այն խաղալիքները, վորոնք կամ ձանձարուն են նրան կամ հարմար չեն նրա հասակին: Խաղալիքները պետք ե իրենց վորոշակի տեղու ունենան արկղներում կամ դարակի վրա:

Պետք ե այնպես անել, վոր խաղալուց հետո յերեխան ինքը կամ մեծերի ոգնությամբ խաղալիքները հալաքի և իր տեղը դնի:

Յերեխալիքի ինքննությունը ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեկ և կես տաշեկանում յերեխան կարողանում ե բանել գոյալը և ուտել վոչ միայն շիլան (կիսաշրալի կերակուրը հեշտ և տանել մինչ չեվ բերանը) այլ և ջրալի կերակուրը—սուլու, կիսելը: Յերեխան ինքն ե նստում իր աթոռի վրա, յեթե աթոռը բարձր չե, կարիք չկա նստացնելու, այլ թույլ տալ վոր ինքը բարձրանա նստի:



Նկար 23. Մի տարեկան յերեխան նստել ե ինքնուրուց և շիլա և ուտում:

Յերեխան արդեն փորձում ե ինքը լվացվելու, վոտքի տակ նստարան ե դնում և ինքն ե լվանում ձեռքերը, քիթը: Ծնողները պետք ե հոգան յերեխայի համար պատրաստեն հարմար հենարան լվացարանին կից, կամ ցածր նստարանի վրա թաս (լազան) դնեն: Պետք ե կախարանը ցածր տեղ խփել և վրան կարծր սրբիչ կախել:

Լավ կլինի, վոր յերեխաները ձըմեռը սեւյակի ջրով լվացվեն և վոչ անմիջապես ջրմաւդուց, վորպեսզի

յերեխաները չխուսափեն լվացվելուց:

Մեկ և կես տարեկանում յերեխան կարող ե հանել իր կոշիկները, յեթե կաղերը բացված են, գուլպաները, գլխարկը:

Մեկ և կես տարեկանում կարող ե ինքը բարձրանալ իր մահակալի վրա:

Բայց այս բոլորը յերեխան կատարում ե միայն այն ժամանակ՝ յեթե նրան համապատասխան կերպով են գաստիարակում:

Անհրաժեշտ ե հարգել յերեխայի ինքնուրույնությունը: Կարիք չկա գրիել նրան, նստացնել, կերակրել, այլ հսարավորություն տալ վոր ինքը նստի, ինքն ուտի, ինքը հանվի:

Զափաղանց կարեոր ե, վոր յերեխան ապրի հանգիստ շրջապա-

տում, վոր նրա հետ ապրող մարդիկ չհայնոյեն միմյանց և յերեխային:

Պաւեր.—Յերեխայի զարգացող ջղային սիստեմը, պետք ե ունենա բավականաչափ հանգիստ, այսինքն նա բավականաչափ պիտի քնի, 2 անգամ ցերեկը և 11 ժամ գիշերը:

Մեկից մինչև  $1\frac{1}{2}$  տարեկան հասակ ունեցող յերեխայի որվա կարգ ու կանոնը մոտավորապես հետևյալը պիտի լինի:

Առավոտյան ժամը 6-ին կամ 7-ին ուտում ե, ապա ուտում և ժամը  $9\frac{1}{2}$ -ին,  $12\frac{1}{2}$ -ին և  $7\frac{1}{2}$ -ին: Քնում ե ժամը  $9\frac{1}{2}$ -ից մինչև  $12\frac{1}{2}$ -ը, ապա  $3\frac{1}{2}$ -ից մինչև ժամը 5-ը մաքուր ոդում ե լինում: Յերեկոյան ժամը 8 ից մինչև առավոտյան ժամը 7-ը քնում ե:

Միզամանի վրա նստացնել քնելուց առաջ և քնելուց հետո, 1 անգամ եր արթուն ժամանակ: Վորքան յերկար քնի յերեխան ցերեկը 2 անգամ, այնքան նա հանգիստ և առուղջ կլինի: Վորպեսզի չխանգարենք ցերեկը 2 անգամ քնելուն, յերեխային միշտ պիտի քնացնել վորոշ ժամին և վոչ մի գեղքում չխանգարել այդ ոեժիմը: Բավական միշտ 2 որ ցերեկը չքնացնել յերեխային հետեւյալ որն արգեն դըժ վարությամբ կընացնեք: Շատ յերեխաներ 4 ամսականից մի տարեկանը ցերեկը արգեն մի անգամ են քնում: Անցման այդ շրջանում պետք ե աշխատել, վոր յերեխան ցերեկը ժամը 11-ից ուշ չքնի և քնի 3 ժամ, իսկ յերեկոյան քնացնել ժամը 7-ից, այնպիս վոր արթուն մալը տեսի 4 ժամից վոչ ավելի:

ՊԵՏՔ Ե ԱՐԳԵԼՈՒ ՅԵՐԵԽԱԾԻՆ ԱՐԳԵԼԵԼ ՎՈՐԵՎԸ ԲԱՆ.—ՊԵՏՔ ե արդյոք յերեխային թույլ տալ անելու այն, ինչ վոր ինքն ե ուղում, և պիտի ե, նա հասկանա, վոր կամ արգելված բաներ, վոր չի կարելի անել: Այս հարցերն առաջ են գալիս այն ժամանակ, յերբ յերեխան սկսում և ման գալ, մազլցել սեղանի, աթոսի վրա:

Այդ հասակում ըոլոր իրերն այնքան ուժեղ հետաքրքրում են նըրան, վոր ուղում և վոչ միայն նայել ու շշափել ամնն ինչ, այլ և ինքն ե ուղում ամեն ինչ անել: Բայց նա դեռ չի հասկանում թե ինչը իր ուղը կպատի և ինչն ե իր ուժերից վեր, ինչն ե իր համար վնասակար և վտանգավոր այլ և վնասակար բոլորի համար: Բայտ հնարավորության յերեխայի կյանքը այնպիս պիտք ե դասավորել, վոր արգելված բաներ վորքան կարելի յերեկոյին նրա համար, վոր նրա ձեռքը չընկնի վտանգավոր առարկաներ և կարեոր իրեկ: Ընտանիքում կենցաղն այնպես պիտի կազմակերպել, վոր յերեխան չվասպի պրիմուսից, չայրվի վատարանից և այլն: Անոգուտ և շարունակ յերեխայի վրա բացվելը, թե այս մի ձեռք առուր, այն մի անդերի խելաց կապտան համառությունը պիրե ե բան և մեծերի խելաց կապտան կարծրիքով չի կարելի տալ այն դեպքում յերեխայի ուշադրությունը պիտք ե զբավել խաղալիքներով կամ խոսակցությամբ, յերեխան շատ շտով մոռանում ե այն, ինչ վոր համառորեն ուղում եր: Յեկ շիացն ծայրահեղ դեպքում կարելի յե ասել «չի կարելի»: Յերբ ամեն միայն ծայրահեղ դեպքում կարելի յե ասել «չի կարելի»: Յերբ ամեն ինչ արգելում եք յերեխային, նա դառնում և անկամ և յերկշոտ, զրկվում և յեռանդից, սեղծագործելուց, իսկ այդ բոլորը կասեցնում են նրա զարգացումը:

Այս դեպքում, յերբ յերեխայի այս կամ այն քայլը առաջ կբերի վտանգ իր կամ շրջապատի համար, այդ դեպքում «չի կարելի» խոսքը

պետք ե արտասահնել հաստատուն, լուրջ տոնով, առանց զիջողության-  
Այդ գեպըում մեծերը ամեն միջոց պիտի գործ դնեն, վոր յերեխան  
հնարավորություն ունենա կատարելու այն, ինչ վոր արգելված չե-  
նման գեպըում, պետք ե հեռացնել այս կամ այն իրը, տեղափոխել  
յերեխային, կամ դուրս տանել յերեխային սենյակից, միևնույն ժա-  
մանակ դրաղեցնել նրան:

Յերեխան յերը լավ ե հասկանում, այն գեպըում պետք ե բացա-  
տրել, ինչու չի կարելի: Կարեռ հանգամանք ե և այն, վոր բոլոր  
մեծերը միատեսակ վերաբերվեն արգելված բանին, այնպես չինի,  
վոր այն ինչ արգելում ե հայրը, մայրը թույլ տա:

Վորպեսզի յերեխաները մանկությունից մեծ հավատով և հարգան-  
քով վերաբերվեն մեծերին, անհրաժեշտ ե վոր մեծերը յերեխային  
ձեռք չառնեն, չծաղրեն և չխաբեն:

Յեթե յերեխային մի վորե և անդուրեկան բան և սպասում՝  
յերբեք չպիտի խարել նրան: Անհրաժեշտության գեպըում ավելի  
լավ ե թեթև ուժ գործ դնել, միայն արագ և ճարպկորեն կատարել-  
իսկ հետո խրախուսել յերեխային, գովել նրա արիությունը. որինակ  
յերը նրան լուծողական, ձկան յուղ պիտի տալ, բժշկին ցույց տալու,  
կոկորդը նայելու գեպըում:

Այնտեղ, ուր շրջապատն այս միջոցառումները արագ և ճարպկորեն  
ե կատարում, ուր վոչ վոք ամ ու վախ չի անում և միանգամայն  
ավելորդ «խղճահարություն» չի ցույց տալիս, այնտեղ յերեխաները  
հեշտությամբ ընտելանում են անդուր ընդունելության, մինչեւ ան-  
գամ կոկորդը ցույց տալուն:

## 9. ՅԵՐԵԽԱՆ ՄԵԿ ՈՒ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԵԿԱՆԸ

Հարժումները.—Յերեխայի շարժումները հեղահետե շարունակում են  
կատարելագործվել, նա սկսում է զեկավարել իր շարժումները: Նրա  
քայլվածքը գանդաղ ե: Յերկու վոտքը աստիճանների վրա դնելով  
նա բարձրանում և սանդուխիքներով, իսկ 2 տարեկանում՝ նա բարձրա-  
նում և աստիճաններով ինչպիս հարկն ե, դնելով նախ աջ վոտք, ապա  
ձախը: Յերկու և կես տարեկան հասակում նա կարող է բարձրանալ  
և իջնել աստիճաններով առանց բռնելու: Կարող է վազել թռչել  
աստիճաններից, կարող է անցնել որինակ փոքրիկ ջրափոսերից: Զե-  
գախենում գետնից մի փոքր բարձր տախտակների վրայից անցնել և  
ապա թռչել այնտեղից:

Կարող է մազլցել մարմամարզական սանդուխքներով, յեթե աս-  
տիճանների տարածությունը 20 սանտիմետր լայնությունից ա-  
վելիչե: Յերեխայի սիրած զբաղմունքն է վազել բլրակն ի վեր և  
այնտեղից վազելով իջնել:

Յերեխայի այս շարժունությունն անհանգստացնում է մեծերին,  
մանաժանդ նեղվածք բնակարաններում, բայց մեծերը պետք ե համ-  
բերությամբ վերաբերվեն և խոչնորոտ չհանդիսանան յերեխայի խա-  
ղին: Գիտք ե հիշել, վոր յերեխայի այդ հասակի համար՝ բազմազան  
շարժումներն անհրաժեշտ են:

Մեկու կես տարեկանում յերեխան կարող է բռնել մատիտը. 2½  
տարեկանում կոճկել կոճակները: Նա առանց թափելու գովալով լավ  
ուտում ե. յերեսը, վիզը, ականջները լավ լվանում է ու սրբում:

Յեծերը պետք ե համբերություն պահպանեն, յերը յերեխան այդ  
ժմամանակ դանդաղ և վոչ համոզված սովորում ե այդ բոլորին: Յեթե  
մեծերը համբերություն չունեն և շուտ վերջացնելու համար իրենք են  
սկսում հագցնել և լվանալ յերեխայի յերեսն, այն գեպըում յերեխան  
մի քանի տարի չի կարող սովորել, անել այն, ինչ վոր նա կարող եր  
անել Դա կասեցնում ե նրա հետազ զարգացումը:

Յեթե մենք առաջարկում ենք յերեխայի դաստիարակողներին հնա-  
րավորության չափ յերեխային ինքնուրությունություն տալ, այդ վոչ թե  
նրա համար, վոր նրանք ազատվեն յերեխայի խնամքից, այլ վորպեսզի  
յերեխան մեծերից կախում ունենալուց ազատվի, վատահ համոզված  
լինի իր վրա, ավելի արիանա: Դա առանձնապես անհրաժեշտ ե  
նրա անձնավորության հետազ զարգացման համար:

Խոսելի յել հասկանալը.—Յերկու տարեկանից յերեխայի խոսքը համե-  
մատարար զարգանում ե, տպավորությունների և շրջապատի ճանա-  
չելու պաշարը ավելանում ե: 1½ տարեկան յերեխան կարճ նախադա-  
սություններով կարող է խոսել: Որինակ 1 տարեկան 7 ամսական  
13 որական յերեխան ասում ե՝ «Արուսին տուր նիկի» (նկարները):  
1 տարեկան 8 ամսական 15 որական յերեխան, ճիշտ արտասահնում ե  
վերջավորությունները՝ «Պապին վավայ մուրճով» (պապին մուրճով  
ցավացը և իրեն): 1 տարեկան 8 ամսական 4 որականը հասկանում,  
ճիշտ ե գործադրում բայցի ժամանակը, «Մաման կառնի ձոր և կտա  
Արուսին» (մաման կառնի խնձոր և կտա Արուսին): Յերեխան հաշվում  
ե արգեն մինչև 3-ը, իսկ յերեքն մինչև 5-6: 1 տարեկան 9 ամսա-  
կան 16 որականն ասում ե:—«Յերկու, դար» (յերկու դարակ), 2 տա-  
րեկան 6 ամսականը՝ «Այստեղ՝ մեկ, յերկու յերեք վարագույր, իսկ  
մեր տանը՝ մեկ, յերկու» (Մոր հուշատերից).

Յերկու տարեկանում՝ իր անվան փոխարեն կարող է ասել «յես».  
1½ տարեկանում ցանկություն ե առաջանում նոր առարկաների անուն-  
ներն իմանալու: Սկսում ե հարցեր տալ: «Իսկ ինչ ե սու»:

Յերեք տարեկան յերեխան կարող է իմանալ վոչ միայն սենյակում  
շրջապատի բոլոր իրերը, այլ և բակի, փողոցի իրերը: Նա ծանոթ ե  
բնության յերևույթների հետ:

Գիտե՞ ձյունը, անձրեւ: Որինակ պատուհանից յերը տեսնում ե  
թաց կտուրը, զիտե վոր անձրեւ զալիս և չի կարող ման գալու  
գնալ, զիտե արեգակը, վորոտը: Բանջարեղիների, մըզերի, տնային  
կենդանիների անունները զիտե: Գիտե կարմիր, կանաչ, դեղին, կա-  
պույտ գույնները: Նա արգեն հասկանում է տարածությունը. փողոցում  
գտնում ե տան ճանապարհը:

Նկարներում պատկերած մարդկանց արհեստը, նշաններով ճանաչում  
ե բժիշկին, շոփերին, տան հոկիչին: Գիտե արամվայը, ավտոն, աերո-  
պլանը, զիրիթարը, բեռնակիրը: Գիտե թե ինչ ե նշանակում փակ  
բաշխիչը (կոռպերատիվ խանութը): Ամեն տեսակ հարցեր ե տալիս թե  
«Գրտեղ և ապրում ավտորուսը», «Ծաերը վորտեղ են քնում», «Ի՞նչու  
հավը ամեն տեսկակ վատ բան ե ուտում, իսկ Արուսին չի կարելի»:

Յերեխանների այս հարցերը անպատճախան չպիտի թողնել պետք  
ե աշխատել յերեխային տալ մատչելի, հասարակ, պարզ ճիշտ պատաս-  
խան:

Այս հասակից յերեխանները սիրում յեն, վորպեսզի իրենց համար

կարդան, պատմություններ անեն: Պատմածները կարող են շարունակ կրկնվել, բայց նրանք վոչ միայն չեն կորցնում իրենց հետաքրքրությունը յերեխայի համար, այլ ուժեղացնում են պատմածն այն տեսակետից, վոր նա մասնակցում են նրա շարահյուսությանը, սովորելով նախադասության ու բառերի վերջավորությանը:

Պատմածները կարող են լինել յերեխայի իր կյանքից, այն մասին, թե նա ինչ ե տեսել և արել: Լավ կլինի, յեթե պատմածի մեջ թվենք մի շարք իրեր: Որինակ՝ յերեխային դուր ե գալիս պատմել այն մասին, թե նա ինչպես ե գնացել բեռնակրով, տրամվայով, ինչ ե տեսել: Մանկան հետաքրքրությունը բավարարում են «Լեսենկա» Ե. Շաբադի (հրատար. 1933 թ.) «Ստատո» Փետերչենկոյի պատմվածքները:

Յերկու տարեկանից հետո յերեխան մեծ հետաքրքրություն ե ցույց տալիս տեխնիկական հարմարություններին.—ծորակին, միս աղալու մեքենային, կարի մեքենային, ապա տրամվային, բեռնակիրին, աերոպլանին: Դրա հետ միասին նա մեծ ուշադրություն ե դարձնում մանրամասնությունների վրա. անիվի ձեզին, տրամվայի վաղելուն:



Նկար 24. Հետեւում են մեծերի աշխատանքին:

Խաղը.- Մազցելը, վազելը, կահկարասիքը դես ու դեն տանելը և այլ շարժումները յերեխայի կյանքում մեծ տեղ են զրավում, բայց 2 տարեկանից սկսած՝ խաղը ընդորինակելու բնույթի տեսակետից պես բարդանում է: Նա հետևում է մեծերի աշխատանքին,—թասի մեջ լողացնում ե արջիկին, կամ տիկնիկին (Նկար 24), պատկերացնում ե գետնախնձորը բեռնակրից սրահում թափելը, նստարանի վրա նստած՝ պատկերացնում ե շոփերին:

Սիրում ե նմանվել կենդանիներին, մեքենաներին:

Այդ հասակում, յերեխայի խաղի համար անհրաժեշտ ե մուրճ (փայտից), մեխեր և մի կտոր բարակ տախտակ:

Յերեխան այդ հասակում առանձնապես սիրով զբաղվում ե ավագի և ջրի հետ: Խաղալով այդ առարկաների հետ՝ յերեխան ծանոթանում ե նրանց հատկության հետ: Իմանում, և վոր վորոշ առարկաներ ջրի վրա լող են տալիս, իսկ առարկաներ ել կան, վոր սուզվում են ջրի մեջ, վոր թացացրած ավաղով կարելի ե ծեփել և այն: Գրավելով այդ խաղերով յերեխան գործում ե ինքնուրույն, մտածելով մի յեղակցության ե գալիս և սովորում ե ինքնուրույնության:

Զրի հետ խաղալը շատ ոգտակար ե յերեխաների համար, միայն մեծերը հնարավորություն պիտի տան յերեխաներին խաղալու ջրի հետ վորքան ուզում են, միջոցներ պետք ե ձեռք առնել, վոր նրանք թրջվեն.—թեվերը վեր քաշել, գոզոց կամ կրծկալ հագցնել հարշար թասի մեջ ջուր լցնել, տալ բարակ տախտակիկներ, քարեր, տիկիմիկ, նավակ ու թող խաղան (Նկար 25.)



Նկար 25. Զրի հետ խաղալը:

Զրի և ավագի հետ խաղալով յերեխաները հետզհետե ձեռք են բերում ունակություն, վոր անհրաժեշտ ե նրանց խկական աշխատանքի համար: Յերեխաներն այդ հասակում առանձնապես սիրում յեն աղյուսներից կառուցել, ծնողները սկզբում պետք ե ոգնեն նրանց:

Յերեխաների հասարակությունը.—Յերեխաների մեջ  $\frac{1}{2}$  տարեկանից սկսած ցանկություն ե առաջանում այլ յերեխաների հետ խաղալու: Յերեխաների հասարակության մեջ գտնվելը (ավելի լավ կազմակերպված կոլլեկտիվում՝ մսուրներում, հրապարակներում, խմբակային զբոսանքներում) դաստիարակչական մեծ նշանակություն ունի: Յերեխան այստեղ սովորում ե իր շահերը համաձայնեցնել այլ յերեխաների շահերի հետ, որինակ նա հասկանում ե, վոր յերբ մյուս յե-

բեխաները քնած են չի կարելի աղմկել, վոր ուտելուց միշտ ինքը չպիտի առաջինը ստանա բաժինը, վոր լավ խաղալիքները պետք ե բաժանի ընկերների հետ: Հասարակական դաստիարակության այս բարեհաջող ազդեցությունն առանձնապես աչքի յե ընկնում այն յերեխաների նկատմամբ, վորոնք տանը ճիշտ չեն դաստիարակվում:

Կոլեկտիվը սովորեցնում ե յերեխաներին ինքնապաշտպանության, պաշպանել իր տեսակետը, ընդիմադրել: Կոլեկտիվը սովորեցնում ե յերեխաներին ոգնել միմիանց, սովորում ե հասկանալ, վոր նա մենակ չի կարող անել այն, ինչ կարելի ե անել միասին: Վերջապես մեկը մյուսից ընդորինակելով՝ յերեխաները հեշտությամբ են փորձառություն ձեռք բերում, շուտ են սովորում ուտելը, լվացվելը և այլն:


Բայց մեծերը պիտի հոգան, վոր յերեխաների կոլեկտիվը նպատակահամար ձևով կազմվի, այսինքն, ավելի մեծ և ուժեղ յերեխաները չմեռցնեն փոքրերի, թույլերի ինքնուրույնությունը և նախաձեռնությունը: Յեթե յերեխան գտնվում ե ավելի թույլ կոլեկտիվում, քան ինքնե, ապա նրա մեջ կարող ե դարձանալ ինքնավատահություն, ուրիշներին նեղացնելու հակում:

Մատնանշելով կոլեկտիվի բոլոր դրական կողմերը և գոնելով, վոր յերեխան իր ժամանակի մեծ մասը այնտեղ պետք ե անց կացնի՝ մենք անհրաժեշտ ենք գտնում, վոր յերեխան ընդունակ պիտի լինի և մենակ խաղալու ու զբաղվելու: Յերեխայի մեջ կենտրոնանալու ընդունակությունը զարգացնելու համար՝ դա անհրաժեշտ ե:

Առողջ և ամուր փոխարինողներ դաստիարակելու գործը՝ լուրջ խնդիր ե: Վորպեսզի ճիշտ դաստիարակեն յերեխային, ծնողները պետք ե իմանան, թե ինչպես ենա զարգանում, կարողանան հասկանալ նրա պահանջները, միշտ պետք ե կարողանալ զսպել իրեն, չղղայնանալ, միշտ մտածել այն մասին, թե ինչպես զարվել յերեխայի հետ, և ինչպես կանդրագառնա նրա վրա ձեր այս կամ այն քայլը:

Յեթե ծնողները բավարար չափով չեն խորանում յերեխայի պահանջների մեջ, ապա յերեխայի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել չեն կարող: Չեն կարող պատասխանել նրա հարցումներին, ցույց տալ նրան նոր բան, պատմել, բացատրել այն, ինչ վոր նրան հետաքրքրում ե: Յեթե յերեխան ապրում ե այնպիսի պայմաններում, ուր ամեն ինչ հարմարեցը ած ե միայն մեծ մարդկանց համար, ուր չկան առարկաներ, իրեր վորոնց հետ նա կարող ե վարվել, խաղալ ըստ իր հայեցողության, յեթե նա յերեխաների հասարակությունից զրկված ե՝ ապա յերեխան անխուսափելիորեն ջղային, կամակոր և համառ ե դառնում:

Սենյակում յերեխայի համար անհրաժեշտ ե մի տնկուն հատկացնել, հավաքել այնտեղ նրա բոլոր իրերը, վորոնց հետ նա կարող ե խաղալ: Խաղալիքների համար փոքրիկ պահարան և զարակ ե հարկավոր. յերեխան իր առանձին սեղանը և աթոռը պիտի ունենա, կախարան՝ սրբիչ և կրծկակալի համար: Այս բոլոր առարկաները պետք ե հարմարեցված լինեն յերեխայի հասակին: Պահարանում կամ դարակի վրա պետք ե զարսել թուղթը, մատիտը, մուրճը, փոքրիկ մեխեր, կառուցումների համար աղյուսներ՝ արկղների մեջ: Աղյուսները շատ փոքր չպիտի լինեն և վոչ ել զանազան ձեվերի, կարող ե և սովորական աղյուս լինել:



Նկար 26. Յերեխայի անկյունը:

Յերեխան իր անկյունն ունենալով՝ միշտ վորեն խաղով կզբաղվի, ակտիվ կլինի և մեծերին չի նեղացնի (Նկար 26):

Մեծերի վերաբերմունքը.—Ծնողները յերեխաների ներկայությամբ շատ լուրջ պետք ե լինեն իրենց վարքի մեջ:

1. Զի կարելի յերեխայի ներկայությամբ դյուրագրդիո, բորբոքված լինել. յերեխան ընդորինակելով ակամայից ինքն ել այլպի՛սին և դառնում:

2. Յերեխային չի կարելի ստել և խարել, նա յել կարող ե նույն անել, ապա կորցնում ե իր հավատը դեպի մեծերը, ջղային և լարված և դառնում:

3. Յերեխային չի կարելի հայոյել. դա չարացնում ե նրան, տրամադրում ե նրան ծնողների դեմ կամ վախեցնում ու ընկնում ե նրան:

4. Յերեխային չի կարելի վախեցնել, դա նրան ընկնում ե յերկչուու ու ջղային և գարձնում:

5. Յերեխային վոչ մի դեպքում չի կարելի ծեծել, անգամ թեկուզ թեթև հարգած տալ վորովնետ դա խոր կերպով վիրավորում ե յերեխային, ընկնում ե նրան, իսկ յերբեմն ընդհակառակը չարացնում, համառ և կռվարար և գարձնում:

6. Մյուս կողմից ել չի կարելի շարունակ հաճոյանալ յերեխային՝ քընքացնել նրան անվերջ շոյանքներով:

Քնքացած յերեխան չի հարմարվում կյանքին, քմահաճ և լինում, չափից ավելի պահանջկու դեպի ծնողները և շղապատը:

Յերկուսից յերեք տարեկան հասակ ունեցող յերեխաների ծնողները կրնուցումների համար աղյուսներ՝ արկղների մեջ: Աղյուսները շատ փոքր չպիտի լինեն և վոչ ել զանազան ձեվերի, կարող ե և սովորական աղյուս լինել:

**ԽՍՀ ՊԻՏԻ ԱՆԵԼ, ՎՈՐ ՅԵՐԵԽԱՅՆ ԿԱՄԱԿՈՐ ԶԼԻՆԻ**  
Վերիշելով այն ամենը, ինչ վոր մենք ասացինք յերեխայի մա-

սին՝ մենք գտնում ենք, վոր յերեխան հանդիսատ, նորմալ տրամադրություն ունենա, դրա համար անհրաժեշտ է հետևյալը:

1. Յերեխան ցերեկը պետք է հանդստանա 2-2 $\frac{1}{2}$  ժամ և յերեկոյան պարկի ֆնելու վոչ ուշ 8-8 $\frac{1}{2}$  ժամին:

2. Ընտանիքում պետք է հանդիսատ, նորմալ տրամադրություն չինի, յերեխայի ներկայությամբ վոչ վոր չկռվի, նրա հետ վրովված տոնով չխոսեն:

3. Անհրաժեշտ ե, վոր յերեխան ունենա իր առարկաները խաղալու և զբաղմունքի համար:


4. Յերեխայի հետ անհրաժեշտ ե պարապել, բավարարել նրա գիտության ծառավը. բայց մինուն ժամանակ չոգնեցնել և չըծանրաբեռնել նրան: Հաճախակի հյուրը զնալը անթույլատրելի յե, բոլորովին չի կարելի յերեխային վաղ հասակում կինո տանել, յերկար ժամանակ ման ածել կենդանաբանական այգում և այլն:

5. Անհրաժեշտ ե, վոր յերեխան ունենա փոքրիկ, իր ուժի չափ պարտականություն, ուր նա կարողանա յերեան բերել իր ինքնուրությունը: Ընտեսության գծով ոգնելը, ինքն իրեն ծառայություն մատուցելը դարձնում են յերեխային առույգ և ուրախ (Նկար 27):

6. Յերեխայից պետք ե պահանջել այն, ինչ վոր նա կարող ե կատարել և այն ել պիտի պահանջել հանդիսատ տոնով:

7. Պետք ե ուշադիր լինել յերեխայի կարիքներին, հետեւ վոր յերեխայի շորերը կարգին լինեն, վոչ մի բան չձգի, չճնշի, չսեղմի, չխանդարի նրան:

Այն բոլոր առարկաները, վորոնք առնչություն ունեն յերեխայի հետ և նրան շրջապատող կահավորությունը կարդ ու սարգին պահի: Շրջապատի անկարգությունը յերեխայի մեջ առաջացնում ե անհանդիսատ տրամադրություն:



Նկար 27. 21/2 տարեկան յերեխան ոգնում ե մորը ամենորյա սենյակ հավաքելուն:

Յեթե յերեխայի գըրգովելու պատճառը վերացված ե, կամ առաջարակ պատճառ գոյություն չունի, բայց յերեխան չի կարողանում հանդստանալ թափալում և հատակին, բղավում ե, ապա ամենալավ միջոցն այն կլինի, վոր ուշադրությունը չդարձնեն նրա բղավոցի վրա, աշխատեն գրավել նրա ուշադրությունը, ուրախ տոնով առաջարկել վորեւ հետաքրքրական բան տալ նրան, դուրեկան հանձնարարություն, բարձրացնել նրա տրամադրությունը, առողջությունը ներշնչել նրան, և յերեխային հետո չհիշեցնել, վոր վատ բան արավի: Գրգոված յերեխային:

վոչ մի գեպքում չի կարելի հայհոյել, ասել վոր նա շանպիտան եւ: Մեծերը միշտ պետք ե իրենց զսպված և հանգիստ պահեն:

Տննական ուները յեկենաց նեանակուրյանը. — Անհրաժեշտ է յերենին փոխել յերեխայի տառյա կյանքը, հարկավոր ե, վոր երեխան իր տոներն ունենա: Այդ հատուկ որերը յերեխայի տրամադրության համար այնպիսի բարձր ուրախության բոպեներ են ստեղծում, վորոնք յերկար ժամանակ մնում են յերեխայի հիշողության մեջ վորպես կյանքի ետապներ:

Ճնկերի համար պատրաստվելու և ամրող նախատոնական հոգմը, յեթե այդ բոլորը կազմակերպված ե այնպես, վոր չի հոգնեցնում յերեխային և չի խանգարում որվա սովորական ըեժիմը, մեծ նշանակություն ունի յերեխայի համար, նա դառնում ե առույգ և ուախ, զարգանում ե նրա հիշողությունը:

Այդպիսի տոներ կարող են լինել նրա ծննդյան օրը, կենդանաբանական այգին գնալը, ուր յերեխային ցույց են տալիս շատ սահմանափակ թվով վոչ ավելի քան 5 կենդանի, տրամվայով կամ ձիով գնալը, քաղաքից դուրս գնալ ման գալը:

Բացի այդ արտասովոր և տոնական գեղքերից, յերեխային պետք ե հետաքրքրել և իր շրջապատի կյանքով: Պետք ե ցույց տալ և բացատրել աշխատանքի տարբեր տեսակները: Ցույց տալ, թե ինչպես ե կարգի բերում մայրը սենյակները, ինչպես են շինում տունը, ելեկտրականությունը ինչպես են անցկացնում, կամ կարասիքն ինչպես են կարկատում և այլն: Այդ բոլորի ցույց տալը պետք ե կապել առողջ, սիրալիք վերաբերմունքի հետ դպիկ այն մարդկանց, վորոնք աշխատում են, և բացասական, թշնամական վերաբերմունք դեպի նրանց, ովքեր չեն աշխատում:

Յերեխաները շատ լավ են հասկանում աշխատանքի կարեռությունը նրա համար, վոր իրենք շատ սիրով են աշխատում:

Յերեխայի աչքի առաջ կատարվող աշխատանքը ցույց տալուց բացի՝ նրան ցույց պետք ե տալ նաև համապատասխան նկարներ: Յերեխաներին հետաքրքրում ե աշխատանքային այն յեղանակները, վոր ծնողները կատարում են տանը:

Քաղաքի յերեխաներին քաղաքից դուրս զբոսանքի պետք ե տանել: Բացի առողջապահական տեսակետից՝ յերեխաները մատչելի տապավորություններ են ստանում և գաղափար են կազմում դաշտային, բանջարանոցի աշխատանքի մասին ավելի լայնանում ե նրանց մտահորիզոնը և հարգանքը՝ գեպի աշխատանքը:

Յերեխաներին պետք ե հասկացնել կարմիր թանակի նշանակության մասին, գաղափար տալ կարմիր բանակայիշների մասին, ծանթացնել միլիցիոների աշխատանքի նշանակության հետ, վորոնց յերեխաներն ամեն որ տեսնում են քաղաքի փողոցներում:

Միանգամայն անհրաժեշտ ե, վոր յերեխաները մասնակցեն հասարակական և հեղափոխական տոներին — Մայիսյան, Հոկտեմբերյան տոներին, վոր նրանք տեսնեն, թե ինչպես են պատրաստվում տոներին և իրենց ուժերի ներածին չափ մասնակցություն ունենան: Ճնական որերին նրանք պետք ե դիտեն ցույցը, մոտակա շենքերի զարգանքը: Այդ որերը յերեխաներին պետք ե տալ փոքրիկ դրոշակիկ սեր, նշանակներ և այլն:

ինքնատինքյան հասկանալի յե, վոր հասարակական—հեղափոխական տոները՝ մատչելի կերպով պետք ե բացատրվեն յերեխաներին. Հնարավորության չտփ, յերեխային հատկացրած անկյունում, տոնին վերաբերվող «ցուցահանդես» պիտի կազմակերպել,—նկարներ, տեղակորել համապատասխան բովանդակության բացիկ նկարներ, առաջնորդների լուսանկարները և այլն. Ամենավաղ հասակից առիթ պիտի՝ տալ յերեխային հետաքրքրվելու վոչ միայն իր ընտանիքով, այլ և շրջապատի յերեվույթներով, առարկաներով և անձնավորություններով, վորոնք հասարակական նշանակություն ունեն:

Վ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս.—ինչպես և աճում և զարգանում յերեխան Եջ

1. Նորածին յերեխան և նրա առանձնահատկությունները . . . . .	8
2. Յերեխայի զարգացումը նրա կյանքի առաջին ամսում . . . . .	15
3. Յերեխան 2-ից մինչև 6 ամսականը . . . . .	15
4. Վեց ամսականից մինչև 1 տարեկան յերեխայի առանձնահատկությունները . . . . .	16
5. Մեկ տարեկանից մինչև 3 տարեկան յերեխայի զարգացումը 19 Յերկրորդ մաս.— Յերեխայի ինամքը մինչև 3 տարեկանը	19
1. Ինչպես պիտի պատրաստել սենյակը նորածին յերեխայի համար . . . . .	22
2. Յերեխայի մահճակալը . . . . .	23
3. Նորածին յերեխային խնամելու համար անհրաժեշտ առարկաները . . . . .	25
4. Յերեխայի հագուստը . . . . .	25
5. Ծծկեր յերեխայի խնամքը . . . . .	27
6. Մեծ հասակի յերեխաների հագուստը տարվա ցուրտ յեղանակներին զբոսնելիս . . . . .	35
7. Զբուաքային խմբակներ . . . . .	36
8. Մանկական հրապարակ . . . . .	40
Յերրորդ մաս.— կերպակրելու առաջարանությունը . . . . .	
1. Կրծքով կերպակրելը . . . . .	42
2. Խառը կերպակրումը . . . . .	46
3. Արհեստական կերպակրումը . . . . .	47
4. Լրացուցիչ սնունդ . . . . .	49
5. Մի տարեկանից մեծ յերեխային կերպակրելը . . . . .	51
6. Ինչու յե յերեխան վատ ուտում . . . . .	52

Զույսը մաս. — վաղ հասակի յերեխաների դաստի. 62  
արտկությունը

1. Ինչու պիտի վաղ հասակի յերեխաներին ճիշտ դաստիարակնել	54
2. Ինչ պիտի իմանան դաստիարակները յերեխայի վաղ հասակի մասին և ինչում պիտի կայանա նրաց դաստիարակությունը . . . . .	57
3. Շարժումների դարձացումը . . . . .	59
4. Ընթացում . . . . .	62
5. Քնի և կերակրելու ժամերի բաշխումը . . . . .	64
6. Յ-ից մինչև 6-7 ամսական յերեխան . . . . .	67
7. Յոթ. ամսեկանից մինչև 1 տարեկան յերեխան . . . . .	72
8. Յերեխան 1 տարեկանից մինչև $1\frac{1}{2}$ տարեկանը . . . . .	77
9. Յերեխան $1\frac{1}{2}$ -ից մինչև 3 տարեկանը . . . . .	82



Թարգմանեցին՝ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ յեկ Լ. ԳԱՆԻԵԼՅԱՆ

Խմբագիր Լ. ԳԱՆԻԵԼՅԱՆ

Տեխնիմբագիր Ա. ԱՐԵԱՆ

Istehsalata verilmiş 15/III-36. Capa imzalanmış 31/V-36. Cap listi  $5\frac{3}{4}$   
Kaçırız formatı  $62 \times 94 \frac{1}{16}$ . Bir cap li tönde g tmış hyrufat 40.100.  
Baş Mətbuat Mədiriliyi Myvəkkilliği № 1260. Azərnəşr № 93. Tiraz 2.200  
Sifariş № 215. Azərnəşr mətnəsində basıldı, 26-lar adəna  
„KitabSarayı“, Bərdə, Bayramyev küçəsi

Art № 98



2149